

ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ
(80-րդ տարի) Թիվ-4 (1710) ————— Ապրիլ 2026

Բովանդակություն



«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմության թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ <https://www.droshak.am>

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ



1 - Առաջնորդող

Լինել թուրքական կցորդ կամ տնօրինել սեփական ճակատագիրը (Էջ 1-2)

2 - Հայ Դատ

Անժեյա Հարությունյան

Պատմական հիշողության ոչնչացում:
Հայոց Յեղասպանության շարունակվող իրականությունը (Էջ 3-5)

Արմեն Մարուքյան

Հայոց ցեղասպանության ու հողքոստի գործերի քննությունը գերմանական ու իսրայելական դատարաններում.
Ս. Թեհիրյանի ու Էյխմանի գործերի համեմատական վերլուծություն (Էջ 6-10)

Արմեն Կարապետյան

Մորգենթաուից մինչև Մենենդես (Էջ 11-13)

Մարիամ Հովսեփյան

Բարենորոգումների ծրագիրն ազգային դիմագծի պահպանման երաշխիք (պոլսահայ պարբերականների հրապարակումների համաձայն) (1911-1915 թթ.) (Էջ 14-20)

Անի Մելքոնյան

Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը որպես քաղաքական գաղթոնքի և ազգային հիշողության վկայություն (Էջ 21-23)

2 - Հայ Դատ

Մարի Հովհաննիսյան

1992 թվականի ապրիլի 10-ի Մարադայի ոճրագործությունը (Էջ 24-28)

Արմինե Տիգրանյան

Մշակութային ցեղասպանությունը որպես Արցախի հայաթափման շարունակական փուլ. ինքնության հետքերի համակարգված ոչնչացումը (Էջ 29-36)

3 - Երիտասարդական

Մոլվես Ծիրանի (Հերկելեան)

Երիտասարդութիւնը մեր ներկան Է... (Էջ 37-39)

4 - Ընթերցումներ

Տիգրան Չանդոյան

«Դէպի կախաղան». վկայությունը որպես ազգային հիշողության կառուցման ակտ (Էջ 40-42)

5 - Գաղափարական

Վրէժ-Արմեն

Ուրիշները ի՞նչ կ'ըսեն Նահա՞նջ, սնանկութի՞ւն, թե՞ ճախողութիւն (Էջ 43-44)

Լինել թուրքական կցորդ կամ տնօրինել սեփական ճակատագիրը

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտով թվում էր, թե մարդկությունը պատմության աղբանոցն ուղարկեց համաշխարհային կայսերապետության ճգնաժամ վերջին խելագարին: Արյունահեղության հսկա բաղնիքում ֆաշիզմի ու ռասիզմի գաղափարախոսությանը զոհ գնացած մարդկանց թիվը, ներառյալ տարբեր տարածաշրջաններում բռնկված պատերազմների հետևանքով ծագած սովի ու համաճարակների զոհերը, հաշվվում է մինչև 80 միլիոն մարդ: Նյուրնբերգյան միջազգային դատավարությունը, Գերմանիայում, Ճապոնիայում, Իտալիայում, ինչպես և վերջիններիս դաշնակից այլ երկրներում ազգայնամոլական, ռասիստական ռեժիմների տապալումը կարծես թե գծեցին արդարության նոր դարաշրջան թևակոխելու սահմանագիծը: Նույն՝ 1945 թվականին հիմնադրվեց Միավորված ազգերի կազմակերպությունը, և պետությունների ու ազգերի միջև հարաբերությունների ու խնդիրների կարգավորման համար առաջ մղվեց միջազգային իրավունքը՝ համաշխարհային նոր կարգի պայմաններում: Հանրագումարի բերելով հետպատերազմյան 80 տարիների համաշխարհային պատմությունը՝ ակնհայտ է դառնում, սակայն, որ իրավունքի ուժն ու մարդասիրական սկզբունքները շարունակում են ստորադասվել ուժի իրավունքին, և ժողովուրդների ոչնչացման ճանապարհով նրանց «հիմնահարցերը լուծելու» քաղաքական մեխանիզմը մնում է կենսունակ: Նման պարագաներում ուղղակի համեմատությունները միշտ խոցելի են, այնուամենայնիվ, կարելի է այս առիթով գուցահեռներ տանել Հայոց ցեղասպանության և այսօր Գազայում տեղի ունեցող զանգվածային սպանությունների և բռնազաղթի միջև: Բայց, դժբախտաբար, ամենամոտ ու դիպուկ համեմատությունները հենց մեր շարունակվող կենսագրության մեջ են, քանի որ իր աշխարհաքաղաքական, պատմական խիստ փոքրացած միջավայրում անգամ հայության գոյությունը շարունակում է անհանդուրժելի մնալ թուրքադրեզանական հավակնոտ ծրագրերի ճանապարհին: Մյուս կողմից, ցեղասպանության հիմնադիր թուրքական-ռասիստական պետությունը, երբեք դատապարտման չարժանանալով, շարունակեց անպատիժ իրականացնել զանգվածային սպանուների, սպիտակ ցեղասպանության ճանապարհով պանթուրքական և պանթուրանական նպատակների հետապնդումը:

Որպես պետական միավոր իր ձևավորման շրջանից նույն այս քաղաքականությունը որդեգրեց նաև Թուրքիայի հովանավորյալ Ադրբեջանը:

Պատմական Արևելահայաստանից Նախիջևանին, Դաշտային ու Լեռնային Ղարաբաղին տիրանալուց հետո մի քանի տասնամյակի ընթացքում Ադրբեջանը գրեթե ամբողջովին հայաթափեց Նախիջևանը, իսկ նույն ծրագիրը Դաշտային Ղարաբաղում ավարտին



հասցրեց 1980-ականների վերջերին և 90-ականների սկզբին: Լեռնային Արցախի հայաթափումը կանխվեց ազգային ազատագրական պայքարի և Արցախի անկախացման շնորհիվ, սակայն տվյալ ծրագրի իրագործումն էլ հնարավոր դարձավ Հայաստանում արևմտաթուրքական դրածո իշխանության հաստատման ճանապարհով:

Արցախի հայաթափումը տեղի ունեցավ Թուրքիայի, Իսրայելի և Պակիստանի անմիջական մասնակցությամբ, ցեղասպանական նույն մեթոդների կիրառմամբ, որոնք որ գործադրվել էին անցած դարասկզբին՝ Հայոց մեծ եղեռնի ժամանակ: Հենց ներկա օրերին Արցախում հայկական հոգևոր ու մշակութային հուշարձանների ոչնչացման, Հայաստանից գրավված տարածքներում ադրբեջանական զորքի ամրապնդման, Բաքվում Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության անօրինական դատապարտման ճանապարհով Ադրբեջանը շարունակում է հայության գոյության դեմ ուղղված իր քաղաքականությունը: Այդ հեռահար և ծրագրավորված քաղաքականության դրսևորումներն են Հայաստանը Արևմտյան Ադրբեջան ներկայացնելու և այս ուղղությամբ Ադրբեջանում իրականացվող ամենօրյա քարոզչական ու այլ բնույթի աշխատանքները: Հայաստանի, որպես հայկական ինքնիշխան պետության ոչնչացման ծրագրի հաջորդ բաժինը զուգահեռաբար իրականացվում է Հայաստանի իշխանությունների կողմից, նույն Բաքվի ղեկավարության թելադրած գործողություններով: Հայկական ինքնության և պետական-ազգային հեռանկարի չեզոքացմանն են ուղղված Հայաստանի Սահմանադրության փոփոխության, հայ ավանդական եկեղեցին փաշինյանական իշխանությանը ենթարկելու, պատմական անցյալից ու ներկա Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող ամեն հայկականից հրաժարվելու ծրագրերը: Հայաստանի իշխանությունն արդեն իսկ հրաժարվել է ցեղասպանության և Հայ դատի հետապնդման պետական



ծրագրերից՝ տարբեր առիթներով, ըստ էության հայտարարելով, որ տեղի ունեցած ողբերգության մեղավորները հայերն են և արտաքին հրահրող ուժերը: Հայաստանի իշխանությունն ամեն ինչ արեց Ադրբեջանին և Թուրքիային ձերբազատելու համար երկու ցեղասպանական պատերազմներով ինքնորոշված Արցախի Հանրապետությունը ոչնչացնելու և հայ բնակչությանը զանգվածային տեղահանության ենթարկելու պատասխանատվությունից:

Մեր՝ ու ոչ միայն մեր, այցի առջև ընթացքի մեջ է թուրք-ադրբեջանական հայաջինջ ծրագիրը, որը սկիզբ է առել նույնիսկ ոչ թե 1915 թվականին և, ըստ էության, նույնիսկ ոչ 1894-96 թվականներին, այլ 19-րդ դարի առաջին կեսից: Հայությանն իր տնտեսական հիմնասյուներից զրկելու, իրավապես անպաշտպան դարձնելու, վայրենի քոչվորների վերաբնակեցման ճանապարհով ի վնաս հայության ժողովրդագրական կացությունը փոխելու քաղաքականությունը բնիկ ժողովրդին արմատախիլ անելու առաջին փուլն էր, որի շարունակությունը լինելու էին արդեն զանգվածային կոտորածներն ու տեղահանությունը: Հայաստանի այսօրվա իշխանությունը ներկայացնող տղետ թուրքամուկների համար անգամ պետք է ակնառու լինի, որ Հայոց ցեղասպանության թե՛ «խաղաղ» և թե՛ արյունալի փուլերն իրականացվել են ա) ոչ արտաքին ուժերի դավերի ու միջամտությունների հետևանքով, բ) ոչ հայ ժողովրդի ընթացողացումների պատճառով, այլ, ճիշտ հակառակը և գ) այս ծրագիրն ունեցել է շատ պարզ պատճառ՝ թուրքական խարխուլող կայսրությունը, ինչպես և բուն մետրոպոլիան փրկելու առաջնահերթ միջոցը նրա առաջնորդները համարել են պետությունը միատարր դարձնելու, ներքին խնդիրները սրով հանգուցալուծելու միջոցը:

Երկրորդ աշխարհամարտին հաջորդած նոր ժամանակներում Սփյուռքի ազգային ուժերի քաղաքական պայքարի թիրախներից մեկը եղել է Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչման և դատապարտման պահանջը: Այդ նույն քաղաքականությունն ազգային ուժերն անկախացումից հետո որդեգրեցին Հայաստանում: Այս գործընթացի գլխա-

վոր թիրախը սեփական անցյալի դատապարտման ճանապարհով Թուրքիայի հրաժարումը պետք է լինի քաղաքական խնդիրները կոտորածներով ու բնաջնջումներով լուծելու գաղափարաքաղաքական ռազմավարությունից, ինչպես որ Գերմանիան գառվեց ու հրաժարվեց իր ֆաշիստական անցյալից՝ վերջինիս դատապարտման և վնասի հատուցման ճանապարհով: Եթե հայ ժողովրդի մեջ գտնվում են այս քաղաքական նպատակը չըմբռնող կամ միտումնավոր խեղաթյուրող անձինք ու շրջանակներ, փոխարենը դրա իմաստը շատ լավ հասկանում են թյուրքական ժողովուրդների մեծ կայսերապետության մարմաջը փայփայող թուրքական իրարահաջորդ կառավարիչները: Հայաստանի ներկա իշխանությունների միջոցով Սփյուռքը Հայաստանից գատելու և ցեղասպանության փաստի ճանաչումից պետականորեն հրաժարվելու քաղաքականությունը մեռցնում է Թուրքիայի ամբողջականության դեմ ուղղված վտանգը և վերացնում մեծ երազանքների ճանապարհին ընկած հավանական խոչընդոտը:

Հիշենք, որ Թուրքիայի ներկայիս ղեկավարը, առանց երկինաստության, մի քանի անգամ սպառնացել է Հայաստանի ժողովրդին՝ անվանելով «մեր թրի մնացորդներ»: Նա ակնհայտորեն կանգնած է Ադրբեջանի թիկունքում և, առաջին համարով հանդես չգալով, վերջինիս հովանավորն ու գործակիցն է բոլոր հակահայ ծրագրերում: Մի քանի անգամ թուրք ղեկավարը հրապարակախոսներն հայտարարել է, որ իրենց ուժերով է Արցախն օկուպացվել: Ժամանակակից Թուրքիան որպես քաղաքական-գաղափարական համակարգ Սուլթանական ու երիտթուրքական պետության շարունակությունն է, որի շոշափուկներն այսօր ամենուր են՝ Հարավային Ամերիկայից սկսած՝ մինչև Եվրոպա, Բալկաններ, Աֆրիկա, Մերձավոր ու Կենտրոնական Ասիա: Կենտրոնական կամ Միջին Ասիայի հետ թյուրքական աշխարհի միավորմամբ կիրականանա համաթուրանականության ծրագիրը, որի առջև ճանապարհ հարթողներից մեկն էլ Նիկոլ Փաշինյանն է՝ Զանգեզուրի ռազմավարական գոտին զիջելու իր պատրաստականությամբ: Կասկած չկա. պատմական ու գլխավոր թշնամի Ռուսաստանի խոչընդոտը հաղթահարելու համար Թուրքիան, Ադրբեջանի հետ միասին, Կենտրոնական Ասիայի կողքին պետք է յուրացնի նաև Անդրկովկասը: Վերջին գործընթացում խաղաղությունն օրակարգում կլինի այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանի իշխանությունը հնազանդորեն կկատարի իրեն հանձնարարված առաջադրանքը: Ինչպես փաստեցին նաև ապրիլի 24-ի և նրան հաջորդող օրվա իրադարձությունները, Հայաստանի իշխանությունը պատրաստականորեն կատարում է իր դերը:

Պատմական դասերի հիման վրա, որքանով կկարողանա հայ ժողովուրդը սեփական ճակատագրի տնօրինումն իր ձեռքը վերցնել, ցույց կտան ամենամտակա շաքաթների իրադարձությունները: ■

Պատմական հիշողության ոչնչացում: Հայոց Ցեղասպանության շարունակվող իրականությունը

Անժելա Հարությունյան
Բանասեր, մանկավարժ


Ցեղասպանությունը մարդկության դեմ իրականացված ամենաձանձուր հանցագործություններից է, ծրագրված և կազմակերպված միտումնավոր գործողությունների շարք, որի նպատակն է **ոչնչացնել** որևէ **ազգային, ռասայական, կրոնական կամ էթնիկական խմբի**:

Մեզ՝ հայերիս համար, ցեղասպանությունը, որի կազմակերպված ձևով և պետական մակարդակով իրականացման սկիզբը համարվում է 1915 թ. ապրիլի 24-ը, պարզապես տեսություն չէ, այլ ապրած ողբերգական իրականություն, մեր պատմության ամենաարյունալի էջը:

Օսմանյան կայսրության իշխանությունների, հատկապես իշխող քաղաքական ուժի՝ Միություն և առաջադիմություն կուսիտեի (թուրք.՝ Committee of Union and Progress, CUP) ղեկավարությամբ իրագործված հրեշավոր գործողությունների հետևանքով շուրջ մեկուկես միլիոն հայեր տեղահանվեցին, խոշտանգվեցին, սպանվեցին, և փաստացի գրեթե ողջ արևմտահայությունը զրկվեց իր պատմական հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից:

Իսկ արդյո՞ք այսօր դադարել է հայերի հանդեպ գործադրվող Ցեղասպանությունը: Ո՛չ: 2020 թվականի Արցախյան պատերազմը դարձավ նոր ողբերգություն, կարելի է ասել, նոր ցեղասպանություն հայ ժողովրդի, մասնավորապես՝ արցախահայության հանդեպ: Արցախի դեմ Ադրբեջանի ձեռնարկած ռազմական ագրեսիան ավարտվեց հայկական կողմի ծանր պարտությամբ, հազարավոր զոհերով, ամիսներ տևող շրջափակմամբ, հայաթափմամբ, էթնիկ զտմամբ, Արցախի կորստով, պատմամշակութային ժառանգության շարունակական ոչնչացմամբ: Թվում էր, թե այսքանով ավարտվելու է չարիքի շղթան, բայց՝ ոչ: Չէ՛ որ Ցեղասպանությունը միայն ֆիզիկական բնաջնջում չէ, այլ ոչնչացում ժողովրդի ինքնության, մշակույթի, պատմական հիշողության, այսինքն՝ այն ամենի, ինչը հային հայ պահեց անգամ Ցեղասպանությունից հետո: Հենց այս արժեքների ոչնչացումն է շարունակվում այսօր: Քանի որ մեր թշնամին հասկացավ, որ բավարար չէ հային ֆիզիկապես վերացնելը: Հային իսպառ ոչնչացնելու համար պիտի ոչնչացնի հենց այն ամենը, ինչը հային հայ է պահում: Իսկ ողբերգականն էլ այն է, որ այդ գիտակցումը այսօր որդեգրվել և իրագործվում է ոչ միայն թշնամական, այլև հենց հայոց իշխանության թողովությամբ ու ղեկավարությամբ:

Պատերազմի նախօրյակին հնչած հայտարարությունները, ինչպես «Արցախը Հայաստան է և վերջ», հետագայում ցավալի հակասության մեջ հայտնվեցին իրականության հետ: Իսկ այս ցավն առավել խորա-



ցավ, երբ հետպատերազմյան շրջանում սկսեցին հնչել հայկական պատմական և մշակութային արժեքները կասկածի տակ դնող հայտարարություններ՝ Շուշիի հայկական լինելը, Արցախը Ադրբեջանի կազմում ճանաչելը, որոնք ոչ այլ ինչ են, քան հրաժարում պատմական իրավունքներից և հիշողությունից: Այս գործընթացները չեն սահմանափակվում միայն քաղաքական հայտարարություններով: Դրանք արտահայտվում են նաև մշակութային և կրթական ոլորտներում՝

- ✓ ազգային խորհրդանիշների անտեսում և արժեզրկում,
- ✓ պատմական թեմաների վերանայում,
- ✓ կրթական ծրագրերում հերոսների դերի, մշակութային արժեքների նվազեցում,
- ✓ ազգային հիշողության թուլացում,
- ✓ հոգևորականության դեմ նախաձեռնված քաղաքական ճնշումներ,
- ✓ հայ ժողովրդի հավատքի, ինքնության և պայքարի խորհրդանիշը հանդիսացող Արարատ լեռան ինչպես նաև «Արցախ» անվան կիրառման սահմանափակում և դուրսմղման փորձ հանրային խոսույթից:

Թվարկածների շարքում առավել սուր է ընկալվում միջազգային հարթակներում Հայոց Ցեղասպանության ուրացումը, վերջինիս ճանաչման և պահանջատիրության խոչընդոտումը:



Պատմությունը փաստում է հստակ օրինաչափություն՝ ուժեղ պետությունները երբեք չեն հրաժարվում իրենց ցավից՝ նրանք այն վերածում են ուժի:

- Հոլոքոստ ապրած հրեաներն այսօր ունեն հզոր պետական և գաղափարական քաղաքականություն: Նրանք պետական մակարդակով պաշտպանում են անցյալի այդ դառը և արյունալի հիշողությունը: Յեղասպանության ժխտումը պատժվում է, իսկ պատմությունը ուսուցանվում է ամեն ոլորտում:
- Գերմանիան, լինելով նույն Հոլոքոստի պատասխանատու կողմը, պետականորեն ընդունել է իր մեղքը և տասնամյակներ շարունակ կառուցել է հիշողության, ապաշխարության և կրթական քաղաքականություն:
- Ռուսնդան, որը նույնպես ապրել է Յեղասպանություն, այսօր ունի ազգային համախմբման և հիշողության պահպանման պետական ծրագիր, ըստ որի՝ ցեղասպանության թեման ոչ թե լռեցվում է, այլ բացահայտորեն ուսումնասիրվում և ներկայացվում:

Այս օրինակները ցույց են տալիս մեկ բան՝ որ անգամ եղերական անցյալը կարող է վերանել ազգային ուժի, եթե չի մոռացվում, այլ պահպանվում է և վերածվում պատմական իրավունքների վերականգնմանն ուղղված պայքարի: Այն պարագայում, երբ կա գիտակցում, որ ցանկացած իշխանության պարտականությունն է՝

- պաշտպանել ժողովրդի անվտանգությունը,
- պահպանել ազգային ինքնությունը,
- ամրապնդել պատմական հիշողությունը,
- և առաջ մղել արդարության պահանջատիրությունը միջազգային հարթակներում:

Պետությունը չի կարող լինել չեզոք իր ժողովրդի պատմության նկատմամբ: Չեզոքությունը նման հարցերում հավասարազոր է հրաժարման:

Իսկ մեր երկրում այսօր ճիշտ հակառակ պատկերն է: Ներկայիս իշխանությունը ամեն ոլորտում միտումնավոր ոչնչացնում է ամեն հայկականն ու ազգայինը: Եվ այս ամենը իրագործվում է «Խաղաղություն» կեղծ թեզի ներքո: Սակայն հարց է առաջանում՝ ինչպիսի՞ խաղաղություն: Բացարձակ ճշմարտություն է, որ այն խաղաղությունը, որը կառուցվում է սեփական պատմությունը ուրանալու, անցյալից հրաժարվելու, ազգային ինքնությունը, արժեքները և հիշողությունը ջնջելու միջոցով, չի կարող լինել կայուն և արժանապատիվ: Այդ ամենը առաջացնում է լրջագույն վտանգ՝ ազգի գոյության համար: Չէ՞ որ ազգը պարզապես մարդկանց հավաքական խումբ չէ: Ազգը հիշողություն է, պատմություն, լեզու, մշակույթ, ինքնություն, արժեքներ: Ազգը գոյություն ունի այնքան ժամանակ, քանի դեռ պահպանում է այդ ամենը, քանի դեռ իր պատմական հիշողության կրողն է և խախտված իրավունքների պահանջատեր: Իսկ պատմությունը պահպանելը միայն անցյալը հիշելը չէ, այլ շարունակական պայքարը՝ հանուն ճշմարտության և արդարության հաստատման:

Ազգային ինքնության պահպանման խնդիրը չէ, որ որդեգրել է Հայաստանի ներկայիս իշխանությունը, հակառակը՝ ստիպում է մոռանալ մեր պատմությունը, ուրանալ Յեղասպանությունը, իսկ այդ ընթացքում Ադրբեջանը, որը պատմության կեղծարարությամբ բացահայտ զավթողական քաղաքականություն է վարում Հայաստանի դեմ, շարունակ շրջանառում է վտանգավոր խոսույթ, ըստ որի՝ իրենք են ցեղասպանվել հայերի կողմից, քվել իրենց հայրենիքից: Ու սա ոչ թե պատշաճ հակազդեցության է արժանանում ներկայիս հայկական իշխանությունների կողմից, այլ ճիշտ հակառակը՝ կեղծ խաղաղություն քարոզելով՝ մեզ համոզում են ուրանալ մեր անցյալը, մոռանալ պահանջատիրության մասին, հրաժարվել մեր իրավունքներից: Այս ամենը հանգեցնելու է նրան,

որ միջազգային հանրության համար աղբրեջանական խոսույթն ընկալվելու է որպես ճշմարտություն: Քանի որ դրան հակադրվող հստակ, հետևողական և պահանջատիրական հայկական քաղաքականություն չի իրականացվում, այլ, հակառակը, պետական մակարդակով խրախուսվում է որդեգրված քաղաքականության տարածումը, ինչը հանգեցնելու է նոր արյունահեղության, քանի որ այսպիսի խաղաղությունը կարճաժամկետ դադար է, կեղծիք, ուրիշ ոչինչ: **Ազգը, որը մոռանում է իր անցյալը, հրաժարվում իր իրավունքներից, ինքն իրեն դատապարտում է ոչնչացման, հող է նախապատրաստում ապագայի Ցեղասպանության համար:**

Ուստի մենք պետք է քաջ գիտակցենք, որ ներկայիս հայ ղեկավարության իրականացրածը պատահական քայլեր չեն, այլ հստակ ձևավորված ազգակործան և հակահայ քաղաքականություն՝ թշնամու կողմից թելադրվող և թշնամու վարած քաղաքականությանը նպաստող: Պետք է գիտակցենք, որ ամեն վայրկյան «Խաղաղություն» աղաղակվող իշխանական թեզը կեղծ է, այն ժամանակավոր դադար է և լռություն: Գիտակցենք, որ Ցեղասպանության հարցը կասկածի տակ դնելը ոչ այլ ինչ է, քան նահանջ պատմական արդար պահանջատիրությունից և անցյալից, ինչը բերելու է ավելի ծանր հետևանքների՝ մեր իսկ գոյության ավարտին: Քանի որ պարզից էլ պարզ է՝ եթե ժողովուրդը հրաժարվում է իր պատմական իրավունքներից, ապա նա ինքն է աստիճանաբար հրաժարվում իր իսկ գոյությունից: Դա այն է, ինչն իրականացվում է այսօր՝ ունենալ սերունդ առանց պատմական անցյալի, առանց հիշողության, առանց պահանջատիրության, ինչն էլ իր հերթին կրերի ազգային ինքնության թուլացման և ազգի գոյության աստիճանական վերացման: **Սա արդեն ցեղասպանության շարունակության այլ ձև է՝ ոչ թե ֆիզիկական, այլ նոր, առավել խորքային ու արմատական ձև՝**



պատմական հիշողության, ազգային ինքնության, մշակութային և հոգևոր արժեքների ոչնչացման ճանապարհով:

Ինչ պետք է անենք: Ոչ միայն ամեն տարի ապրիլի 24-ին սուկ հարզանքի տուրք մատուցենք անմեղ զոհերի հիշատակին, այլև մղենք ամենօրյա պայքար՝ պահպանելու և փոխանցելու մեր պատմությունը, լինելու պահանջատերը մեր արդար դատի, պաշտպանելու մեր ազգային արժեքները և չոքելու, երբ դրանք մերժվում ու ոչնչացվում են: Միայն այս կերպ մենք կհասնենք արդար հատուցման, կշարունակենք լինել որպես ազգ և կկանխենք գալիք **Ցեղասպանությունները:** Այսօր փորձում են ջնջել մեր հիշողությունը, ինչը պիտի ամեն գնով թույլ չտանք: Քանի որ հիշողությունը պարզապես անցյալ չէ: Այն ապագայի երաշխիքն է: Ազգը, որը մոռանում է, կորչում է: Ազգը, որը հիշում և պահանջում է, գոյատևում է:

Հիշել՝ նշանակում է պայքարել: Պահանջել՝ նշանակում է պաշտպանել: Չմոռանալ՝ նշանակում է ապրել: ■



Հայոց ցեղասպանության ու հոլոքոստի գործերի քննությունը գերմանական ու իսրայելական դատարաններում.

Ս. Թեհլիրյանի ու Էյխմանի գործերի համեմատական վերլուծություն

Արմեն Մարության
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Չայած երիտթուրքերի գործերով թուրքական ռազմական տրիբունալների կայացրած վճիռները չեզոքացնելու քեմալականների փորձերին, այնուամենայնիվ, դրանց մասին տեղեկատվությունը Թուրքիայի սահմաններից դուրս եկավ և իրավական հիմք հանդիսացավ մեկ այլ մասնավոր դատավարության համար, որն անմիջական առնչություն ուներ Հայոց ցեղասպանության հետ: Խոսքը, մասնավորապես, Բեռլինում Սողոմոն Թեհլիրյանի դատավարության մասին է՝ կապված 1921 թ. մարտի 15-ին Բեռլինի Շարլոտենբուրգ թաղամասում երիտթուրք պարագլուխ Թալեաթ փաշայի սպանության հետ: Ակնհայտ էր, որ Թեհլիրյանն էր սպանել Թալեաթին, ձերբակալվել էր հանցանքի վայրում, և ինքն էլ չէր ժխտում, որ սպանել է վերջինիս: Հատկանշական է, որ ողջ դատավարության ընթացքն ու նաև դատարանի կայացրած վճիռն ավելի շատ վերաբերում էին Հայոց ցեղասպանությանը, քան Թալեաթի սպանությանը:

1921 թ. հունիսի 2-ից 3-ը տեղի ունեցած դատավարության ընթացքում դատախազն իր մեղադրական ճառում Թեհլիրյանին մեղադրում էր կանխամտածված սպանություն կատարելու մեջ՝ այդ սպանությունը գնահատելով իբրև քաղաքական ատելության և վրեժի դրսևորում:¹ Նա ամեն կերպ փորձում էր արդարացնել Թալեաթին և երիտթուրքերի կառավարությանը, որը, իբր, հստակ նպատակ չէր ունեցել ոչնչացնելու հայերին, այլ ձգտել էր կայսրության ամրապնդմանը, դրանից ելնելով արձակել էր տեղահանության հրաման, ինչն էլ հանգեցրել էր ծանր հետևանքների:² Նման մեկնաբանությունները մեղադրական ճառի մեջ բոլորովին էլ պատահական չէին տեղ գտել, քանզի տվյալ սպանության շարժառիթը հայերի զանգվածային սպանություններն էին Օսմանյան կայսրությունում, որի գլխավոր մեղավորներից մեկը Ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան էր, և այդ սպանությունների զոհ էր դարձել նաև Ս. Թեհլիրյանի գերդաստանը:

Անդրադարձները պատմական անցյալի դեպքերին դատախազը որակում էր դատական գործի հետ կապ չունեցող հանգամանքներ: Ավելին՝ նա պնդում էր, որ իր վրա անգամ չի ազդում այն, որ Թալեաթ փաշայի նկատմամբ Կ.Պոլսում մահվան դատավճիռ է կայացվել:³ Կարևոր չհամարելով պատմական անցյալի դեպքերը, դատախազը, սակայն, բավական մանրամասն անդրադարձավ Առաջին աշխարհամարտի իրադարձությունների, մասնավորապես երիտթուրքերի կառավարության հանցագործությունների և



նրա անդամներից մի քանիսի, այդ թվում՝ Թալեաթի նկատմամբ կայացրած մահվան դատավճիռի վրա:

Թեհլիրյանի փաստաբան Վերթաուերն իր պաշտպանական ճառում, անդրադառնալով պատմական իրադարձությունների վերաբերյալ դատախազի դատողություններին, կրկին բոլորին հիշեցրեց, որ Թալեաթին իր երկրում դատապարտել են մահվան հայերի զանգվածային սպանությունները կազմակերպելու համար: Պաշտպանը նշում է, որ եթե գերմանական դատարանը չի ցանկանում ճանաչել այլ երկրի դատարանի վճիռը, ապա այդ դեպքում իրավունք չունի պահանջելու, որ մյուսները ճանաչեն իր կայացրած վճիռները: Վերթաուերը նաև հիշեցնում էր, որ Թալեաթին մահապատժի է դատապարտել ոչ թե Թուրքիայի սովորական դատարանը, այլ ռազմական տրիբունալը:

Պաշտպանի նման մեկնաբանությունները չափազանց կարևոր էին այն իմաստով, որ նախ՝ շեշտվում էր Թալեաթի սպանության ու գերմանական դատարանում ընթացող դատավարության օրգանական, պատճառահետևանքային կապը Հայոց ցեղասպանության, երիտթուրքերի դատավարության ու մասնավորապես թուրքական ռազմական տրիբունալի դատավճիռի միջև, ինչի հիման վրա կատարվում է այն

պնդումը, որ գերմանական դատարանն անպայման պետք է հաշվի առնի թուրքական ռազմական տրիբունալի կայացրած մահվան դատավճիռը մասնավորապես Թալեաթի նկատմամբ, մասնավանդ որ վկաների ցուցմունքներից հետո բոլորը համոզվեցին այդ վճիռի արդար ու հիմնավոր լինելու հարցում: Վերթառուերն իր ճառում շեշտում էր, որ Թալեաթն ու նրա հանցակիցները ոչ թե սովորական, այլ միջազգային հանցագործներ են, քանզի նրանց արարքները դատապարտելի էին այդ պահին գործող միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների տեսակետից: Ընդգծվում էր այն միտքը, որ նման հանցագործություններ կատարած անձը հանցագործ է ոչ միայն իր պետության տարածքում, այլ նաև նրա սահմաններից դուրս, այդ թվում Գերմանիայում: Սրանից ելնելով, Վերթառուերը փորձում էր դատարանին բերել այն եզրահանգման, որ Թեհլիրյանի կողմից կատարված սպանությունը քննելիս իրենք գործ ունեն օրինական ուժի մեջ մտած վճիռն ի կատար ածելու փաստի հետ, երբ վնասագերծվել է արդարադատությունից խուսափող միջազգային հանցագործը: Պաշտպանը նշում էր, որ հենց այդ մահվան վճիռն էր պատճառ դարձել իր երկրից միջազգային հանցագործ Թալեաթի փախչելու և կեղծ փաստաթղթերով Գերմանիայում հաստատվելու համար: Փաստաբանը նշում էր, որ գերմանական կառավարությունը թույլ չէր տա իր հայրենիքից փախած հանցագործին կեղծ փաստաթղթերով թաքնվելու Գերմանիայում, եթե այդ կեղծիքը ժամանակին բացահայտվեր՝ նկատի ունենալով այն, որ նման անձանցից մեկը՝ Էսվեր փաշան, դրանից առաջ փախել էր Գերմանիայից:⁴

Պաշտպանը նշում էր, որ թուրքական ռազմական տրիբունալի օրինական ուժի մեջ մտած դատավճռով Թալեաթ փաշան, Էսվերի, Ջեմալի և Նազըմի հետ միասին մեղավոր է ճանաչվել հայերի կոտորածների և անմեղներին պատժելու ծանր հանցագործության մեջ և մեղադրել իրեն նրանում, որ վիրավորում է այդ դատապարտյալներին՝ նրանց հանցագործներ անվանելով, մարդկանց, ովքեր օրինական դատավճռով մեղավոր են ճանաչվել ծանրագույն հանցագործությունների մեջ, հակասում է գերմանական օրենսդրությանը, և նշանակում է չիմանալ այդ օրենսդրությունը:⁵

Այս գնահատականներն ակնհայտորեն հասցեագրված էին դատախազին, որն ամեն կերպ փորձում էր ներկայացնել, թե սպանվել է Գերմանիայի հավատարիմ դաշնակիցներից մեկը՝ Թալեաթ փաշան: Սրան Վերթառուերը հակադարձեց, որ միջազգային հանցագործ Թալեաթը չի կարող համարվել Գերմանիայի դաշնակիցը, որ հնարավոր է նա եղել է նախկին պրուսական կամ գերմանական ռազմական կառավարության դաշնակիցը, որոնք գերմանացի ժողովրդի կարծիքը չեն հարցրել՝ Էսվերի ու Թալեաթի նմանների հետ դաշինք կնքելիս:⁶

Այսպիսով, պաշտպանական կողմի մարտավարությունը կառուցված էր նրա վրա, որ հանցագործության կատարումը չժխտող Թեհլիրյանն այն կատարել է ոչ թե աֆեկտի պայմաններում, այլ հայտնաբերել ու



Մողոմոն Թեհլիրյան

ի կատար է ածել հայերի զանգվածային սպանությունների համար միջազգային հանցագործի նկատմամբ օրինական ուժի մեջ մտած մահվան դատավճիռը, այն պարագայում, երբ վերջինս խուսափում էր արդարադատությունից՝ կեղծ փաստաթղթերով բնակվելով Բեռլինում:

Թեհլիրյանի դատավարությունն այս տեսակետից ոչ այնքան զուտ իրավական, որքան քաղաքական ու բարոյական նշանակություն ուներ թե՛ հայերի, և թե՛ թուրքերի համար, քանզի փաստորեն քննարկվում էր հայերի զանգվածային սպանությունների համար Օսմանյան կայսրության ու նրա իրավահաջորդ Թուրքիայի պատասխանատվության հարցը, ու խորհրդանշական էր, որ տվյալ հարցը քննարկում էր Օսմանյան կայսրության նախկին դաշնակից Գերմանիայի դատարանը:

1921 թ. հունիսի 3-ին երդվյալների որոշման համաձայն Մողոմոն Թեհլիրյանը մեղավոր չէր ճանաչվում այն բանում, որ սպանել էր Թալեաթ փաշային, ինչի հիման վրա գերմանական դատարանը վճռեց արդարացնել Թեհլիրյանին և դատավարության հետ կապված բոլոր ծախսերը փոխանցել պետական գանձարանի հաշվին:⁷ Այսպիսով, դատավարության ողջ ընթացքից և վճռից ելնելով, կարելի է պնդել, որ գերմանական դատարանը երիտթուրքերի դատավարության թուրքական ռազմական տրիբունալի վճիռների հիման վրա արդարացրեց հայերի զանգվածային սպանությունների կազմակերպիչներից մեկին՝ Թալեաթ փաշային վնասագերծողին՝ Մողո-



Ս. Թեհլիրյանի դատավարությունը

մոն Թեհլիրյանին: Այլ հիմքերով Թեհլիրյանին արդարացնել ուղղակի հնարավոր չէր, քանզի ինքը չէր ժխտում, որ կատարել է այդ սպանությունը: Հակառակ պարագայում գերմանական դատարանը պետք է առաջնորդվեր այն ժամանակվա Գերմանիայի քրեական օրենսգրքի 211-րդ հոդվածով, որի համաձայն կանխամտածված սպանություն կատարած անձը ենթակա էր մահապատժի: Նույն օրենսգրքի 213-րդ հոդվածով դատարանը կարող էր հաշվի առնել մեղմացուցիչ հանգամանքները, որ սպանվածը սպանողի և նրա հարազատների հետ դաժանորեն էր վարվել և հարկադրել էր նրան վրեժխնդրության ու հանցագործություն կատարելուն, ինչի դեպքում մարդասպանն ազատազրկվելու էր ոչ պակաս, քան վեց ամիս ժամկետով:⁸ Թեհլիրյանի նկատմամբ չկիրառվեցին գերմանական քրեական օրենսգրքի այս հոդվածներն այն պատճառով, որ երդվյալները և դատարանը ճիշտ ընկալեցին այս գործի էությունն ու նշանակությունը:

Գերմանական դատարանի վճիռը մտահոգիչ էր թուրքերի համար ինչպես վճռի կայացման պահին, այնպես էլ հետագայում: Հատկանշական է, որ նախկին դաշնակից Գերմանիայից դժգոհ թուրքերը Երկրորդ աշխարհամարտի ընթացքում՝ 1943 թ., դիմեցին հիտլերյան իշխանություններին Թալեթի աճյունը վերադարձնելու խնդրանքով և, ստանալով համաձայնությունը, վերաթաղեցին այն Թուրքիայում:⁹ Պետական բարձր մակարդակով կատարված այս գործողությունը և Թալեթի հետագա հերոսացումը նույնպես ակնհայտորեն վկայում են նոր Թուրքիայի օրոք Օսմանյան կայսրության քաղաքականության շարունակականության մասին:

Այս քայլի շարունակությունը եղավ նաև այն, որ ժամանակակից Թուրքիան փորձեց վիճարկել այդ դատական գործի վճիռը: Բեռլին գործուղվեց Թուրքիայի արդարադատության նախարարը, որը որպես Թեհլիրյանի գործով դատավճռի անհիմն լինելու փաստարկ նշեց այն, որ դատավարությունն ավարտվել է ընդամենը երկու օրում, և որ այդ ընթացքում նման կարևոր գործում հնարավոր չէր անաչառ ու օր-

յեկտիվ վճիռ կայացնել: Դատավարության երկօրյա ընթացքն իսկապես հարցերի տեղիք է տալիս, սակայն պետք է նշել, որ հենց դատարանը չցանկացավ լսել մյուս վկաների ցուցմունքները, որոնք Բեռլին էին եկել պատմելու Թալեթի ու նրա հանցակիցների բազմաթիվ այլ ծանր հանցագործությունների մասին՝ համարելով, որ արդեն բավարար ապացույցներ կան վճիռ կայացնելու համար: Կարծում ենք, որ այդ ցուցմունքները չլսելու պատճառը ոչ թե ապացույցների բավարար լինելն էր, այլ այն, որ նոր վկայությունների ժամանակ կարող էին ի հայտ գալ փաստեր, որոնք կբացահայտեին Գերմանիայի՝ իբրև Օսմանյան կայսրության դաշնակցի հանցակցությունը հայերի զանգվածային սպանությունների մեջ, որ Գերմանիան կարող էր միջամտել և առնվազն մեղմել հայերի նկատմամբ կատարվող հանցագործությունները, բայց ոչ մի գործնական քայլ չձեռնարկեց այդ ուղղությամբ: Թերևս այս հանգամանքներից ելնելով՝ դատարանն անհրաժեշտ չհամարեց դատավարության երկարաձգումը՝ հնարավոր անցանկալի շրջադարձերից խուսափելու նպատակով: Դատավարության արագ ընթացքի պատճառները թուրքերը պետք է փնտրեն հենց այս համատեքստում:

Գերմանական դատարանում Թալեթի փաշայի սպանության գործի քննությունն ու կայացրած վճիռը լիովին կարելի է համարել երիտթուրքերի դատավարության շարունակություն և թուրքական ռազմական տրիբունալների կայացրած վճիռների միջազգայնացման առաջին լուրջ քայլ:

Ազգային դատարաններում ցեղասպանության գործերի քննության տեսակետից կարևոր նշանակություն ունի նաև իսրայելական դատարանում Երրորդ ռայխի պետական գաղտնի ոստիկանության՝ գետաապոյի՝ հրեական հարցի վերջնական լուծման գործով զբաղվող հատուկ բաժնի նախկին ղեկավար Ադոլֆ Էյխմաննի դատավարությունը: Էյխմանը, որը հրեշավոր դերակատարում էր ունեցել Երկրորդ աշխարհամարտի տարիներին հրեաների ցեղասպանության իրագործման մեջ, կարողացել էր խուսափել Նյուրնբերգյան տրիբունալից և երկար տարիներ կեղծ փաստաթղթերով բնակվում էր Արգենտինայում: Սակայն տարիներ անց՝ 1960 թ. նա հայտնաբերվեց ու իսրայելական հատուկ ծառայությունների իրականացրած հատուկ գործողության արդյունքում առևանգվեց և տեղափոխվեց Իսրայել, որտեղ էլ նրա դեմ դատավարություն սկսվեց: Էյխմանին առաջադրվեց չորս մեղադրանք՝ հրեաների սպանություն, ֆիզիկական և մտավոր ցավի պատճառում, հրեաներին այնպիսի կենսական պայմաններում պահելը, որոնք հաշվարկված էին ֆիզիկական ոչնչացման հասցնելու համար, և հրեաների ծնունդները խափանող միջոցների իրականացում:¹⁰ Նրան առաջադրված մեղադրանքները լիովին համապատասխանում էին ոչ միայն Նյուրնբերգյան տրիբունալի կանոնադրությանը, այլև ՄԱԿ-ի Ցեղասպանության մասին կոնվենցիայի հոդվածներին: Դա պատահական չէր, քանի որ Էյխմանին դատում էին 1951 թ. «Նացիստներին և

նացիստների հետ համագործակցածներին պատժելու մասին» Իսրայելի օրենքով, որը մշակվել էր նշված փաստաթղթերի դրույթների հիման վրա:¹¹ 1961 թ. դեկտեմբերի 15-ին իսրայելական դատարանը Էլյամանին մեղավոր ճանաչեց ներկայացված բոլոր մեղադրանքներով և դատապարտեց մահվան: Սակայն վերջինիս փաստաբաններն այդ վճիռը բողոքարկեցին Իսրայելի Գերագույն դատարանում:

Էլյամանի պաշտպաններն իրենց բողոքը կառուցում էին այն փաստարկի վրա, որ Իսրայելի դատարանն իրավասու չէր քննելու այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել էին նրա տարածքից դուրս և մինչև այդ պետության ձևավորումը, ինչը, նրանց կարծիքով, միջազգային իրավունքի խախտում էր: Սակայն 1962 թ. դեկտեմբերի 12-ին Իսրայելի Գերագույն դատարանը մերժեց Էլյամանի փաստաբանների բողոքը և ուժի մեջ թողեց իսրայելական դատարանի վճիռը:

Գերագույն դատարանը, Էլյամանի փաստաբանների փաստարկներին պատասխանելիս, հղում կատարելով Նյուրնբերգյան տրիբունալի կանոնադրության ու վճիռների, ինչպես նաև ՄԱԿ-ի 1948 թ. ցեղասպանության կոնվենցիայի դրույթներին, նշեց, որ այն հանցագործությունները, որոնցում մեղադրվում է Էլյամանը, համարվում են միջազգային հանցագործություններ՝ «պատերազմական հանցագործություններ» և «մարդկության դեմ կատարված հանցագործություններ», որոնք դատապարտելի են ըստ միջազգային իրավունքի:¹² Դրանից ելնելով՝ դատարանը եզրակացրեց, որ Նյուրնբերգյան տրիբունալի վճիռներն Իսրայելի դատարանն իր համար նախադեպային է համարել, քանզի ցանկացած պետության դատարան դրանք անտեսելու իրավունք չունի: Գերագույն դատարանի վճռում նշվում էր նաև, որ «Նյուրնբերգյան սկզբունքները», որոնք քրեական պատասխանատվություն են նախատեսում նշված հանցագործությունները կատարած անձանց համար, հանդիսանում են միջազգային սովորության իրավունքի անբաժան մասը: Դա հաստատվել էր նաև ՄԱԿ-ի բանաձևով, որով Նյուրնբերգյան տրիբունալի կանոնադրությունն ու վճիռները ճանաչվել էին միջազգային իրավունքի սկզբունքներ, ինչն ամրագրվել էր նաև Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիության վերաբերյալ Միջազգային դատարանի 1951 թ. խորհրդատվական եզրակացության մեջ:

Վերը նշվածը հիմք էր տալիս Գերագույն դատարանին եզրակացնելու, որ 1951 թ. «Նացիստներին և նացիստների հետ համագործակցածներին պատժելու մասին» օրենքի ընդունումով, որի դրույթները խախտելու համար էլ Էլյամանը դատապարտվում էր, դատարանը գտնում էր, որ ընդամենը կատարվել է միջազգային իրավունքի նորմերի տեղայնացումը իսրայելական օրենսդրությունում:¹³

Արգենտինայից Էլյամանի առևանգման ու Իսրայել անօրինական տեղափոխման առնչությամբ դատարանը նշեց, որ այդ առումով խախտվել է ոչ թե դատապարտյալի, այլ նրան ապաստան տված պետության



Ադոլֆ Էլյաման

ինքնիշխանության իրավունքը, և այդ առումով հարցը պետք է լուծվի միջազգային մակարդակում, բայց անգամ դա չի կարող հիմք լինել նման ծանր հանցագործության մեջ մեղադրվող հանցագործին արդարացնելու համար: Նշվում էր, որ արդարադատությունից թաքսվող հանցագործներին արտահանձնելու մասին երկու պետությունների՝ Արգենտինայի և Իսրայելի միջև պայմանագրի բացակայության պայմաններում և անգամ նման համաձայնագրի առկայության դեպքում էլ, հանցագործը, փաստորեն, չի հանձնվել արդարադատությանը, ուստի դատարանը կարիք չունի քննելու հանցագործի ձերբակալման և դատաքննության վայր տեղափոխելու իրավաչափության հարցերը:¹⁴ Իսրայելի Գերագույն դատարանը միաժամանակ ոչ երկինաստորեն նշում էր, որ նախ Էլյամանը միջազգային արդարադատությունից թաքսվող անձ է, որին առժամանակ հաջողվել էր խուսափել Նյուրնբերգյան տրիբունալի առջև կանգնելուց, և նրան ապաստան տվող պետությունը որոշակի մեղքի բաժին ունի դրանում, ուստի անգամ Արգենտինայի ինքնիշխանության որոշակի խախտումը դիտվում է իրավաչափ: Այս առումով դատարանը նշում էր, որ շահագրգիռ պետությունը կարող է ներել իր ինքնիշխանության խախտման այս դեպքը և հրաժարվել բողոքներից՝ ներառյալ հանցագործին իրեն արտահանձնելու պահանջից կամ դա անել լուռ համաձայնության միջոցով:¹⁵



Երախարապարտ սերունդների խոնարհումը Սողոմոն Թեհլիրյանի հուշարձանին

Տվյալ պարագայում Էյխմանի դատավարությունը պետք է համարել Նյուրնբերգյան դատավարության օրգանական շարունակությունը՝ ճիշտ այնպես, ինչպես Թալեաթ փաշայի սպանության գործի քննությունը գերմանական դատարանում երիտթուրքերի դատավարության տրամաբանական շարունակությունն էր: Այս երկու դատավարությունների ընդհանրությունն այն է, որ Թալեաթը և Էյխմանը, կատարելով ցեղասպանություն հանցագործություն, փորձում էին խուսափել արդարադատությունից և կեղծ փաստաթղթերով ապաստան էին գտել այլ պետություններում: Դրանով է, թերևս, պայմանավորված երկու դատավարությունների մյուս ընդհանրությունը, ըստ որի, Թալեաթին և Էյխմանին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու գործողությունները կատարվել են որոշակի իրավական շեղումներով: Առաջին դեպքում Թալեաթի օրինական վճիռն ի կատար է ածվել ոչ թե նրան մահվան դատապարտած Թուրքիայի կամ միջազգային արդարադատության, այլ Սողոմոն Թեհլիրյանի կողմից: Երկրորդ դեպքում Էյխմանին առևանգող իսրայելական հատուկ ծառայությունները ստիպված էին խախտել Արգենտինայի ինքնիշխանությունը, որպեսզի իսրայելական դատարանը միջազգային արդարադատություն իրականացնի Նյուրնբերգյան տրիբունալից խուսափած նացիստ հանցագործի նկատմամբ:

Երկու գործընթացների տարբերությունն էլ այն է, որ առաջին դեպքում անվանական ինքնիշխանություն ունենալու պայմաններում Թալեաթին պատասխանատվության ենթարկելու առաքելությունը կատարում էր ոչ թե հայկական պետությունը, այլ հայկական սփյուռքը, ավելի ստույգ՝ Դաշնակցություն կուսակցությունը, իսկ երկրորդ դեպքում դա իրագործվեց հրեական պետության պետական մարմինների կողմից:

Երկրորդ կարևոր տարբերությունն էլ այն է, որ առաջին դեպքում դատավարությունն իրականացվեց ոչ թե հայկական պետությունում, այլ Թալեաթի ապաստանած երկրում՝ Գերմանիայում, իսկ Էյխմանին դատապարտողը հրեական պետությունն էր:

Ցեղասպանության հանցագործության այս երկու գործերով գերմանական ու իսրայելական դատարանների կայացրած վճիռների առումով կարող ենք արձանագրել, որ եթե ցեղասպանության զոհ ժողովրդի պետության՝ Իսրայելի դատարանում նացիստ հանցագործ Ադոլֆ Էյխմանին մահվան դատապարտելն այլընտրանք չուներ, ապա Թալեաթ փաշային վնասագերծող Սողոմոն Թեհլիրյանի գործը քննելիս գերմանական դատարանը շատ ավելի ազատ էր իր որոշումը կայացնելու հարցում, և հնարավոր էր ցանկացած ելք, այդ թվում՝ Թեհլիրյանի համար մահվան դատավճիռը: Բոլոր դեպքերում, այս երկու դատավարություններն էլ քաղաքակիրթ աշխարհի կողմից գնահատվեցին պատշաճ կերպով և ընդունվեցին որպես այդպիսին: Այսօր էլ դրանք կարող են լավ նախադեպային հիմք հանդիսանալ ցեղասպանության հանցագործությունների և մասնավորապես Հայոց ցեղասպանության հարցով միջազգային դատական ատյան ներկայացվելիք հայցի համար: ■

Հղումներ

- 1 Судебный процесс Талаата паши, под редакцией С. Степаняна, Ер., 2007, с. 177.
- 2 Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը, Եր., 1990, էջ 49:
- 3 Судебный процесс Талаата паши, с. 180.
- 4 Судебный процесс Талаата паши, с. 214-215.
- 5 Նույն տեղում, էջ 235:
- 6 Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը, էջ 189:
- 7 Судебный процесс Талаата паши, с. 241.
- 8 Судебный процесс Талаата паши, с. 62.
- 9 Բարդակչյան Գ.Պ., Հիտլերը և հայերի ցեղասպանությունը, Եր., 1991, էջ 46:
- 10 Schabas W., Genocide in International Law, Cambridge University Press, 2000, p. 387.
- 11 A-G Israel v. Eichmann, (1968) 36 ILR 5 (District Court of Jerusalem), Paras. 20-22. District Court Jerusalem, December 11, 1961, "The Attorney General of the Government of Israel v. Eichmann (case No. 40/61)," American Journal of International Law, 1962, p. 814.
- 12 Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария Ю. Г. Барсегов, т. 1, М., 2002, с. 38.
- 13 Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества, с. 39.
- 14 Նույն տեղում, էջ 41:
- 15 Սկզբնական շրջանում Արգենտինան բողոքեց Էյխմանի անօրինական առևանգման դեմ և հարցը բարձրացրեց ՄԱԿ-ում՝ Իսրայելին մեղադրելով իր ինքնիշխանությունը կոպտորեն խախտելու մեջ և պահանջում էր Էյխմանի անհապաղ արտահանմանը: Սակայն հետագայում, հաշվի առնելով Իսրայելի փոխադարձ մեղադրանքները, Արգենտինան չպնդեց իր պահանջները:

Մորզենթաուից մինչև Մենենդես

Արմեն Կարապետյան

Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, հրապարակագիր

Պատմական հիշողությունը գորեղ երևույթ է: Բոլոր դարերի, բոլոր կարգի բռնակալները միշտ էլ անհանգստացել ու տագնապել են պատմական հիշողությունից: Մարդկությունը մանուկ կմնար, եթե պատմական հիշողությունը սերնդեսերունդ չփոխանցվեր: 20-րդ դարի երկու ցեղասպանությունների՝ Հայոց մեծ եղեռնի և հրեական Հոլոքոստի կազմակերպիչները՝ երիտթուրքերի և նացիստների պարագլուխները, իրենց ոճիրներն իրագործելիս մշտապես վախ ու տագնապ են ունեցել պատմության դատաստանից և սերունդների վրեժխնդրությունից: Ընդ որում, և՛ երիտթուրքական ճիվաղ պարագլուխ Թալեաթը, և՛ նացիստական մոլագարը՝ Ադոլֆ Հիտլերը, բացորոշ կերպով արտահայտել են իրենց մտահոգություններն ու տագնապները: Այո, նրանք ճիշտ են հասկացել, որ պատմական հիշողությունից և սերունդների անեծքից ու դատաստանից պրծում չեն ունենալու: Վկա՝ Նյուրնբերգյան դատավարությունը, որը բարոյական և ֆիզիկական առումներով կախաղանեց պատերազմի նացիստական հանցագործներին: Վկա՝ երիտթուրքական հանցագործների և նրանց ժառանգակից հետևորդների բարոյական սևացումն ու բարոյական դատաստանը մարդկության առաջադեմ հատվածի կողմից: Երիտթուրքերից ոմանց ֆիզիկական սատակումն իրականացվեց եղեռնի գոհերի անմիջական ժառանգների կողմից:

Պետք է նշել, որ հայոց ցեղասպանության դեպքում Նյուրնբերգյան դատավարության պես մի ամփոփ ու վերջնական գործընթաց դեռևս տեղի չի ունեցել՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով: Երիտթուրքական ճարպիկ հանցագործները կարողացան խույս տալ Կ. Պոլսում դեռևս 1919 թվականին կայացված ու հենց թուրքական ատյանի ընդունած վճիռներից, որոնցով հեռակա կարգով նրանց գնդակահարություն էր սահմանված: Սակայն պատմության դատաստանից խուսափել նրանց չհաջողվեց:

Ձեռնամուխ լինելով հայ ժողովրդի բնաջնջմանը՝ երիտթուրքական կառավարությունը փորձում էր ամեն ինչ թաքցնել, որպեսզի աշխարհում ոչ ոք իրազեկ չդառնա այդ գազանային ոճիրների մասին և ինքն էլ պատասխանատվություն չկրի: Սակայն հենց պատերազմի սկզբնական շրջանում էլ հայության դաժան բռնազաղթի և կոտորածների լուրերը տարածվեցին երկրե երկիր և աշխարհով մեկ:

Արդեն 1915 թ. մայիսի 24-ին Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնակցային կառավարությունները պաշտոնապես բողոքի նոտա հղեցին Բ. Դոմանը, որով հայության դեմ կատարվող ոճիրները որակեցին որպես համայն մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություններ: Նրանք այդ



ոճրագործությունների համար անձնապես պատասխանատու համարեցին թուրքական գործող կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև նրա տեղական այն ներկայացուցիչներին, որոնք մասնակից էին ջարդերին ու կոտորածներին:

Պատասխան հայտարարությամբ թուրքական իշխանությունները փարիսեցիաբար կեղծում էին իրականությունը և ազդարարում, որ «օսմանյան տերության սահմաններում մեջ հայերու դեմ գործված ցեղասպանության դեպք մը բոլորովին սուտ է»:

1915 թվականի դժնդակ օրերին մեծ տերությունների դիվանագիտական ներկայացուցիչներից իրեն խորապես մարդկային և արժանապատիվ դրսևորեց Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորզենթաուն: Դեսպանը հստակ տեղեկացված էր և գիտակցում էր, թե ինչպիսի բարբարոսություններ էին կատարվում արևմտահայկական նահանգներում: Իսկ այն ինչ տեսել, հասկացել ու զգացել էր Մորզենթաուն, իսկապես ահավոր էր: Նա համոզված էր, որ թուրքական իշխանությունների և թուրք հասարակության իրական նպատակն էր բնաջնջել օսմանյան կայսրության տարածքում ապրող բոլոր հայերին: Նա քչաթիվ, բացառիկ անհատներից մեկն էր, որ ազնվորեն բնութագրեց տեղի ունեցածն ահա այսպես. «Համոզված եմ, որ մարդկության ողջ պատմության մեջ չկան այնքան զարհուրելի փաստեր, ինչքան այս կոտորածը: Անցյալում կատարված մեծ ջարդերն ու հալածանքները գրեթե աննշան են թվում 1915 թ. հայ ազգի կրած տառապանքների նկատմամբ»:



Նյուրնբերգյան դատավարությունը

Այո, Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպալը միանգամայն իրավացի էր: Մի ամբողջ ժողովրդի բնաջնջման իրական սպառնալիքն իրագործվեց 1915 թվականին, ինչն ավարտվեց հայ ազգի մեծագույն մասի ոչնչացմամբ ու նրա պապենական բնօրրանի բռնազավթմամբ:

Մորգենթաուն ոչ միայն խիղճը չկորցրած դիվանագետ էր, այլև մարդկային, բարոյական բարձր որակներ կրող անհատ: Թեև պայթել էր համաշխարհային պատերազմը, և իր երկիրն այդ պատերազմում որդեգրել էր չեզոքություն, այնուամենայնիվ, նա չէր կարող անտարբեր, կրավորական վերաբերմունք ցուցաբերել կատարվող ողբերգության հանդեպ: Երիտթուրքական իշխանությունների վրա խստիվ ազդելու և հայոց կոտորածները դադարեցնելու առաքելությամբ դեսպան Մորգենթաունը շատ հաճախ չարաշահում էր իր պաշտոնական դիրքն ու լիազորությունները:

Ի վերջո, Մորգենթաունը չդիմացավ այդ ամենին և նրա հոգեկան աշխարհն ու նյարդային համակարգը տեղի տվեցին: Զգալով իր անզորությունը տեղի ունեցող ողբերգության հանդեպ՝ Մորգենթաունը 1916 թ. գարնանը հրաժարվեց դեսպանի պաշտոնից և վերադարձավ իր երկիրը՝ Միացյալ Նահանգներ: Հաջորդ տարիներին նա հրատարակեց մի շարք արժեքավոր գործեր. «Հայկական ջարդերի առթիվ» (1918 թ.), «Հայաստանը կանչում է» (1918 թ.), «Ինչո՞ւ պետք է կործանել Օսմանյան կայսրությունը» (1918 թ.), «Կոչնչանամ արդյոք Հայաստանը» (1920 թ.), «Հայերի կոտորածները 1915-ին», «Բոսֆորի գաղտնիքները. 1913-1916» (1918 թ.), «Հայաստանի ողբերգությունը» (1918 թ.), «Դեսպան Մորգենթաունի հուշերը» (1919 թ.), որոնցում հույժ կարևոր ու վավերականորեն հավաստի տեղեկություններ էր հաղորդում հայոց Մեծ եղեռնի վերաբերյալ: Որպես մարդ, քաղաքացի և անհատ

Մորգենթաուն իր բովանդակ գործունեությամբ կատարեց ու մարեց իր պատքը մարդկության և մարդկայնության հանդեպ:

Նրա արածը, ի վերջո, ոչ թե լոկ մեկ ժողովրդի պաշտպանությանն էր ուղղված, այլև առհասարակ մարդու և մարդկայինի պաշտպանությանն ու պահպանությանը: Մորգենթաունի մարդկային - քաղաքացիական սխրանքը լուսեղեն երանգներով մնաց երախտապարտ հայության և մարդկության առաջադեմ ու լավագույն մասի հիշողության առանցքում:


Նրա անունը հավերժացված է Ծիծեռնակաբերդի՝ Հայոց ցեղասպանության գոհերի հուշահամալիրի հիշատակի պատին: Ամեն տարի ապրիլի 24-ին դեպի Ծիծեռնակաբերդի բարձունքը շարժվող հարյուր հազարավոր մարդկանց հոսքը խոնարհվում է նաև մեծանուն մարդասերի՝ Հենրի Մորգենթաունի անվան և հիշատակի առջև:

Մորգենթաունի գործը, նրա ձևավորած մարդասիրական ավանդույթները շարունակում են մեր օրերում ևս և շարունակվելու են միշտ՝ մարդկության բարեպաշտ ու առաքինի գավակների կողմից: Թուրքական ստի ու կեղծարարության արշավը վերջապես կանխվեց նաև ամերիկյան բարձրագույն օրենսդիր մարմիններում: Սկզբում ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատը միաձայն քվեարկեց Հայոց ցեղասպանության իրողությունը ճանաչող բանաձևի օգտին, որից հետո այն ընդգրկվեց Սենատի օրակարգում: Այդ բանը թույլ չտալու համար Վաշինգտոն անապարեց Թուրքիայի արկածախնդիր նախագահը՝ Էրդոհանը: Սակայն այս անգամ ապարդյուն էին թուրքական իշխանությունների ջանքերը: Ամերիկյան Սենատում արդարադատ մարդկանց ներկայությունը զգաստացնող ապտակ էր թուրքական կաշառատու քարոզչամեթոդային: Մարդկության և մարդկայնության մեծ ու անկաշառ



Հենրի Մորգենթաու

զավակի՝ Մորգենթաուի գործի արժանավոր ժառանգորդն ու հետևորդը եղավ ազդեցիկ սենատոր ու հանրային գործիչ Մենենդեսը, որն իր համախոհներով ամեն ջանք թափեց թուրքական մեքենայությունները կասեցնելու և Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևը ամերիկյան օրենսդիր բարձրագույն ատյանում ընդունել տալու համար:



Ռոբերտ Մենենդես

Մենենդեսի և իրեն համախոհ սենատորների ջանքերով 2019 թվականի դեկտեմբերի 12-ը պատմական արժանահիշատակ օր դարձավ: Աշխարհի գերտերություններից մեկի՝ Միացյալ Նահանգների Սենատը մոտ մեկ դար անց հաստատեց ու վերահաստատեց պատմական անուրանալի ճշմարտությունը: Այն ճշմարտությունը, որի մասին ի լուր աշխարհի բարձրաձայն աղաղակել էր դեսպան Մորգենթաուն: Իսկ դեսպանը որևէ անձնական շահ չունեք, երբ հնարավոր բոլոր միջոցներով փորձում էր սատար կանգնել բնաջնջվող հայությանը:

Նրա միակ շահը... մարդկայությունն ու մարդասիրությունն էր: Այսպես է նաև այժմ, երբ համընկնում կամ բախվում են թուրք-ամերիկյան շահերը: Նրանցից վեր կա էլ ավելի կարևոր մի բան, որը միշտ իրեն զգացնել է տալիս:

Հնց մարդկության և մարդասիրության չափանիշներով ու սկզբունքներով են առաջնորդվում այն անհատներն ու միջազգային հաստատությունները, ի վերջո պետությունները, որոնք բախման մեջ մտնելով ցեղասպան երկրի հետ, օրենքների և բանաձևումների տեսքով և ուժով դատապարտում են 20-րդ դարի առաջին զանգվածային ոճրագործությունը:

1915 թ. զարհուրելի իրադարձություններով անցած Հենրի Մորգենթաուից մինչև 21-րդ դարի երկրորդ տասնամյակը՝ ամերիկյան արդարադատությունը չկորավ ու չմեռավ, այն կրկին դրսևորվեց ցեղասպանների գործադրած բոլոր ճշումներին հակառակ: Ամերիկյան Սենատի ընդունած վճիռը նախ և առաջ հարգանքի տուրք է ցեղասպանության զոհերի անմարելի և սրբալույս հիշատակին, ինչպեսև Մորգենթաուի պես անհատների անվանն ու կատարած սխրանքին, անհատներ, որոնք դժվարին հանգամանքներում բարձր պահեցին համայն մարդկության պատիվը: ■



Բարենորոգումների ծրագիրն ազգային դիմագծի պահպանման երաշխիք (պոլսահայ պարբերականների հրատարակումների համաձայն) (1911-1915 թթ.)

Մարիամ Հովսեփյան
ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող,
բանասիրական գիտությունների թեկնածու

Պետականության կորստից և Օսմանյան կայսրության տիրապետության տակ հայտնվելուց հետո հայ ժողովրդի համար առաջնահերթություն էր դարձել ազգային դիմագծի պահպանման հիմնահարցը: Բնապետության պայմաններում դժվար էր գտնել լուծումներ, եթե հաշվի առնենք իշխանությունների կողմից ենթակա ժողովուրդների նկատմամբ իրականացվող բռնաճնշման, ավերի, թալանի ու կոտորածների քաղաքականությունը: Արևմտահայությունը որդեգրել էր ինքնապահպանման նպատակին ուղղված գործունեության մի շարք ուղղություններ: Դրանցից առաջինն այն էր, որ հայ մնալու համար անհրաժեշտ էր պահպանել մայրենի լեզուն, քրիստոնեական հավատքը, մշակույթը՝ որքան էլ դա բարդ էր օսմանյան կայսրության տարածքում, որտեղ երկար տարիներ արգելված էին «Հայաստան» անվանման կիրառումը և հայրենասիրական ոգով գրված ստեղծագործությունների վաճառքը կամ դրանց հիման վրա թատերախաղերի ցուցադրումը:¹ Նման իրականության մեջ, այնուհանդերձ, 20-րդ դարի սկզբին Օսմանյան Թուրքիայում (չհաշված Պոլիսը) գործում էին հայկական 800-ից ավելի դպրոցներ՝ շուրջ 82.000 աշակերտ-աշակերտուհիներով, իսկ գրեթե 16.000 երեխա սովորում էր մասնավոր և օտար կրթօջախներում:² 1914 թ. դրությամբ, ըստ թուրքական պաշտոնական աղբյուրների, արևմտահայերն ունեին ավելի քան 2000 վարժարան, 83 առաջնորդարան, 1860 եկեղեցի ու մատուռ, 451 վանք, որոնք հիմնականում ոչնչացվել են, և այսօր դրանց փշրանքներ են պահպանվել:³

Պետք է նշել հետևյալը: Թեև Թուրքիայում ազգային փոքրամասնություններն ունեին իրենց դպրոցներն ու մշակութային հաստատությունները կառավարելու ինքնավար իրավունք, ինչպես և պետական բյուջեից խորհրդանշական բնույթ կրող որոշակի գումար հատկացվում էր ոչ թուրք ժողովուրդներին, բայց կոնկրետ հայկական վարժարանների ու նախակրթարան-մանկապարտեզների ծախսերը հոգում էին արևմտահայոց զանազան կառույցները և առաջին հերթին՝ եկեղեցին:⁴

Կ.Պոլսի «Ժամանակ» թերթում կարդում ենք, որ հայը կարողացել էր դարերով պահել իր դիմագիծը, լեզուն, ընտանեկան սովորությունները՝ ապավինելով Հայ առաքելական եկեղեցուն, և նույնիսկ սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդը «չկրցաւ արգիլել հայը եկեղեցի յաճախելե»:⁵ Երիտթուրքական կառավարությունը 1912 թ. որոշում է կայացնում այլևս



չտրամադրել կրթական ոլորտի այդ նպաստը և ամբողջությամբ վերահսկել ոչ թուրքական վարժարանների գործունեությունն ու աշխատանքային ծրագրերը: Կ.Պոլսի «Ազդակ» օրաթերթը 1912 թ. դեկտեմբերի 23-ին տեղեկացնում էր, որ համաձայն Բարձր Դռան նոր հրահանգի, վերացվել էին հայկական դպրոցների պետական վճարները. «Կառավարութիւնը ներկայ տարուայ բիւջեից ջնջել է ոչ իսլամներու կրթութեան հատուկ բաժինը»:⁶ «Գահավեժ քաղաքականություն» վերնագրով հոդվածից պարզվում էր, որ ըստ օսմանյան խորհրդարանի որոշման՝ ազգային վարժարանները զրկվում էին ներքին ինքնավարությունից: Դրանց վկայականներն այլևս արժեզրկվում էին, իսկ ուսուցչական կոլեկտիվն արդեն պարտավոր էր կառավարության վավերացմամբ հաստատել կրթօջախի ծրագրերը, դասագրքերը: Բացի այդ՝ ուսուցիչները պետք է կառավարության կողմից ատեստավորում անցնեին և նոր վկայականներով շարունակեին իրենց աշխատանքը:⁷

Օսմանյան կառավարության որդեգրած ազգայնական քաղաքականության հետևանքով դարեր շարունակ ոտնահարված էր ոչ միայն հայի՝ հայ մնալու իրավունքը, այլև ընդհանրապես վտանգված էր հայության գոյատևումն այդ երկրի սահմաններում: Եվ իրականում աշխարհաքաղաքական հանգամանքների թելադրմամբ առաջացած Հայկական հարցի հիմքում

հենց այդ հիմնախնդիրն էր ընկած: Հայկական բարենորոգումների գործընթացը, սակայն, գլխացավանք դարձավ մի կողմից՝ թուրքական իշխանությունների, մյուս կողմից՝ ինչ-որ առումով, նաև հայ ժողովրդի համար: Չէ՞ որ այն տասնամյակներով չէր լուծվում, իսկ եվրոպական մեծ տերությունների և օսմանյան կառավարող շրջանակի կողմից առաջարկվող տարբերակները մնում էին թղթի կամ բանակցությունների սեղանի վրա՝ այդպես էլ չգոհացնելով կողմերից որևէ մեկին:

Բալկանյան պատերազմների շրջանում (1912-1913) Հայկական հարցը վերագարթոնք է ապրում:

1908 թ. հուլիսի 10-ին տեղի ունեցած հեղաշրջումից հետո կայսրության հպատակներին (այդ թվում՝ հայերին) թույլատրվում էր օգտվել խոսքի, խղճի, հավաքների ազատությունից: Բնական է, որ մայրաքաղաքում և Արևմտյան Հայաստանում լույս տեսնող հայկական պարբերականները, օգտվելով այդ հնարավորությունից, հանգամանորեն լուսաբանում էին բարենորոգումներին առնչվող իրողությունները: Ընդգծենք, որ պոլսահայ և արևմտահայ գավառում հրատարակվող ոչ բոլոր թերթերն էին բարենորոգումների թեման լուսաբանում, և ստորև նկատի ենք ունենալու Օսմանյան Թուրքիայի մայրաքաղաքում լույս տեսած ու բարձր վարկանիշով աչքի ընկած պարբերականների («Ազատամարտ», «Ժամանակ») հրատարակումները մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ: Հրատարակումներում ներկայացվող հիմնական գաղափարն այն էր, որ եթե հայկական բարենորոգումների հարցը հայանպաստ լուծում ստանար, ապա սահմանադրական կարգին «հետևող» այդ երկրում հայը կկարողանար պահպանել ազգային դիմագիծը: «Ժամանակ» օրաթերթում այն միտքն էր հայտնվում, թե սուլթանական նախկին վարչակարգի օրոք թուրքական կառավարությունը դարձրել օգտվել էր իր պետությանը ժամանակին բռնակցած, բայց պատմականորեն բազմաթիվ հայկական բնակավայրերում ապրող հայ ժողովրդի բանիմացությունից: Հողվածագիրը չէր անդրադառնում հայերի ուժացման, իրավագուրկ վիճակին, նրանց նկատմամբ պարբերաբար իրականացվող կոտորածի, թալանի քաղաքականությանը: Նա հայ-թուրքական համագործակցությունը ինչ-որ չափով փոխշահավետ էր համարում. հայերի շրջապատում կային պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, պալատական խորհրդականներ, նախարարներ և այլն: Նրանցից շատերը կարողացել էին նաև տնտեսական ոլորտում հաջողության հասնել, հարստանալ. «Անոնք ծաղկեցուցին Թուրքիան արհեստներով ու վաճառականությամբ... Մեզի պետություն մը պետք էր արտաքին թշնամիներու դէմ, օսմանեան տերութեանն ալ ազգ մը պետք էր երկիրը ծաղկեցնող»:⁸ Հեղինակի կարծիքով՝ նոր կամ երիտասարդ թուրք կառավարիչները հայերի հանդեպ այլ քաղաքականություն որդեգրեցին: Նրանք հայերին աստիճանաբար հեռացրին պետական ապարատից և «ի վերջոյ իսլամ տարրերուն հայերը ոչնչացնելու ամէն իրատունք տվեցին»:⁹



Նրանց այդ քայլին դրող պատճառները մի քանիսն էին.



- հայերը բոլոր ասպարեզներում կարող էին հաջողության հասնել ինքնուրույն,
- հայերը կարող էին իշխող տարր դառնալ,
- սրվել էր բարենորոգումների խնդրից և օտար պետությունների միջամտությունից ազատվելու թուրքական մղումը:¹⁰

Հալածանքներով լի պետական քաղաքականության հետևանքով հազարավոր հայեր ստիպված արտագաղթում էին՝ չհավատալով բարենորոգումներ իրականացնելու իշխանության խոստումներին:

««Հայաստան» բառին ալ գործածուելուն դէմ դժգոհանք մը կը տեսնուի մեր թուրք հայրենակիցներուն մէջ... Կ'եզրակացնենք, թէ արդի ընթացքը ու երկրին այս անապահով վիճակը, ինչպէս նաև հայերու գաղթին առաջը չառնուիլը կ'ապացուցանեն, թէ բարեկարգութիւն պիտի չըլլայ իրապէս, և ասոր համար ձայն կը բարձրացնենք մենք՝ հայերս»,¹¹ - հողվածն այս եզրահանգմամբ էր ավարտում Վահրամ Մարգարյանը:

Ֆրանսիական «Սիեքլը» թերթից «Ժամանակը» թարգմանաբար արտատպել էր «Հայաստան և Թուրքիա» վերնագրով հողվածը, որտեղ ներկայացված էին բարենորոգումներից հայերի ակնկալիքները: Նշվում էր, որ նրանք ցանկանում էին իրենց ազգային դիմագիծը պահելով, ապահով կյանքով ապրել բնօրրան հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում: «Հայերը կ'ուզեն իրենց գոյութիւնը ապահովող արդարութեան մը հաւասարապէս գործադրուիլը և իրենց ընտանիքներուն, ինչքին ու պատիւին պահպանումը... Թուրքիա բնակող հայերը... անկախ իշխանապետութիւն մը կազմելու փափագ բնաւ չունին: Դարերէ ի վեր Արեւելեան Ասատուրի մէջ ինքզինքնին իրենց երկրին մէջ կը նկատեն և նորէն այդպէս մնալ կը բաղձան... Հայ մը չի փափագիր իր հայրենիքը թողուլ և ուրիշ տեղ բախտ փորձելու երթալ»,¹² - կարդում ենք թերթում:

«Ժամանակը» պարբերաբար պատասխանում էր թուրքական թերթերում հրատարակված այն ստահող հողվածներին, որոնք ընթերցողներին փորձում էին մոլորեցնել բարենորոգումների ծրագրից



հայերի ունեցած ակնկալիքների հարցում: Բերենք օրինակ: «Թերճիմանը հագիգաթ» լրագիրը գրում էր, թե արևմտահայերն իբր ցանկանում էին Ռուսաստանի վերահսկողությամբ ինքնավարություն ունենալ: «Ժամանակը» հակառակն էր պնդում. արևմտահայերն ուզում էին ապրել հայրենի եզերքում՝ իբրև մուսուլմաններին իրավահավասար և ամեն տեսակետից պաշտպանված օսմանահայատակ քաղաքացիներ:¹³ Թուրքական թերթերի թյուր և հորինված տեսակետները հերքելուն զուգահեռ՝ «Ժամանակը» փորձում էր իր լսարանին ներկայացնել խնդրո առարկա հարցերի վերաբերյալ իշխող երիտթուրքական կուսակցության մտտեցումները: Երիտթուրք հայտնի գործիչ Բեհա Էդ Դին Շաքիրի հետ թերթի թղթակցի ունեցած հարցազրույցից, օրինակ, պարզվում էր, որ բարենորոգումները ձգձգվում էին այդ գործընթացի վրա եվրոպական հզոր պետությունների վերահսկիչ դերակատարության համար մղվող ներքին պայքարի պատճառով: Նա և նրա կուսակցությունը դա համարում էին օսմանյան արժանապատվությունը վիրավորող հանգամանք:¹⁴ Շաքիրն ասել էր հետևյալը. «Բացարձակապես որոշած ենք մեր անկախությունը ու արժանապատվությունը բնա չզոհել»:¹⁵ Մկլազատե Բիֆայթն էլ թուրքական «Բայրաքթար» թերթում այն հարցն էր քննարկել, թե արդյոք գոյություն ունեն հայաստանը. «Եթե կայ Հայաստան, ո՞ր է: Հայաստան ըսելու համար պետք է տեղ մը, որուն բնակչության մեծամասնությունը հայ ըլլայ: Ո՛չ արևելեան նահանգներուն մեջ և ո՛չ մեկ տեղ մը տիրապետող ցեղը հայը չէ»:¹⁶ այլ քրդերն էին մեծամասնություն կազմում: Իր բնորոշմամբ՝ այս անկուրջ հարցադրմանը «Ժամանակը» ձանձրալի էր համարում պատասխանելը, քանի որ Բիֆայթի միտումը հասկանալի էր. միմյանց դեմ կրկին լարել հայերին ու քրդերին:¹⁷

«Ազատամարտը» 1912 թ. խմբագրականներից մեկում Հայկական հարցը բնորոշում էր որպես Արևմտյան Հայաստանի վերափոխման ու բարենորոգման հատունացած խնդիր, ինչի մասին խոսելն անգամ համարվում էր օսմանյան պետության հանդեպ թշնամանք:¹⁸ Օրաթերթում 1912 թ. բացվել էր «Հայկական հարց» բաժինը, որտեղ գետնեղված հողվածնե-

րի պատճառով լրագիրը պարբերաբար դատի էր տրվում, փակվում էր իշխանությունների հրամանով և ստիպված էր լինում ժամանակավորապես անունը փոխած հրատարակվել: Հիշատակենք «Ազատամարտի» անդրադարձը վերոհիշյալ «Թերճիմանը հագիգաթ» թերթի խմբագրականին: Իթթիհատական այդ թերթում արևմտահայերին կոչ էր արվում պահանջել բարենորոգումներ ոչ միայն հայաբնակ նահանգների, այլև ընդհանուր երկրի համար: «Ազատամարտը» համաձայն չէր:¹⁹ Է. Ակնունին նույն խորագրի ներքո տպագրած «Ո՞րն է ճիշտ, որը՞ ոչ» հոդվածում, հիշատակելով Բականյան պատերազմների շրջանում Հայկական հարցի լուծման եվրոպական երկրների կողմից բարձրաձայնված առաջարկները, ընդհուպ մինչև Հայաստանի անկախությունը, դրանք ճիշտ մտտեցումներ չէր համարում: Ճիշտ էր համարում այն, որ օսմանյան տիրապետության տակ գտնվող Հայաստանն անկարող էր մնալ ներկա կացության մեջ, որը մահ էր նրա համար: Ճիշտ էր համարում նաև այն, որ հայաբնակ շրջանները կարոտ էին հատուկ վարչաձևի՝ ապակենտրոնացման վրա հիմնված տեղական ինքնավարության: Ակնունին գտնում էր, որ դա թուրքական պետության դեմ ուղղված դավ կամ թշնամանք չէր, այլ երկրի վերակազմության համար լավագույն աջակցություն էր: «Պինդ գրկենք Հայկական հարցի լուծումը: Սա պետության օրվա վերքն է, որի բուժմամբ պետք է զբաղվեն պետական քաղաքական բժիշկները»:²⁰ - այս խոսքերով էր հողվածն ավարտում Ակնունին:

1912 թ. սեպտեմբերին եվրոպական մեծ տերություններն ու Ռուսաստանը միջամտում են օսմանյան իշխանությունների մշակած բարենորոգումների նոր ծրագրի ընդունմանը, որով նախատեսվում էր իբրև թե բարեկարգիչ փոփոխություններ իրականացնել հայաբնակ նահանգներից Վանում, Բիթլիսում, Տիգրանակերտ-Դիարբեքիրում, Տրապիզոնում: Ընդ որում, այդ ծրագիրն արդեն մերժվել էր արևմտահայերի Ազգային ժողովի և պատրիարքարանի կողմից՝ դրանում առկա սահմանափակ ու թերի դրույթների պատճառով: 1912 թ. դեկտեմբերի կեսից «Ազատամարտն» ամեն համարում անդրադառնում էր Օսմանյան Թուրքիայի ներքին գործերի նախարա-

րության կողմից մշակված հայկական նահանգների բարենորոգումների այդ ծրագրին՝ այն գնահատելով մակերեսայնորեն կազմված: Թերթը, հիմնվելով Օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ որդեգրված պետական քաղաքականության վերլուծության վրա, ամենևին վստահ չէր, որ կիրականացվեր հայկական բարենորոգումների որևէ ծրագիր կամ նախագիծ:²¹

1913 թ. ապրիլին արևմտահայ ազգային-քաղաքական ակտիվ գործիչների ջանքերով կազմվում է հայկական բարենորոգումների նախագիծ, որը ներկայացվում է Կ.Պոլսում արտակարգ և լիազոր դեսպան Միխայիլ Գիրսին: Դրանում արտահայտված էին հայերի ցանկությունները, ըստ որոնց՝ բարենորոգումների գործընթացը պետք է վերահսկվեր եվրոպական պետությունների և Ռուսաստանի ներկայացուցիչների կողմից: Դիվանագիտական շահերի բախումների հետևանքով 1913 թ. հունվարին երիտթուրքական կառավարությունը հանդես է գալիս հակընդդեմ առաջարկով:²² Մեծ տերությունները, հանուն այս տարածաշրջանում իրենց աշխարհաքաղաքական շահերի, սկսում են բանակցել, քննարկել և «առքովաճառքի» առարկա դարձնել Հայկական հարցը: Միմյանց են հակադրվում 1880, 1895 թթ. կազմված ծրագրերի հիման վրա Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպանատան առաջին թարգման ու խորհրդական Անդրեյ Մանդելշտամի ներկայացրած հայկական բարենորոգումների և թուրքական իշխանությունների կողմից մշակված ընդհանուր (այդ թվում՝ հայաբնակ նահանգներում) բարենորոգումներ անցկացնելու նախագծերը: Երկարատև քննարկումների հանրագումարում 1914 թ. հունվարի 26-ին Կ.Պոլսում Ռուսական կայսրության դեսպանության հավատարմատար Կոնստանտին Գուլկևիչը և Օսմանյան կայսրության մեծ վեզիր Մալիկ Հալիմ փաշան ստորագրում են ռուս-թուրքական համաձայնագիրը,²³ որը բարենորոգումներ էր նախատեսում անցկացնել հայաբնակ նահանգներում:

Ռուս-թուրքական համաձայնագիրը Հայկական հարցին առնչվող նախորդ փաստաթղթերի համեմատ որոշ առումով առաջընթաց է համարում հայ պատմագիտական միտքը՝ իրավացիորեն փաստելով նաև դրա հետընթաց քայլ լինելը Մանդելշտամի պատրաստած հայկական բարենորոգումների նախնական ծրագրից:²⁴ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատարակած «Հայոց պատմություն» բազմահատորյակում ներկայացված են այդ համաձայնագրի հետընթացությունը հավաստող որոշ փաստեր: Նախ՝ այն, որ նախագծում կրճատվել էին հայերի իրավունքները: Դրանում չէր խոսվում հայկական մարզի մասին, ինչպես նախատեսված էր ռուսական նախնական նախագծում: Այստեղ հիշատակվում էր Արևելյան Անատոլիան, որը պետք է բաժանվեր 2 հատվածի: «Այդ հատվածների մեջ ընդգրկվում էին ինչպես հայկական, այնպես էլ ոչ հայկական վիլայեթների՝ մահմեդականներով բնակեցված շրջանները, ինչը բացառում էր ռուսական նախագիծը»:²⁵ Հետքայլերից էին «Համիդիե» գնդերի պահպա-

նումը, հայաբնակ վայրերում փախստական մահմեդականների բնակեցումը թույլատրելը, հողավեճի լուծումից հրաժարվելը և այլն:²⁶ Օսմանյան իշխանությունները հնտորեն օգտագործում էին համաձայնագրի բաց կողմերը և չէին թողնում ընդհանուր հսկողության իրավունք ունեցող ռուսական կողմին գործնականում օգտվել իր այդ իրավասությունից:

Փաստենք մի կարևոր հանգամանք. ժամանակի հայ հասարակական-քաղաքական էլիտայի ներկայացուցիչների և պարբերական մամուլի շուրջ համախմբված մտավորականության մտեցումներն ու կարծիքները հիշյալ փաստաթղթի վերաբերյալ միմյանցից տարբեր էին: Նրանց մի մասը հիմնականում չէր հավատում, որ այդ համաձայնագրի դրույթները կյանքի էին կոչվելու: Քիչ չէին հակառակ տեսակետն արտահայտող գործիչները, որոնք կողմնակից էին եվրոպական պետությունների (մասնավորապես Ֆրանսիայի, Անգլիայի) աջակցությամբ և Ռուսաստանի ռազմական օգնությամբ Հայկական հարցի արդարացի լուծման տարբերակին: Արևմտահայ ու արևելահայ գործիչներից շատերի համոզմամբ՝ ռուսական հովանու ներքո հայ ժողովրդին առնվազն չէին սպառնալու ֆիզիկական ոչնչացման, ավերի ու թալանի վտանգները:²⁷ Կարելի է թերևս ասել, որ հայության մի ստվար հատված ռուսամետ կողմնորոշում ուներ, ինչը հնտորեն շահարկվում էր ռուսական դիվանագիտության կողմից: Իրենց հերթին հենց այդ հանգամանքը հաշվի առնելով՝ օսմանյան իշխանություններն ամեն կերպ խոչընդոտում էին Ռուսաստանի վճռորոշ դերակատարությանը հայկական բարենորոգումներին առնչվող ցանկացած նախաձեռնությանը ու հատկապես միջազգային բնույթի փաստաթղթեր կազմելիս: Պարզ է, որ 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրից ռուսական կողմնորոշմամբ հայության լայն զանգվածները բավական ծանր պետք է տանեին այդ փաստաթղթով Ռուսաստանի դերակատարության որոշակի թուլացումը: Հակառակ տեսակետին հարող անձինք համաձայն չէին այդ պնդման հետ: Կարծիքների բախումն առավել տեսանելի էր պոլսահայ պարբերականների էջերում: Պետք է նշել, որ արևմտահայության կենսապայմանների ու իրավունքների բարելավմանն ուղղված այս փաստաթուղթը դեռ ըստ հարկի չէր ընկալվել հայ հանրության բոլոր խավերի և շերտերի կողմից, երբ սկսված Առաջին աշխարհամարտը պատրվակ բռնելով, իշխանություններն այն չեղյալ են հայտարարում ու հրաժարվում են կատարել դրանում ամրագրված կետերը: Բավական ուշագրավ էր հայկական թերթերի արձագանքն այն առումով, որ առաջարկներ ներկայացնելու կամ որոշումներ կայացնելու փոխարեն դրանց մեծամասնությունը մտում էր սպասողական վիճակում: Անշուշտ, գրաքննությունն իր վճռորոշ դերն էր խաղում հանրային կարծիքը խեղաթյուրելու գործում:²⁸

«Ազատամարտ» և «Ժամանակ» պարբերականներում չկար գեթ մեկ նյութ, որում լրագրողներն այդ փաստաթղթի նկատմամբ արտահայտեին մերժո-



ղական վերաբերմունք: Հրապարակումներում պարզորոշ արտացոլված էին պարբերականների հույսերը համաձայնագրից ու մեծ տերություններից: Դրանցում հիմնականում հաշվի չէր առնվում Հայկական հարցի առնչությամբ թղթային և բանավոր խոսքի մակարդակում մնացած դիվանագիտական նախորդ անարդյունավետ փորձը: Եվ սա այն պարագայում, երբ այս թերթերն ամենօրյա պարբերականությամբ ձգտում էին հայությանն առաջնորդել բարենորոգումների խճճված ճանապարհով: Նկատենք, որ «Ազատամարտ» օրաթերթը (1909-1915 թթ.) ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի պաշտոնական օրգանն էր²⁹ և արտահայտում էր կուսակցության դիրքորոշումը տվյալ հարցի վերաբերյալ: «Ժամանակ» օրաթերթը³⁰ որևէ կուսակցության խոսափող չէր: Այն աչքի էր ընկնում խմբագրության անդամների ու նրանց համախոհների անկախ տեսակետներով, թեև մի կարճ ժամանակահատվածում (1920-1924 թթ.) հանդես էր գալիս հայ ռամկավարների կուսակցության «Ժողովուրդին ձայնը» թերթի հետ համատեղ՝ «Ժողովուրդին ձայնը-Ժամանակ» անունով:³¹ «Ազատամարտի» աշխատակիցներն ավելի արմատական էին իրերի դրվածքը ներկայացնելիս ու արևմտահայերի խնդիրների մասին բացեիքբաց և սուր կերպով գրելով, իշխանություններին կարծես հրավիրում էին բանավեճի: Կառավարությունը նմաններին պատասխանեց հատուկ որոշում կայացնելով՝ 1915 թ. ապրիլի 24-ին մեկընդմիջտ փակելով «Ազատամարտ» օրաթերթը և ձերբակալելով, մահվան դատապարտելով պարբերականի գլխավոր խմբագիր, անվանի մտավորական Ռուբեն Զարդարյանին և համարյա բոլոր աշխատակիցներին:³² Մեծ եղեռնի տարիներին, ենթարկվելով գրաքննության խստացված պահանջներին՝ «Ժամանակ» օրաթերթը և պոլսահայ մի քանի պարբերականներ շարունակել են լույս տեսնել գրեթե ամեն օր: Ընդ որում, 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրումից հետո «Ժամանակի» խմբագրակազմը, հավանաբար, համբերատար կերպով սպասել էր իրադարձությունների զարգացմանը՝ մասնավորապես կապված ընդհանուր տեսուչներ-քննիչներ նորվեցացի գնդապետ Նիկոլայ Հոֆի ու հոլանդացի դիվա-

նագետ Լուի Վեսթենենկի ժամանան ու տեղերում նրանց ծավալելիք գործունեության հետ: Այս առումով բնորոշ էին «Հայաստանի բարենորոգմանց շուրջ» և «Հայաստանի ընդհանուր քննիչ Հոֆ րեյ կայցելե սրբազան պատրիարքին» թղթակցությունները³³: Թեև սրանցում ընթերցողներին ներկայացվում էին Հոֆի ու Վեսթենենկի այցելությունների և հանդիպումների մանրամասները ոչ միայն պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի, այլև Օսմանյան կայսրության վարչապետի ու ներքին գործերի նախարարի հետ, բայց քննարկված հարցերի մասին թերթը լռում էր:³⁴ Դեռ ամեն ինչ հեղհեղուկ էր ու անորոշ: «Բ. Դրան և քննիչներուն միջև ամեն օր իրաւասութեանց մասին բանակցութիւնները տակաւին շարունակուելու վրայ ըլլալով»՝ այս գործիչների քարտուղարներն իրենց հետ կապ հաստատած «Ժամանակի» թղթակցին խնդրել էին առայժմ որևէ կոյու չգրել այդ թեմայով:³⁵ Թերթը պարզապես տեղեկացնում էր, որ Արևմտյան Հայաստանի ընդհանուր քննիչները կառավարության հետ կնքել էին աշխատանքային պայմանագրեր, որոնց համաձայն՝ նրանք իրենց պաշտոնատեղիներ պետք է մեկնեին 1914 թ. հուլիսի 14-ին:³⁶ Հոֆը Վանի, Խարբերդի, Բիթլիսի, Դիարբեքի, իսկ Վեսթենենկը Սեբաստիայի, Էրզրումի, Տրապիզոնի նահանգների վերատեսուչները պետք է դառնային:³⁷ 1914 թ. հուլիսի 19-ին սկսված Առաջին աշխարհամարտը պատճառ բերելով՝ օսմանյան իշխանությունները չէր չէր են համարում թե՛ օտարազգի քննիչների հետ կնքած պայմանագրերը, թե՛ 1914 թ. հունվարի 26-ին ստորագրած ռուս-թուրքական համաձայնագիրը:

Թուրքական դիվանագիտությունը կարողանում է ոչ միայն հստորեն օգտվել մեծ տերությունների միջև առկա աշխարհաքաղաքական շահերի բախումից ու հակասություններից, այլև Առաջին աշխարհամարտի ընձեռած այն հնարավորությունից, որով անմիջապես հրաժարվում է նրանց հետ ունեցած քաղաքական և տնտեսական նախկին բոլոր պայմանավորվածություններից, մինչ այդ տվյալ երկրներին իր տրամադրած տնտեսական արտոնություններից, ինչպես նաև՝ օսմանյան կայսրության կուտակված պարտքերից: «Ազատամարտն» այս նոր քաղաքականության մեջ վտանգներ էր տեսնում Հայկական հարցի համար: Ասվածի վկայությունը թերթում տպագրված ներքին գործերի նախարար Մեհմեդ Թալեաթ փաշայի հետևյալ խոսքերն էին. «Այն պարագային, երբ մեծ պետությունները դժուարությամբ յարուցանեն մեզի դեմ, վճռապես որոշած ենք պաշտպանել մեր իրաւունքը մինչև յետին կէտ՝ մեր ունեցած բոլոր միջոցներով»:³⁸

Օսմանյան խորհրդարանի պատգամավոր Արշակ Վռամյանը «Հայաստանի բարենորոգումը և մարգպանները» վերնագրով հոդվածաշարում ներկայացնում էր այդ փաստաթղթի վերաբերյալ հանրային տարբեր շերտերի կարծիքները՝ հանդես գալով նաև հետաքրքիր առաջարկներով: Համաձայնագրից դժգոհողներին նա կոչ էր անում լսել հակառակ տեսակետն ունեցողներին. «Փորձենք հասկնալ իրար»:³⁹

Նա ըմբռնումով էր մոտենում այն գործիչներին, որոնք չէին հավատում, որ արևմտահայության նվազագույն պահպանման բավարարմանը միտված այս համաձայնագիրը կյանքի էր կոչվելու:⁴⁰ Նրա կարծիքով՝ անվտանգության համար կային օբյեկտիվ նախադրյալներ: Վռամյանը գրում էր, թե միջազգային դիվանագիտության շահերից էր բխում այդ փաստաթուղթն ի կատար ածելը: Բերում էր ասվածը հիմնավորող փաստարկներ: Կարևորում էր կառավարության ու հայ ժողովրդի միջև վստահության հաստատումը և արևմտահայերի ազգային մարմինների կողմից պատասխանատվության ստանձնումը: «Երկու մարզպանություններու հաստատումը տասը տարուան վարկ մը կը բանայ ոչ միայն թիրք կառավարութեան, այլ և հայ ժողովուրդին առջև: Երկար չէ այդ պայմանաժամը, բայց կարճ ալ չէ, եթէ կարենանք օգտագործել զայն»:⁴¹ Վռամյանն առաջարկում էր չղժգոհել և օգտվել եղածից, ինչն իրականում բավական լայն հնարավորություններ կարող էր ստեղծել արևմտահայերի խաղաղ ապրելակերպի համար: «Իսկ երբ կլինի արդիւնքը-ահա՛ հարցը, որուն պատասխանին մտատանջ կը սպասէ ամէն հայ»,⁴² - այս հարցադրմամբ էր հողվածն ավարտում Վռամյանը:

«Ազատամարտի» աշխատակից, դաշնակցական հայտնի գործիչ Է. Ակնունին, անդրադառնալով 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի մասին հայության շրջանում ձևավորված տեսակետներին, դրանք երկու խմբի էր բաժանում: Առաջինի համաձայն՝ եվրոպացիներ Հռֆն ու Վեսթենենկը մեծախոստում ապագա էին խորհրդանշում արևմտահայության համար, իսկ երկրորդ մոտեցումն արտահայտողները մտածում էին, որ «երկու անձով երկիր չի փոխուի, և թղթէ ծրագիրներով դժոխքը արքայութիւն չի դառնայ»:⁴³ Ակնունին գտնում էր, որ Հռֆն ու Վեստենենկը կհաջողեին իրենց աշխատանքում, եթե օսմանյան իշխանությունները նրանց նեցուկ լինեին:⁴⁴ «Էականը թղթենի ծրագիրը չէ: Այս երկրի մէջ 50 տարի է թղթի վրայ շատ սիրուն խօսքեր շարունեցան և մեծախոստում բանաձեւեր արձանագրուեցան: Էականը կենդանի շունչն է, անկեղծ վճռակալությունը և պետական ըմբռնումը»,⁴⁵ - եզրակացնում էր հողվածագիրը: Այնինչ իրականում հակառակ պատկերն էր: Այս առումով բնորոշ էր ֆրանսիական «Թան» թերթից «Ազատամարտում» թարգմանաբար տպագրված «Հայկական բարենորոգումներու մասին Թուրքիո տեսակետը» վերնագրով հողվածը: Այս պարբերականի թղթակիցը ռուս-թուրքական համաձայնագրի մասին գրուցել էր Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարության բարձրաստիճան պաշտոնյաներից մեկի հետ, ում պնդմամբ այդ փաստաթուղթն այն արդյունքը պետք է ունենար, որ «բարենորոգումներու ծրագիրը պիտի գործադրուի ոչ միայն Արեւելեան Անատոլիոյ վեց նահանգներուն, այլև ամբողջ Ասիական Թուրքիոյ մէջ, գէթ այս է Բ. Դրան տեսակէտը և մտադրութիւնը»:⁴⁶ Նա նաև ասել էր, որ այս համաձայնագիրը գործնականում պատվաստվելու էր կայսրության նահանգների վարչարարության մասին ընդհանուր օրենքի վրա:



Ընդ որում, այդ օրենքում մեծ տեղ էր հատկացված ապակենտրոնացման սկզբունքին: Դրանով նախատեսվում էր ընդլայնել գավառների տեղական մարմինների իրավասությունները՝ ճանաչելով դրանցում բնակվող տարբեր ազգերի իրավունքների հավասարությունը:⁴⁷ Այս հողվածն ընթերցողները, հավանաբար, կարող էին եզրակացնել, որ ամեն ինչ կրկին հանգելու էր ոչ միայն հայաբնակ նահանգներում, այլև երկրի ողջ տարածքում իրականացվելիք բարեփոխումների կառավարական ծրագրին: Երբ հայ հանրության տարբեր շերտերի ներկայացուցիչներն այս ամենը համադրում էին թերթերում տպագրվող հայերին հողագրկելու, ունեզրկելու, սպանելու, առաջիկա խորհրդարանական ընտրություններում հայ պատգամավորների թվաքանակը նվազեցնելուն միտված անօրինական փաստերի⁴⁸ հետ, պատկերն առավել քան խոսուն էր լինում:

Ամփոփելով՝ կարելի է փաստել հետևյալը: «Ազատամարտ» և «Ժամանակ» օրաթերթերում չկար այն հարցի պատասխանը, թե ո՞րն էր լինելու հայ քաղաքական ու մտավորական էլիտայի քայլերի համախումբը, եթե իշխանությունները չկատարեին համաձայնագրում ամրագրված կետերը: Առաջին աշխարհամարտի սկզբնական շրջանում Օսմանյան կայսրությունում հաստատված խիստ գրաքննությամբ էր պայմանավորված «Ժամանակի» և «Ազատամարտի» կողմից այս համաձայնագրից հրաժարվելու փաստին, իսկ հետագայում նաև հայոց տեղահանությանն ու կոտորածներին չանդրադառնալը: Պարտադրված հարաբերական լռության պայմաններում հրատարակվող «Ժամանակ» օրաթերթը միայն 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարից⁴⁹ հետո կարողացավ օբյեկտիվորեն և անաչառ կերպով պատկերացում տալ Օսմանյան կայսրությունում հայերի հանդեպ իրականացված հայակործան քաղաքականության մասին: Եթե եվրոպական մեծ տերություններից յուրաքանչյուրը, Հայկական հարցի շահարկմամբ, ինչ-որ տեղ սպառնում էր Օսմանյան կայսրության ամբողջականությանը, ապա ինչպես «Ազատամարտի» և «Ժամանակի» էջերում գետեղված նյութերն էին վկայում, արևմտահայության նպատակները զուտ նրանց կենսապահովմանն ու ազգային դիմագծի պահպանմանն էին

վերաբերում: Այդ մասին Պողոս Նուբարն ահա թե ինչ էր գրել «Թայմս» թերթի տնօրենին ուղարկած իր նամակում, որը տպագրվել էր «Ազատամարտ» օրաթերթում. «Հայկական գաւառներու ժողովուրդները, մերժելով անջատման կամ ինքնավարութեան ամէն մտածում, կ'ուզեն միայն օսմանցիներ մնալ, բաւ է որ Պերլինի դաշնագրով պայմանաւորուած բարենորոգումներու գործադրութեամբ, վերջ մը դրուի աւագակային արարքներու, սպանութիւններու և հողային գրաւումներու, որոնց ենթակայ էին երկար տարիներէ ի վեր, և այս կերպով երաշխաւորուին ապահովութիւն ու արդարութիւնը, որոնք միայն կրնան թոյլ տալ իրենց աշխատիլ և ապրիլ խաղաղութեան մէջ»:⁵⁰ Իթիպիատի պաշտոնական մամուլի օրգան համարվող «Թերմենսը հագիգաթ» թերթը գրում էր, որ Արևելյան Անատոլիայում (Արևմտյան Հայաստանում) բնակվում էին ամենից վտանգավոր ավագակներ, իսկ տեղաբնակ քրդերի ու հայերի միջև առաջացած անիմաստ խնդիրները միշտ «օտար ազդեցութեամբ խոշորացում» էին:⁵¹ Երիտթուրքական կառավարությունը իր պետության տարածքային ամբողջականությունը, ինքնուրույնությունը պահպանելու, ազգային ներքին հարցերը յուրովի լուծելու և օտար պետությունների միջամտությունը կանխելու նպատակով որոշեց լուծել Հայկական հարցը՝ դատարկելով հայերից նրանց բնօրրան հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը: Երիտթուրքերին հաջորդած Քեմալական իշխանություններն իրենց հերթին ընդունեցին որոշումներ, որոնցով արգելեցին Առաջին աշխարհամարտի տարիներին տեղահանված, կոտորածներից փրկված արևմտահայերին վերադառնալ հայրենի եզերք:⁵²

Հղումներ

- 1 Հայոց պատմություն 2015, 150:
- 2 Հայ ժողովրդի պատմություն 1981, 773:
- 3 Հայոց պատմություն 2015, 491:
- 4 Հայ ժողովրդի պատմություն 1981, 770:
- 5 «Ժամանակ», №1329, 1913 («Մինչև հիմա որո՞ն ապաստանած է հայը»):
- 6 «Ազդակ», №1094, 1912 («Հայ դպրոցներուն պետական վճարը կջնջվի»): (Թուրքական գրաքննության պատճառով «Ազատամարտը» տարբեր անուններով էր հրատարակվել, որոնցից մեկն էլ «Ազդակն» էր-Մ.Հ.):
- 7 «Ազատամարտ», №482, 1911 («Գահավեժ քաղաքականություն»):
- 8 «Ժամանակ», №1330, 1913 («Հին թուրքերը, նոր թուրքերը»):
- 9 Նույն տեղում:
- 10 Նույն տեղում:
- 11 Նույն տեղում:
- 12 «Ժամանակ», №1346, 1913 («Հայերը Թուրքիո մեջ. Հայաստան և Թուրքիա»):
- 13 «Ժամանակ», №1327, 1913 («Ժամանակ», «Հայերը և «Թերմինս»-ը հագիգաթ»):
- 14 «Ժամանակ», №1665, 1913 («Տեսակցություն մը տորք. Պ. Շաքիր բեյի հետ»):
- 15 Նույն տեղում:
- 16 «Ժամանակ», №1328, 1913 («Հայերը և քրդերը»):
- 17 «Ժամանակ», №1328, 1913 («Ժամանակ»):
- 18 «Բյութանիա», № 1062, 1912 («Ո՞վ է երկրի թշնամին»):
- 19 «Առաջամարտ», № 1077, 1912 («Արևելյան Անատոլիո բարենորոգումների խնդիրը»):
- 20 «Առաջամարտ», № 1078, 1912 («Ո՞րն է ճիշտ, որը՝ ոչ»):
- 21 «Առաջամարտ», № 1085, 1912 («Ո՞րն է էական պահանջը հայկական նահանգներու բարեկարգության համար»):

- 22 Հայ ժողովրդի պատմություն 1981, 522-524, 527:
- 23 Նույն տեղում, էջ 533-534:
- 24 Հայոց պատմություն 2015, 144-145:
- 25 Հայոց պատմություն 2015, 145:
- 26 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923) 1972, 339-342:
- 27 Հայ ժողովրդի պատմություն 1981, 520-522:
- 28 Խառատյան 2015, 10-11:
- 29 Հոկտեմբեր 2016, 211:
- 30 «Ժամանակ» օրաթերթը լույս է տեսել Կ.Պոլսում 1908 թվականից: Այն հրատարակվում է մինչ օրս: Այս հոդվածի շրջանակում նկատի ենք ունեցել պարբերականի 1908-1915 թթ. հրատարակումները-Մ.Հ.:
- 31 Խառատյան 2015, 242:
- 32 Հոկտեմբեր 2003, 44-45:
- 33 «Ժամանակ», №1846, 1914 («Հայաստանի բարենորոգմանը շուրջ», «Հայաստանի ընդհանուր քննիչ Հոֆ բեյ կայցելե սրբազան պատրիարքին»):
- 34 «Ժամանակ», №1881, 1914 («Գրաքննության շուրջ»):
- 35 «Ժամանակ», №1854, 1914 («Ընդհանուր քննիչները դեռ հոս են»):
- 36 «Ժամանակ», №1856, 1914 («Հայաստանի ընդհանուր քննիչները»):
- 37 Հայոց պատմություն 2015, 147:
- 38 «Ազատամարտ», №1603, 1914 («Թալեթ բեյի հայտարարությունը կապիտուլյացիոններու ջնջման մասին»):
- 39 «Ազատամարտ», №1546, 1914 («Հռոտենները»):
- 40 «Ազատամարտ», №1544, 1914 («Ամփոփում»):
- 41 Նույն տեղում
- 42 «Ազատամարտ», №1510, 1914 («Հայաստանի բարենորոգումները և կառավարությունը»):
- 43 «Ազատամարտ», №1494, 1914 («Ո՞վ պիտի լինի քննիչների սեզուկը»):
- 44 Նույն տեղում
- 45 Նույն տեղում
- 46 «Ազատամարտ», №1435, 1914 («Հայկական բարենորոգումներու մասին Թուրքիո տեսակետը»):
- 47 «Ազատամարտ», №1435, 1914 («Հայկական բարենորոգումներու մասին Թուրքիո տեսակետը»):
- 48 «Ազատամարտ», №1435, 1914 («Հայերը վերջնական պատասխան կուզեն ընտրությանց մասին»):
- 49 Թուրքիայի Հանրապետության պատմություն 2014, 13:
- 50 «Ազատամարտ» №1437 («Բարենորոգումներու շուրջ Պողոս Նուբար փաշայի նամակը՝ «Թայմզին» ուղղված»):
- 51 Ազատամարտ» №1496 («Արևելյան Անատոլիո բարենորոգումները»):
- 52 Թուրքիայի Հանրապետության պատմություն 2014, էջ 78:

Օգտագործված գրականության ցանկ

- 1 Թուրքիայի Հանրապետության պատմություն, Ե., 2014, ԵՊՀ հրատ., 396 էջ:
- 2 Խառատյան Ա., Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին (1900-1920), Ե., ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատ., 2015, 534 էջ:
- 3 Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Ե., ԳԱ հրատ., 1981, 1051 էջ:
- 4 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ե., 1972, «Հայաստան» հրատ., 810 էջ:
- 5 Հայոց պատմություն, հ. 3, գ. 2, Ե., «Զանգակ» հրատ., 2015, 759 էջ:
- 6 Հոկտեմբերյան Մ., Արևմտահայության կոտորածները և «Մշակ» օրաթերթը (1915 թ.), էջ 136-151 («Մշակը» պատմության զուգահեռականներում: Միջազգային գիտաժողով նվիրված «Մշակի» հիմնադրման 150-ամյակին», Ե., 2024, ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատ., 573 էջ):
- 7 Հոկտեմբերյան Մ., Կ.Պոլսի ՀՀԴ մամուլը ազգային-ազատագրության ջանակի 1909-1915, Ե., 2003, 108 էջ:
- 8 Հոկտեմբերյան Մ., ՀՅԴ կուսակցական և համակիր պարբերական մամուլը Օսմանյան Թուրքիայում 1909-1915 թթ. և 1918-1923 թթ., Ե., 2016, ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատ., 310 էջ:

Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը որպես քաղաքական զարթոնքի և ազգային հիշողության վկայություն

Անի Մելքոնյան
Պատմաբան

Սկսած 1999 թվականից, յուրաքանչյուր տարի հազարավոր հայեր՝ ապրիլի 24-ի նախորդ օրը Ջահերով երթ են իրականացնում դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ էլ դիմավորում են ապրիլի 24-ը:

Ջահերթին մասնակցում են հայեր՝ տարբեր երկրներից, տարբեր քաղաքական հայացքների, նախասիրությունների և աշխարհընկալումների տեր, քանզի դժվար է գտնել մի հայ, ով ցեղասպանության ողբերգությանը չի առնչվել: Ցեղասպանությունը ամենակոլ երախի մեջ առավ նաև Արևելյան Հայաստանը, ուստի այն աշխարհի բոլոր հայերին միավորող ցավն է ու նաև պահանջատիրությունը: Գոնե այդպես թվում էր մինչև, այսպես կոչված, «թավշյա հեղափոխությունը», որի դերակատարները նույնիսկ այս զգայուն հարցում են փորձում միանացից բաժանել հայությանը, այն հայերին, ովքեր ցեղասպանության փաստի և հիշատակման ու ճանաչման հարցում միակամ էին նույնիսկ խորհրդային ամբողջատիրական վարչակարգի տարիներին:

Դրա վաղ վկայությունը 1965 թ. Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցին սկսված ազգային զարթոնքն էր, երբ հազարավոր հայեր ցույց տվեցին, որ, անկախ ժամանակներից ու վարչակազմերից, ցեղասպանության զոհերն ու խլված հայրենիքն իրենց հիշողության մեջ են. «Այդ օրը ժայթքեց հիսուն տարիների լռության պայմաններում հայ ժողովրդի կուտակված ցատումը՝ ուղղված խորհրդային իշխանություններին և համայն մարդկությանը: Այս ցույցերը խորհրդային երկրի պատմության մեջ ժողովրդի կամքի ու վճռականության արտահայտման աննախադեպ իրադարձություն էին: Ու թեև ցուցարարներից շատերը ձերբակալվեցին, այնուամենայնիվ, 1965 թ. ապրիլի 24-ին սկիզբ առած հոգևոր զարթոնքը հետագայում իր զարգացումն ապրեց Սփյուռքի տարբեր գաղթօջախներում կազմակերպված բողոքի բազմաթիվ ցույցերով և 1988-ին՝ Արցախյան ազգային ազատագրական շարժմամբ»:¹

Եվ այդ հիշողության լուռ վկան է 1967 թ. Ծիծեռնակաբերդի բարձունքում վեր խոյացող *Հայոց ցեղասպանության զոհերի հիշարակը հավերժացնող հուշակոթողը*:

Հայոց ցեղասպանության 50-ամյակի ոգեկոչման և զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրի կառուցման գաղափարը Յակով Զարոբյանի մեջ հաստատացել էր 1965 թվականից դեռ շատ առաջ: Նման ծրագրերի մասին նա մասնավորապես հայտնել էր լիբանանահայ գրող և հասարակական գործիչ Անդրանիկ Ծառուկյանի հետ 1962 թ. սկզբին տեղի ունեցած հանդիպման ժամանակ:²




1967 թ. նոյեմբերի 29-ին տեղի ունեցավ հուշահամալիրի բացումը, որը հանրապետությունում դարձավ նշանակալից հասարակական-քաղաքական իրադարձություն:

«Երեք կոթողից բաղկացած հուշահամալիրը զբաղեցնում է 4500 քմ տարածք: Չափս կողմից ձգվում է 100 մ երկարությամբ հուշապատը, կենտրոնում գտնվում է 30 մ տրամագծով հավերժության տաճարը՝ դեպի կենտրոն խոնարհված 12 հսկա բազալտե մույթերով: Այցելուներին դեպի տաճարի սրահը և հավերժական ջահն են տանում հարթակից իջնող անսովոր բարձր աստիճանները, որոնք կարծես պարտադրում են խոնարհվել Եղեռնի զոհերի հիշատակի առջև: Քիչ հեռու վեր է խոյանում 40 մ բարձրությամբ «Վերածնվող Հայաստան» հուշայունը՝ խորհրդանշելով հայ ժողովրդի վերածննդի գաղափարը»:³

Հուշարձանի կառուցումից հետո մոռացությունից հետ բերվեց հայոց ցեղասպանության պատմությունը:

Պատահական չէր Վազգեն Ա. Վեհափառի խոսքը. «Երևանը մեզ համար ոչ միայն սովորական իմաստով մեր հայրենիքի մայրաքաղաքն է, այլև խորհրդանշում է երկրի և մեր ժողովրդի վերածնունդը: Պատահական չէ, որ մենք մեր հյուրերի հետ այսօր քիչ առաջ եղանք Եղեռնի հուշարձանի մոտ, աղոթելու մեր նահատակների հոգիների համար: Եղեռնի հուշարձանը հիշեցնում է մեզ մեր ժողովրդի նահատակությունը 1915 թվականին: Բայց Եղեռնի հուշարձանի բարձունքից իջնելով, տեսնում ենք այսօրվա Երևանը՝ մայրաքաղաքը վերածնված Հայաստանի...»:⁷



1968 թվականից սկսած՝ ամեն տարի ապրիլի 24-ին հայրուրիագարավոր մարդիկ այցելում են Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու անմեղ զոհերի հիշատակին: Տարվա ընթացքում հուշահամալիր է այցելում մի քանի հարյուր հազար մարդ, այդ թվում՝ սփյուռքի ներկայացուցիչները, ինչպես նաև պաշտոնական պատվիրակություններ աշխարհի տարբեր երկրներից:

Աշխարհասփյուռ հայության համար ուխտատեղի դարձած Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը, 2015 թ. Հայոց ցեղասպանության զոհերի սրբադասումից հետո, դարձավ նաև ուխտավայր, բայց նրա նշանակությունն ու կարգավիճակն անգամ գործող իշխանություններին զերծ չպահեցին հուշահամալիրի դերն ու նշանակությունը նվաստացնելուն ուղղված քայլերից:

Հուշահամալիրի շնորհիվ Հայոց ցեղասպանության հարցը դադարեց միայն մտավորականության և սփյուռքի խնդիրը լինելուց՝ դառնալով համազգային հիմնահարց և պետական քաղաքականություն: Սկսած անցյալ դարի երկրորդ կեսից՝ փոխվեց օտարերկրյա պետությունների և միջազգային բազմաթիվ հեղինակավոր կառույցների վերաբերմունքը հայերի ցեղասպանության հարցի հանդեպ: Բազմաթիվ պետություններ և միջազգային կառույցներ ճանաչեցին և դատապարտեցին հայերի ցեղասպանությունը:

Ահա թե ինչու հայության համար Ծիծեռնակաբերդի հուշահամալիրն ազգային հիշողության ու միասնության խորհրդանիշ է, մինչդեռ փաշինյանական իշխանության համար, հատկապես նախընտրական շրջանում՝ քարոզչամիջոց:

Հայոց ցեղասպանության և ազգային ինքնության դեմ արշավում՝ նախ, հայտարարվեց, որ «Կորոնավիրուսի համաճարակի հետ կապված՝ Հայոց ցեղասպանության 105-րդ տարելիցին՝ 2020 թ. ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի մուտքը փակ կլինի բոլոր այցելուների համար: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ այդ մասին մամուլի ատուլիսին ասաց ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Էդուարդ Աղաջանյանը»:⁴

Կորոնավիրուսի պատճառաբանությամբ արգելվեցին ջահերթն ու ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր բնակչության հոսքը:

Այնուհետև, 2025-ի վերջերին, հայտարարվեց հուշահամալիրի իբր վերանորոգման մասին, սակայն ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Լիլիթ Գալստյանը Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում ընթացող շինարարական աշխատանքները որակել է որպես վանդալիզմ՝ ընդգծելով, որ աշխատանքների որակը խիստ ցածր է. «Այդ ոչ որակյալ կազմակերպվածության և ոչ որակյալ ընթացակարգերի հետևանքով վնաս է հասցվել նաև հանրային բյուջեին, քանի որ պետությունը հիմա գնում է սխալների ուղղման ճանապարհով: 750 միլիոն դրամ արժողությամբ աշխատանքների գոնե մի մասը կատարվել է ոչ արդյունավետ՝ վերածվելով խոտանի: Դուք նշեցիք, որ ամեն շաբաթ այցելում եք Ծիծեռնակաբերդ, սակայն Ձեր ստուգումները վարչարարի են, ոչ թե մասնագիտական վերահսկողության բնույթ ունեն: Մա ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ մշակութային ժառանգության վերականգնման գործընթացներում անհրաժեշտ են հավելյալ լիցենզիաներ և տեսչական վերահսկողություն, որպեսզի նման սխալները չկրկնվեն: Նույնիսկ մարդ իր անձնական ախոռի նորոգման դեպքում այսպիսի անորակ աշխատանք չէր կազմակերպի: Այստեղ մանիպուլյացիա չկա. մեր բոլորի անհանգստությունը բխում է հանրապետական ու համազգային նշանակության սրբավայրի պատշաճ վերականգնման մտահոգությունից»:⁵

Հուշահամալիրի անբարեկարգ վիճակի, և հնարավոր փակման մասին աղմուկը ստիպեց ԿԳՄՄՆ-ին հայտարարել. «Այս փուլում մաքրման աշխատանքներ են տարվում, որոնք նույնպես կավարտվեն Հայոց ցեղասպանության 111-րդ տարելիցին ընդառաջ»:⁶

Ապրիլի 18-ին քարոզչական նպատակներով Ծիծեռնակաբերդի հուշահամալիր այցելած Փաշինյանը հայտարարեց, թե այն իբր 60 տարվա ընթացքում չէր վերանորոգվել, իրականությունը, սակայն այլ է. «Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող Ծիծեռնակաբերդի հուշահամալիրն իր պատմության 60 տարիներին մի քանի անգամ է նորոգվել և բարեկարգվել: Հուշահամալիրը հիմնա-նորոգվել է 2003-ին՝ Ցեղասպանության 90-րդ տարելիցի շրջանակներում՝ ԼԻՆՄԻ հիմնադրամի միջոցներով: Փոխվել են քարեր, հիմնովին արդիականացվել

է բունկերը, ավագն շիթով ամբողջությամբ մաքրվել է հուշարձանը, հիմնովին փոխվել է ռոտման ցանցը և նոր լուսավորություն է մոնտաժվել, փոխվել են եզրաքարերը, իրականացվել է լայնածավալ ծառատունկ, տեղադրվել է ձայնային հեռարձակման ցանց, վերանորոգվել են աստիճանները, փոխվել է քայլուղին: Ի դեպ, 22 տարի առաջ, ի տարբերություն ներկա վերանորոգման խայտառակ ընթացքին, Լինսի հիմնադրամի աջակցությամբ իրականացված հուշահամալիրի վերանորոգման ընթացքում պահպանվել են բոլոր, այդ թվում՝ քաղաքաշինական, ճարտարապետական և պատմամշակութային ընթացակարգերը:

Հուշահամալիրը վերանորոգվել է նաև Ցեղասպանության 100-ամյա տարելիցի շրջանակներում, երբ Ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումն արտաքին քաղաքական օրակարգի մաս էր, և աշխարհի 80-ից ավելի երկրների ներկայացուցիչներ պիտի այցելեին Հուշահամալիր՝ խնկարկելու գոհերի հիշատակն ու դատապարտելու Ցեղասպանությունը՝ որպես անանց հանցագործություն: 1995 թ. ապրիլի 24-ին՝ Ցեղասպանության 80-ամյա տարելիցի շրջանակում բացվել է Հայոց Ցեղասպանության թագարան-ինստիտուտը՝ կազմելով Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակին նվիրված հուշակոթողի չորրորդ բաղկացուցիչ մասը»:⁷

Անփոփելով, կարող ենք ասել, որ աշխարհասփյուռ հայությանը միավորող, և Երևանի ու Հայաստանի բնակչությանը ամեն օր՝ *ազգային մեծ դարի մասին* հիշեցնող հուշահամալիրը սովորական և հերթական կառույց չէ:



Ծիծեռնակաբերդը մարմնավորում է պատմական անարդարության փաստը:

Հուշահամալիրի շնորհիվ Հայոց ցեղասպանության հարցը դադարեց միայն մտավորականության և սփյուռքի խնդիրը լինելուց՝ դառնալով համազգային խնդիր և պետական քաղաքականություն: Սկսած անցյալ դարի երկրորդ կեսից՝ փոխվեց օտարերկրյա պետությունների և միջազգային բազմաթիվ հեղինակավոր կառույցների վերաբերմունքը հայերի ցեղասպանության հարցի հանդեպ: Բազմաթիվ պետություններ և միջազգային կառույցներ ճանաչեցին և դատապարտեցին հայերի ցեղասպանությունը:⁸

Եվ, որքան էլ փաշինյանական կառավարությունն այսօր ջանքեր թափի Հայոց ցեղասպանության փաստն անտեսելու, մոռացության մատնելու կամ աղճատելու, Ծիծեռնակաբերդի հուշահամալիրն իր գոյությամբ միշտ հիշեցնելու է, իրականության ու հայ ժողովրդի պահանջատիրության մասին, որն ուղեցույց փարոս պետք է դառնա նաև հայության հետագա սերունդների համար թե՛ Հայաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս: Հակառակ դեպքում հայ ժողովուրդը կկանգնի ևս մեկ ցեղասպանության առջև, որն ամեն օր նրան մոտեցնում է Փաշինյանն իր պանթյորքիստական քաղաքականությամբ: ■



Ծանոթագրություններ

- <https://www.yzu.am/news/YSU-at-the-time-of-national-liberation-struggle>
- https://genocide-museum.am/arm/Description_and_history.php
- <https://armheritage.am/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81-%D6%81%D5%A5%D5%B2%D5%A1%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A6%D5%B8%D5%B0%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B0%D5%B8%D6%82%D5%B7%D5%A1%D5%B0%D5%A1/>
- <https://armenpress.am/hy/article/1012921>
- <https://www.pastinfo.am/hy/news/2025/11/04/%D5%B0%D5%B8%D6%82%D5%B7%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AC%D5%AB%D6%80%D5%A878888/1948779>
- <https://www.aravot.am/2026/04/19/1551019/>
- <https://yhm.am/archives/906>
- Նույն տեղում:

1992 թվականի ապրիլի 10-ի Մարաղայի ոճրագործությունը

Մարի Հովհաննիսյան
Քաղաքագիտության մագիստրոս

«Ժամանակակից Գողգոթա». այսպես բնութագրեց բարոնուհի Քերոլայն Քոքսը 1992 թվականի ապրիլի 10-ին Արցախի Մարտակերտի շրջանի Մարաղա գյուղում հայության դեմ ադրբեջանական զինված ուժերի իրագործած ոճրագործությունը: Ոճրագործություն, պատերազմական հանցագործություն, մարդկության դեմ իրագործված հանցագործություն, էթնիկ զտում, թե՛ ցեղասպանություն, որ իրավական եզրույթն է ճշգրիտ կերպով և իրավացիորեն բնութագրում Մարաղայում հայության դեմ իրագործված վայրագությունները: 34 տարի անց այս հարցերը դեռևս մնում են առկախ, ոճրագործությունը՝ անպատիժ, վերքերը՝ չսպիացած:

Միջազգային տարբեր կառույցներ ներկայացնող փորձագետների կողմից կոտորածից ժամեր անց հավաքագրած փաստերի, ակնատեսների ու վերապրողների փոխանցած տեղեկությունների համադրմամբ մեկ իրողություն պարզ է դառնում. Մարաղայում տեղի ունեցածը ոչ պատահական ռազմական բախման արդյունք էր, ոչ էլ տարերայնորեն հավաքված զինված ամբոխի չարագործություն: Մարաղա գյուղի հայության կոտորածն ադրբեջանական պետական քաղաքականության շարունակություն էր, որը սկիզբ էր առել դեռևս 1900-ականներին և շարունակվել Սումգայիթում, Բաքվում, Գանձակում, Արցախի մի շարք այլ բնակավայրերում:

Մարաղայի հիմնադրումը, բնակավայրի ռազմավարական նշանակությունն ու ժողովրդագրությունը

Մարաղան (նախկինում՝ Լենինավան) գտնվում է Արցախի հյուսիս-արևելյան մասում և տարածաշրջանի ամենախոշոր ու բարգավաճ բնակավայրերից մեկն էր: Գյուղն ուներ ռազմավարական դիրք, ինչի պատճառով էլ դարձել էր Ադրբեջանի զավթողական քաղաքականության թիրախներից մեկը:

Մարաղա գյուղը հիմնադրվել է 1828 թվականին՝ ռուս-պարսկական պատերազմից հետո Թուրքմենչայի պայմանագրի արդյունքում Պարսկաստանի նույնանուն քաղաքից գաղթած հայերի կողմից:¹ Այս վերաբնակեցման 150-ամյակի առթիվ 1978 թվականին գյուղում կանգնեցվել էր «Մարաղա-150» հուշարձանը: Հետագայում ադրբեջանական ուժերի կողմից հուշարձանի հիմնահատակ ավերումը հետապնդում էր հստակ նպատակ՝ տարածաշրջանից վերացնել հայկական պատմական ներկայության փաստացի ապացույցները և ջնջել հավաքական հիշողությունը:²

Խորհրդային տարիներին Մարաղան վերանվանվել էր Լենինավան և ստացել քաղաքատիպ ավանի կարգավիճակ: Այն ուներ հզոր տնտեսություն,



ներառյալ խաղողի վերամշակման գործարան և գիտահետազոտական կայաններ:³ Մինչև 1992 թվականի ողբերգական իրադարձությունները, բնակավայրի բնակչությունը կազմում էր շուրջ 5.000 մարդ:⁴

Հատկանշական է, որ 1988-1990 թվականներին գյուղում ապաստան էին գտել հարյուրավոր հայ փախստականներ, ովքեր մագապուրծ էին եղել Սումգայիթի, Բաքվի և Ադրբեջանի այլ բնակավայրերի ջարդերից: Սա նշանակում է, որ Մարաղայի բնակչությունը կրկնակի թիրախավորված էր. նրանք թե՛ տեղաբնիկ հայեր էին և թե՛ նախորդ ոճիրներից փրկվածներ, ինչն էլ ավելի է ընդգծում 1992 թ. ապրիլին ադրբեջանական կողմի իրականացրած գործողությունների ցեղասպանական բնույթն ու շարունակականությունը:⁵

Ռազմաքաղաքական իրավիճակն Արցախում 1991-1992 թվականներին

Ադրբեջանը, մերժելով Արցախի ժողովրդի ինքնորոշման օրինական պահանջը և 1991 թ. դեկտեմբերի 10-ի անկախության հանրաքվեի արդյունքները, անցավ զանգվածային էթնիկ զտումների:⁶ Մարաղան, լինելով Մարտակերտի շրջանի «հյուսիսային դարպասը», ուներ առանցքային ռազմավարական նշանակություն. դրա անկումը ճանապարհ էր բացում



Մարաղայի կոտորածները

աղբբեջանական զինուժի համար դեպի շրջկենտրոն և Մտեփանակերտ:⁷

1991 թվականի ընթացքում իրականացված «Օղակ» գործողությունը և դրան հաջորդող հարձակումները հետապնդում էին սահմանամերձ հայկական բնակավայրերի հայաթափման հստակ նպատակ: Մարաղան գտնվում էր մշտական հրետակոծության տակ, սակայն 1992 թ. ապրիլի 10-ի հարձակումն առանձնացավ իր կազմակերպվածությամբ, ներգրավված ուժերի քանակով և ցուցաբերված ծայրահեղ դաժանությամբ:

1992 թվականի ապրիլի 10-ի վաղ առավոտյան Աղբբեջանի պաշտպանության նախարարության, ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) և ՆԳՆ միլիցիայի հատուկ նշանակության ջոկատի (ՕՄՕՆ) զինված ստորաբաժանումները Թարթառից սկսեցին Մարաղայի գանգվածային հրետակոծությունը: Հրետակոծությունից հետո բնակավայր ներխուժեց շուրջ 20 միավոր զրահատեխնիկա:⁸ Օգտագործվում էր ծանր զրահատեխնիկա՝ «Գրադ» կոչվող համագարկային կրակի ռեակտիվ համակարգ, տանկեր:⁹

Հայկական ինքնապաշտպանական ջոկատները, ունենալով խիստ սահմանափակ ռեսուրսներ, փորձեցին դիմադրել, սակայն հակառակորդի զրահատեխնիկայի և կենդանի ուժի ճնշող գերակայությունը ստիպեց նրանց նահանջել դեպի մոտակա բարձունքները: Նահանջի ընթացքում ինքնապաշտպանական ուժերը փորձել են կազմակերպել բնակչության շտապ տարահանումը: Չնայած բնակիչների մեծ մասին հաջողվել է հեռանալ, շուրջ 118 մարդ՝ հիմնականում տարեցներ, հաշմանդամներ, կանայք և երեխաներ, մնացել են գյուղում՝ պատսպարվելով նկուղներում և ստորգետնյա ապաստարաններում: Հենց այս խոցելի խումբն էլ դարձավ աղբբեջանական ստորաբաժանումների և նրանց հետևող կողոպտիչների կողմից իրականացված կանխամտածված վայրագությունների թիրախը:¹⁰



Նոր Մարաղա

Վայրագությունների իրականացման մեթոդաբանությունը. ականատեսների վկայությունները և միջազգային դիտորդների զեկույցները

Մարաղայում տեղի ունեցած վայրագություններն իրենց դաժանությամբ դուրս էին մարդկային երևակայության սահմաններից և պատերազմական գործողությունների որևէ տրամաբանությունից: Արձանագրվել են խաղաղ բնակչության գանգվածային գլխատումներ՝ իրականացված տղոցներով և սառը զենքերով, ընդ որում, թիրախում են եղել հիմնականում անպաշտպան կանայք ու տարեցներ: Ոճրագործությունն ուղեկցվել է բնակիչների ողջակիզումներով և տների հրկիզմամբ, որտեղ մարդիկ փորձել էին թաքնվել հարձակումից: Առանձնակի դաժանություն է դրսևորվել խոշտանգումների ընթացքում. զոհերին կապել են տանկերից և քարշտվել գյուղի փողոցներով, ենթարկել մաշկազերծման ու անդամահատումների: Վայրագությունները չեն սահմանափակվել միայն կենդանի մարդկանցով. հակառակորդը պղծել է սպանվածների մարմինները՝ նաև մահից հետո՝ ցուցադրելով քաղաքացիական բնակչության նկատմամբ տաժաժ բացահայտ ատելությունն ու բնաջնջման նպատակադրումը:

Մարաղայում իրականացված վայրագությունների համակարգված բնույթը հաստատվում է թե՛ ականատես-վերապրողների, թե՛ միջազգային անկախ դիտորդների, և թե՛ հետագա ազգագրական ու փաստագրական հետազոտությունների միջոցով:

Ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարի օգնական Վլադիկ Ավագյանը պատմում է, որ գյուղի գրավումն իրականացվել է տարբեր տեսակի հրետանային միջոցների, «Գրադ» կայանքների և տանկերի ինտենսիվ կիրառմամբ: Զրահատեխնիկայի ներխուժմանը հաջորդել են աղբբեջանական ՕՄՕՆ-ականների և թալանչիների մեծաթիվ խմբերի գործողությունները, որոնք չեն խնայել ոչ ոքի. «Իրենց ճանապարհին ով պատահում էր՝ ծեր, երեխա, կին...

բոլորին մորթում էին, իսկ երեխաներին գերի տանում»:¹¹

Մարաղայի կոտորածից հրաշքով փրկված Վալյա Խաչիկյանը մանրամասներ է ներկայացրել հարձակման ժամանակագրության և ուժգնության մասին. «Ապրիլի 9-ին, երեկոյան մոտավորապես ժամը վեցին սկսվեց գյուղի ումբակոծումը, ինչին արդեն վաղուց սովորել էինք: Կրակում էին Ալազանից, թնդանոթներից, խոշոր գնդացիներից: Այդ ժամանակ ամուսնուս հետ գտնվում էինք նկուղում, ուր ապրում էինք գրեթե երեք տարի: Ապրիլի 10-ի առավոտյան ժամը 6-ի մոտ սկսվեց փոթորկալից գնդակոծություն. արկերը պայթում էին գրեթե ամեն վայրկյան: Գյուղի վրա 3000-ից ավելի արկ է պայթել: Այդպես շարունակվեց մինչև ժամը 14-ին մոտ: Այդ ժամանակ տեղեկացանք, որ ադրբեջանցիներն արդեն գյուղ են մտել: Բոլոր նրանք, ովքեր չկարողացան լքել գյուղը, մորթվեցին, այրվեցին կամ գերևարվեցին: Իսկ փախչողներին դժոխային ճանապարհ էր սպասում ումբակոծությունների ներքո...»:¹² Բրիտանացի բարոնուհի Քերոլայն Քոքսը, ով «Քրիստոնեական համերաշխության միջազգային կազմակերպության» (CSI) հետ ժամանել էր Մարաղա, հարձակման հաջորդ օրը նկարագրում է տեսածը որպես սարսափազդու տեսարան. «Մենք տեսանք դեռևս ծխացող տներ, գլխատված մարմիններ, մարդկային մնացորդներ և շոկի մեջ գտնվող վերապրածներ: Մի կին պատմում էր, թե ինչպես են իր աչքի առաջ սողոցով գլխատել որդուն»:¹³ Այս սարսափազդու վկայությունները հետագայում լրացվեցին և վերահաստատվեցին գիտական հետազոտությունների միջոցով: Ազգագրագետ Թ. Հայրապետյանը 2009 թվականին Նոր Մարաղայում իրականացված դաշտային աշխատանքների ընթացքում փաստագրել է վերապրածների հիշողությունները, որոնք բացահայտում են ադրբեջանական գերության մեջ հայտնվածների նկատմամբ ցուցաբերված անմարդկային վերաբերմունքը: Յոթամիս պատանդառության մեջ գտնված Ժենյա Ղազարյանը (ծնվ. 1935 թ., պատանդ է եղել ապրիլի 10-ից մինչև նոյեմբերի 7-ը ներառյալ) Թ. Հայրապետյանին պատմել է Մովսիսյան ամուսինների ողբերգական ճակատագրի մասին. «Պատանդների թվում էին Ռազմիկ Երվանդի Մովսիսյանը և Սվետա Մուրենի Մովսիսյանը: Միբրաշիրի (*Թեր-Թեր՝ Մ.Հ.*) բանտի պետի տեղակալը նրանց պահում էր շան նման. թույլ չէր տալիս ոտքի կանգնել, խոսել: Նրանք շղթայված էին և սնունդ չէին ստանում: Որոշ ժամանակ հետո Սվետային սպանեցին և նրա մտով կերակրում էին մարդկային կերպարանքը կորցրած ամուսնուն, որին հետո նույնպես սպանեցին»:¹⁴

Երկրորդ հարձակումը և վերջնական ավերումը

Մարաղայի ողբերգությունը չսահմանափակվեց ապրիլի 10-ով: Հայկական ուժերին հաջողվեց հաջորդ օրը կարճ ժամանակով ազատագրել գյուղը, ինչը

հնարավորություն տվեց հայտնաբերել և թաղել զոհերին: Սակայն երկու շաբաթ անց ադրբեջանական ուժերը նորից հարձակվեցին, վերջնականապես տեղահանեցին վերադարձած բնակիչներին, կողոպտեցին և հիմնահատակ այրեցին գյուղը:¹⁵ Այս երկրորդ հարձակումը ևս մեկ անգամ ապացուցում է, որ նպատակը ոչ թե ռազմավարական բնագծի գրավումն էր, այլ բնակավայրի և նրա ժողովրդի լիակատար ոչնչացումը:

Վիճակագրական տվյալներ և զոհերի նույնականացում

Մարաղայի ոճրագործության զոհերի վերաբերյալ տվյալները հավաքագրվել են տարբեր իրավապաշտպան կազմակերպությունների և պաշտոնական աղբյուրների կողմից: Թեև թվերը որոշակիորեն տատանվում են, դրանք բոլորը վկայում են զանգվածային սպանությունների մասին:

Մարաղայի ոճրագործության զոհերի վերաբերյալ տվյալները հավաքագրվել են տարբեր իրավապաշտպան կազմակերպությունների և պաշտոնական աղբյուրների կողմից: Ըստ բրիտանացի իրավապաշտպան, բարոնուհի Քերոլայն Քոքսի և Քրիստոնեական համերաշխության միջազգային կազմակերպության տվյալների՝ միայն ապրիլի 10-ի հարձակման հետևանքով զոհվել է առնվազն 45-50 խաղաղ բնակիչ, իսկ ևս 50-ը գերևարվել է:¹⁶ Հետագա հետազոտությունները և Արցախի Հանրապետության պաշտոնական տվյալները հստակեցրին զոհերի թիվը՝ այն հասցնելով 57-ի, որոնց թվում եղել են 9 երեխա և 29 կին: Հետագա երկու շաբաթների ընթացքում և ապրիլի 22-ի երկրորդ հարձակման հետևանքով զոհերի ընդհանուր թիվը գերազանցել է 100-ը:¹⁷

Մարաղայի դեպքերի իրավական որակումը միջազգային իրավունքի լույսի ներքո

Մարաղայի ոճրագործությունը պետք է դիտարկել որպես միջազգային քրեական իրավունքի կոպտագույն խախտում: Այստեղ առկա են միջազգային հանցագործությունների բոլոր երեք հիմնական տեսակների տարրերը՝ պատերազմական հանցագործություններ, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ և ցեղասպանություն:

Պատերազմական հանցագործություններ

Համաձայն Ժնևի 1949 թ. կոնվենցիաների և դրանց 1977 թ. լրացուցիչ արձանագրությունների՝ Մարաղայում տեղի ունեցածը խախտել է հետևյալ սկզբունքները.

- 1. **Տարբերակման սկզբունք.** Ադրբեջանական ուժերը կանխամտածված թիրախավորել են քաղաքացիական անձանց, ովքեր որևէ կերպ չէին մասնակցում ռազմական գործողություններին:
- 2. **Անմարդկային վերաբերմունք և խոշտանգումներ.** Գլխատումները, սղոցների կիրառումը և

մարդկանց ողջ-ողջ այրելը պատերազմի վարման կանոնների ծանրագույն խախտումներ են:

3. **Պատանդառություն.** Քաղաքացիական անձանց, հատկապես կանանց և երեխաներին պատանդ վերցնելը արգելված է միջազգային բոլոր նորմերով:¹⁸

Մարդկության դեմ ուղղված հանցագործություններ

Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածի համաձայն՝ մարդկության դեմ ուղղված հանցագործությունը սահմանվում է որպես քաղաքացիական բնակչության դեմ ուղղված լայնածավալ կամ համակարգված հարձակման մաս: Մարադան հենց այդպիսին էր.

- Այն հաջորդում էր Սումգայիթի և Բաքվի ջարդերին՝ լինելով հայության ոչնչացման ընդհանուր պլանի մաս:
- Հարձակումն իրականացվել է կանոնավոր բանակի կողմից, ինչը նշանակում է պետական կազմակերպվածություն:
- Գործողությունների մեթոդաբանությունը նույնական էր այլ բնակավայրերում իրականացված գտումների հետ:¹⁹

Ցեղասպանական գործողություններ

Թեև «ցեղասպանություն» որակումը պահանջում է «հատուկ մտադրության» (dolus specialis) ապացուցում, Մարադայի դեպքերը փաստում են հայ էթնիկ խմբին, որպես այդպիսին, ոչնչացնելու ցանկությունը: Ադրբեջանական կողմի հետտրաբանությունը և գործողություններն ուղղված էին տարածքը հայերից լիակատար «մաքրելուն», ինչը ցեղասպանական քաղաքականության հիմքն է:²⁰

Պետական պատասխանատվություն և ոճրագործների հերոսացում

Մարադայի ողբերգության ամենացավալի և միջազգային իրավունքի տեսանկյունից ամենախնդրահարույց կողմն Ադրբեջանի պետական վերաբերմունքն է այս ոճրի հարցում: Մարադայի սպանողն իրականացրած «Գուրթուլուշ» գումարտակի իրամանատար Շահին Թալիբ օղլու Թագիևը ոչ միայն չի ենթարկվել պատասխանատվության, այլև 1992 թվականին արժանացել է «Ադրբեջանի ազգային հերոս» բարձրագույն կոչմանը:²¹ Մա պետական մակարդակով ոճրագործության ճանաչում և խրախուսում է:

Այս փաստը վկայում է, որ եղել է պետական հովանավորչություն: Ոճրագործը հերոսացվում է հենց այն գործողությունների համար, որոնք միջազգային իրավունքով համարվում են հանցագործություն: Ոճրագործին հերոսացնելով ձևավորվում է անպատժելիության մշակույթ, ինչը կանաչ լույս է վառում այլ զինծառայողների համար՝ կատարելու նմանատիպ վայրագություններ: Այսօրինակ վերաբերմունքը հանցագործի նկատմամբ հանգեցնում է հայատյացու-



թյան ինստիտուցիոնալացման: Հայերին սպանելը և խոշտանգելը դիտարկվում է որպես «հերոսություն», ինչը դարձել է Ադրբեջանի պետական գաղափարախոսության հիմնաքարը:

Եզրակացություն

Մարադայի կոտորածի համապարփակ վերլուծությունը հիմնավորում է, որ 1992 թ. ապրիլի 10-ի իրադարձությունները սուկ պատերազմական դրվագ չեն, այլ Ադրբեջանի որդեգրած հայատյացության պետական քաղաքականության խտացված արտահայտությունը, որը լիովին համապատասխանում է մարդկության դեմ ուղղված հանցագործության և ցեղասպանական մտադրության միջազգային չափանիշներին: Ոճրագործության իրականացումը կանոնավոր բանակի ստորաբաժանումների կողմից և հանցագործների հետագա պետականորեն հերոսացումը՝ ի դեմս Շահին Թագիևի, հանցագործության ուղղակի սուբյեկտ է դարձնում Ադրբեջանի Հանրապետությանը՝ փաստելով արդյունավետ քննության սկզբունքի համակարգային խախտումը: Միջազգային հանրության կողմից համարժեք իրավական ու քաղաքական գնահատականի բացակայությունը և տասնամյակներ շարունակվող լռությունը ձևավորել են անպատժելիության և ամենաթողության մթնոլորտ, ինչը պատճառահետևանքային ուղիղ կապով



հանգեցրել է նոր ողբերգությունների՝ Ռամիլ Սաֆարովի գործից մինչև 2023 թ. Արցախի ամբողջական հայաթափումը: Ի վերջո, Մարաղան մնում է այն իրավական և բարոյական հանգուցակետը, որի դատապարտման և պատժի անխուսափելիության ապահովման բացակայությունը շարունակում է վտանգել միջազգային իրավակարգի կայունությունը՝ հող նախապատրաստելով տարածաշրջանում նոր ցեղասպանական գործողությունների համար: ■

Հղումներ

¹ Թադևոսյան Թ. Խ., Բարսեղյան Հ. Խ., Մելիք-Բախշյան Ս. Ս., «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բանարան», հտ. 2, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1988, էջ 721 (Լենինավան/Մարաղա բաժինը)

² Cox, C., & Eibner, J. (1993). *Ethnic Cleansing in Progress: War in Nagorno Karabakh*. Zurich; London: Christian Solidarity International (CSI), էջ 46:

³ Թադևոսյան և այլք, նշվ. աշխ., էջ 721:

⁴ Մելքունյան Ս., «Լեռնային Ղարաբաղ», Երևան, «Լոյս» հրատարակչություն, 1990, էջ 254-255:

⁵ Helsinki Watch. (1992). *Bloodshed in the Caucasus: Escalation of the Armed Conflict in Nagorno Karabakh*. New York: Human Rights Watch, էջ 29:

⁶ Տես Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հայտարարությունը Մարաղայի կոտորածի տարելիցի կապակցությամբ, 10 ապրիլի, 2017թ. // «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 11 ապրիլի, 2017 թ., թիվ 67 (6591):

⁷ Բալայան Վ., Արցախյան ազատամարտի պատմություն (1988-1994), Երևան, 2005, էջ 144:

⁸ <https://realkarabakh.com/hy/pogroms/> (հասանելիության ամսաթիվը՝ 20.04.2026):

⁹ <https://armenpress.am/hy/article/1011725> (հասանելիության ամսաթիվը՝ 20.04.2026):

¹⁰ Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, Հանրագիտարան, Երևան, 2004, էջ 463:

¹¹ <https://armenpress.am/hy/article/1011725> (հասանելիության ամսաթիվը՝ 20.04.2026):

¹² https://maragha.org/news_ar.html#m01 (հասանելիության ամսաթիվը՝ 20.04.2026):

¹³ Cox C., Eibner J., նշված աշխատությունը, էջ 45-46:

¹⁴ Հայրապետյան Թ. Լ., Մարաղայի եղեռնագործությունը Ադրբեջանի հայատյաց քաղաքականության համատեքստում (Ականատեսների վկայություններ և հիշողություններ. 1992 թ. ապրիլի 10) // Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական գոտուների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ («Կաճառ» գիտական տարեգիրք, Գիրք 4), Ստեփանակերտ, 2010, էջ 205-206

¹⁵ Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, նշված աշխատությունը, էջ 463

¹⁶ Cox C., Eibner J., նշված աշխատությունը, էջ 58:

¹⁷ Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, նշված աշխատությունը, էջ 463:

¹⁸ Տես «Ժնևի 1949 թ. օգոստոսի 12-ի կոնվենցիաները և դրանց 1977 թ. լրացուցիչ արձանագրությունները», մասնավորապես՝ IV կոնվենցիան (Քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին), հոդվածներ 3, 27, 32 և 34 (Պատանդառության և խոշտանգումների արգելքը):

¹⁹ Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտ (ընդունված 17.07.1998 թ.), հոդված 7, կետ 1: Տես նաև Ավագյան Կ., Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ Ադրբեջանի ագրեսիայի իրավական ասպեկտները, Երևան, «Գիտություն», 2005

²⁰ «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա (ընդունված 09.12.1948 թ.), հոդված 2:

²¹ Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, էջ 463:

Մշակութային ցեղասպանությունը որպես Արցախի հայաթափման շարունակական փուլ. ինքնության հետքերի համակարգված ոչնչացումը

Արմինե Տիգրանյան
Պատմական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Մշակութաբանության ամբիոնի դասախոս

Ադրբեջանն իր կազմավորումից ի վեր (1918 թ.) վարել է հակահայ պետական քաղաքականություն:¹ Արցախահայության ինքնության պահպանության իրավունքը մշտապես ոտնահարել են Ադրբեջանի թե՛ խորհրդային² և թե՛ անկախ հանրապետությունները, իսկ էթնիկ գտման և մշակութային ցեղասպանության բազմաթիվ դրսևորումները, հայության մշակութային ժառանգության հանդեպ բացահայտ անհանդուրժողականությունը, հայկականության հետքերի վերացումը, հայերի բնիկության փաստերի ժխտումը եղել և մնում են Ադրբեջանի քաղաքականության անբաժան մասը: Առաջնորդվելով տարածաշրջանում հայկական ներկայության ապացույցները ոչնչացնելու ցանկությամբ՝ 2020 թ. 44-օրյա պատերազմի հենց առաջին օրից Ադրբեջանն ընտրեց հայ ժողովրդի պատմական ժառանգությունն իսպառ ոչնչացնելու գործելաոճը: Մարտական ծանր տեխնիկայով բազմիցս անկաստն հրետակոծման ու ուժերի ծանր ճնշման ենթարկվեց Արցախի հայկական մշակութային ժառանգությունը: Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնվելուց հետո, հակահայկական գործողությունների թիրախում հայտնվեցին թե՛ Արցախի քրիստոնեական արժեքները (եկեղեցիներ, մատուռներ, խաչքարեր, հայերեն արձանագիր հուշարձաններ), թե՛ պատմական գերեզմանոցները, թե՛ Հայոց ցեղասպանությանը, Հայրենական մեծ պատերազմի և Արցախյան ազատամարտի հերոսներին նվիրված հուշարձաններն ու հուշահամալիրները, թե՛ վերջին 30 տարիների կանգնեցված ժամանակակից հուշարձանները և թե՛ ոչ նյութական ժառանգությունը:

2023 թ. սեպտեմբերի 19-ի ռազմական գործողություններով Արցախի ամբողջական հայաթափման ծրագրային քաղաքականության իրականացումից հետո Ադրբեջանը շարունակեց հայկական մշակութային ժառանգության դեմ հարձակումներն ու բռնաշարժման փորձերը, որոնք առայսօր չեն դադարում:

Թվում է, թե միջազգային կանոնակարգերի արդյունավետ գործադրման պարագայում պետք է կանխվեին Ադրբեջանի մշակութասպան գործողությունները, Արցախի մշակութային ժառանգությանը չպիտի հասցվեր այդ ահռելի վնասը: Գործնականում Ադրբեջանը շարունակում է ոչնչացնել ու յուրացնել հայկական ժառանգությունը, իսկ միջազգային մշակութապահպան հանրային ի վիճակի չէ կասեցնելու այդ հանցագործությունները:

Արցախի տարածքում պաշտոնապես գրանցվել է ավելի քան 5600 հուշարձան,³ որոնց մեծ մասը 4-19-րդ դարերի հայկական քրիստոնեական ժառանգություն է: Ընդգծենք, որ հայոց դարավոր նյութական և ոչ



նյութական մշակույթի ահռելի այս հետքն ինքնին տարածքի պատմաիրավական պատկանելության անվիճարկելի ցուցիչն է:⁴

Պատերազմից ի վեր միջազգային ու ազգային բազմաթիվ կազմակերպություններ ու անհատներ փաստագրել են Լեռնային Ղարաբաղի հայկական հուշարձանների համակարգված ոչնչացման բազմաթիվ դեպքեր: Մասնավորապես, «Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում»⁵ և «Կովկասի մշակութային ժառանգության մշտադիտարկում» կենտրոնները հրապարակել են հիմնավոր փաստագրական նյութեր⁶, իսկ ԱՄՆ Միջազգային կրոնական ազատության հանձնաժողովն իր 2024 և 2025 թթ. զեկույցներում ընդգծել է, որ հայկական ողջ ժառանգությունը Լեռնային Ղարաբաղում գտնվում է լիակատար ոչնչացման սպառնալիքի առջև:⁷

Հայ ինքնության դեմ ուղղված այս համակարգված հարվածները՝ Արցախի մշակութային ժառանգության ոչնչացումը, խեղաթյուրումը և դրանց աղվանացման նպատակով Ադրբեջանի՝ պետական մակարդակով իրականացվող գործողությունները վկայում են, որ ՄԱԿ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Եվրոպայի խորհրդի կոնվենցիաների դրույթների կիրառման, ինչպես նաև ՄԱԿ-ի մշակույթի իրավունքի գծով հատուկ զեկուցողի մասնադատի ներքո մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության մեխանիզմները ներկայումս չունեն բավարար արդյունավետություն: Պետք է նկատել, որ թեպետ մշակութային ոչնչացման կանխարգելման և



մարդու իրավունքների պաշտպանության խնդիրները լայնորեն քննարկվել են տեսական, քաղաքական, իրավական ու միջազգային ասպարեզներում, թեև օրենքներ, կոնվենցիաներ են ստեղծվել, բայց մի կողմից՝ ոլորտի բացերը, մյուս կողմից՝ միջազգային արդյունավետ գործիքակազմի բացակայությունը «ստիժ են տվել» Ադրբեջանին՝ չհարգելու այդ կանոնները: Անպատժելիության հետևանքով Ադրբեջանի համար պարարտ հող է ստեղծվում նոր հանցագործությունների իրականացման և արդեն իսկ իրագործածը «Եզիտիմացնելու» համար: Միաժամանակ, միջազգային հանրությունը, որը կոչված է պաշտպանելու մշակութային բազմազանությունը և մարդկության համատեղ ժառանգությունը, փաստացի ի վիճակի չէ կանխելու այդ հանցագործությունները: Այս համատեքստում ինչպես բռնի տեղահանված արցախահայերն ունեն իրենց հիմնարար իրավունքների պաշտպանության կարիքը, այնպես էլ միջազգային հանրությունը կարիք ունի ստանալու գիտականորեն հիմնավորված, փաստերով ամրագրված օբյեկտիվ տեղեկատվություն, որոնք հիմնված են գիտական ուսումնասիրությունների վրա և բացահայտում են խնդիրների այն լայն շրջանակը, որոնց բախվում են արցախահայերը:

Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշարձանների ոչնչացումը Ադրբեջանի կողմից: Ադրբեջանի վերահսկողության տակ անցած հայկական տարածքներում Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակին նվիրված հուշարձանների նպատակաուղղված ոչնչացումը «մշակութային ցեղասպանության» դասական դրսևորում է, ինչը խաթարում է միջազգային մարդասիրական իրավունքի հիմնադրույթները: 2020-2026 թվականների ընթացքում Ադրբեջանի կողմից կանխամտածված կերպով Հայոց ցեղասպանությանը նվիրված բազմաթիվ հուշահամալիրներ են ոչնչացվել:

Հայոց Մեծ եղեռնի գոհերի հիշատակին կանգնեցված հուշարձանների ավերումը հետապնդում է պատմական հիշողության կանխամտածված վերափոխման նպատակ: Ըստ այդմ, մշակութային արժեքների ոչնչացումը դիտարկվում է որպես ցեղասպան քաղաքականության շարունակություն, որի նպատակն է բնիկ ժողովրդի գոյության հետքերի վերացումը:

Դեռևս 2021 թվականի մայիսին պարզ դարձավ, որ ադրբեջանցիները քանդել են **Շուշիում Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակին նվիրված հուշարձանը**, որը տեղադրվել է Արցախյան առաջին պատերազմից հետո: Այն գտնվում էր Պոռշյան և Ղազանասեցոց եկեղեցու փողոցների խաչմերուկից քիչ ներքև: Իսկ արդեն 2024 թվականի սեպտեմբերի 20-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը, այցելելով Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող Շուշի, ներկա է գտնվել «Դրոշի հրապարակի» բացմանը, որը կառուցվել է դեռևս 2021 թվականին՝ Ադրբեջանի կողմից ոչնչացված Հայոց ցեղասպանության գոհերին նվիրված հուշակոթողի վայրում:⁸ Համաձայն ադրբեջանական լրատվականների տարածած տեղեկատվության՝ «Դրոշի հրապարակի» մոտ կառուցվելու է նաև «հաղթանակի թանգարանը»՝ նվիրված 44-օրյա պատերազմում Ադրբեջանի տարած հաղթանակին: Նշենք, որ այստեղ է կառուցվում նաև Ադրբեջանի «հաղթանակը» մատնանշող Շուշիի նոր մզկիթը, որի հիմնարկերը կատարվել էր դեռևս 2021 թվականի մայիսին Ադրբեջանի նախագահի կողմից:

2024-2025 թվականների ընթացքում ոչնչացվել է նաև **Ստեփանակերտում գտնվող Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշարձանը**:⁹

Հաղորդի Ազոխ գյուղում ավերվել են երեք առանձին հուշարձաններ՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի, Արցախյան առաջին պատերազմի և Հա-

յոց ցեղասպանության զոհերի հիշատակին:¹⁰ Այս քաղաքականության վառ ու ցավալի ապացույցը դարձավ 2025 թվականի մայիսին արբանյակային պատկերների միջոցով բացահայտված իրողությունը. Ադրբեջանը ծանր տեխնիկայի կիրառմամբ հիմնահատակ ոչնչացրել է Ասկերանի շրջանի Մայրաբերդի հուշահամալիրը: Համալիրի կազմում գտնվող Ջուղայի խաչքարերի նմանությամբ կանգնեցված կոթողը, որը նվիրված էր Մեծ եղեռնի 100-ամյակին, և Սուսգայիթի ջարդերի զոհերի հիշատակը հավերժացնող խաչքարը ոչնչացվել են հատուկ դաժանությամբ: Սա փաստում է, որ Ադրբեջանը փորձում է ջնջել նախկինում իրականացված ցեղասպանական գործողությունների մասին ցանկացած վկայություն՝ դրանով իսկ շարունակելով նույն ցեղասպան քաղաքականությունը:

Ստեփանակերտի Սուրբ Աստվածամոր Հովանու Մայր տաճարի ոչնչացումը: Մշակութային ցեղասպանության օրինակ է նաև եկեղեցիների ոչնչացումը: 2026 թվականի ապրիլի 21-ին պարզ դարձավ, որ հիմնահատակ ոչնչացվել է Սուրբ Աստվածամոր Հովանու Մայր տաճարը, որը Արցախի հոգևոր և ճարտարապետական կարևորագույն խորհրդանիշներից մեկն էր և գտնվում էր Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտի կենտրոնական, բարձրադիր՝ Նելսոն Ստեփանյան փողոցի վերնամասում: Այն դիտելի էր քաղաքի բոլոր հատվածներից: Եկեղեցու արտաքին տեսքը և հատակագիծը Ջվարթնոցի և Հռիփսիմեի տաճարների համադրությունն էր: Ընդգծենք, որ տաճարի վնասման և վանդալիզմի դեպքերն արձանագրվել էին «Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում» թիմի կողմից դեռևս սույն թվականի ապրիլի սկզբին, երբ արձանագրել էր, որ ջարդված են Ստեփանակերտի Սուրբ Աստվածամոր Հովանու Մայր տաճարի պատուհաններից երկուսը:

Եկեղեցու ճարտարապետը Գագիկ Երանոսյանն էր: Սրբավայրի հատակագծային և ծավալատարածական հորինվածքը հայկական դասական ճարտարապետական ոճի վերափնաստավորումն էր արտահայտում, որտեղ դասական շինարարական արվեստը համադրված էր ժամանակակից կառուցման տեխնոլոգիաների հետ:

Նշենք, որ Ստեփանակերտ քաղաքի գլխավոր տաճարի հիմնակերքը կատարվել է 2006 թվականին Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի ձեռամբ: Մայր տաճարը պաշտոնապես օծվել է 2019 թվականի ապրիլի 7-ին:¹¹ Ստեփանակերտի Սուրբ Աստվածամոր Հովանու Մայր տաճարի ոչնչացումը հերթական վկայությունն է այն հետևողական հայատյաց քաղաքականության, որն իրականացնում է Ադրբեջանը հայկական մշակութային ժառանգության և ընդհանրապես տարածաշրջանում հայկական հետքի վերացման ուղղությամբ:

Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցու ոչնչացումը: Ադրբեջանական կողմը քանդել է Ստեփանակերտ քաղաքի Հեքիմյան փողոցում գտնվող սուրբ

Հակոբ եկեղեցին: Դատելով տարածված լուսանկարից՝ քանդվել է ոչ միայն եկեղեցին, այլև հողին է հավասարեցվել եկեղեցու ամբողջ շրջակա տարածքը: Սա նշանակում է, որ ոչնչացվել են նաև եկեղեցու տարածքում գտնվող խաչքարերը և կոթողները: Հատկապես աչքի էր ընկնում քանդակագործ Ռոբերտ Ասկարյանի կողմից կերտված խաչքարը: Եկեղեցու ավերմանն «արձագանքել» են Ադրբեջանական լրատվականները, որոնք եկեղեցին որակել են որպես «անօրինական և ապամոտաժմանը ենթակա»: Նշենք, որ Սուրբ Հակոբ եկեղեցին կառուցվել էր 2007 թվականին:

Մարտունիի Սուրբ Ներսես եկեղեցու հանդեպ վանդալիզմը: 2026 թվականի ապրիլի 26-ին «Xocavənd Rayon İcra Hakimiyyəti» ֆեյսբուքյան էջում հրապարակված տեսանյութն արձանագրում է Արցախի Սոնթեաբերդ (Մարտունի) քաղաքի Սուրբ Ներսես Մեծ եկեղեցու գմբեթի խաչի կոտորման փաստը¹²: Հարկ է նշել, որ «Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում» ծրագրի շրջանակներում դեռևս 2025 թվականի հոկտեմբերի 30-ին հայտնվել էր եկեղեցու պարբերական վնասումների, մասնավորապես՝ պատուհանների կոտորման և կառույցի վրա առկա կրակահերթերի հետքերի մասին:¹³ Եկեղեցին գտնվում է Մարտունի քաղաքի Ազատամարտիկների և Լեոնարդ Պետրոսյան փողոցների հյուսիս-արևմտյան հատվածում: Կառույցն ունի խաչաձև հորինվածք. չորս սյուների վրա բարձրանում է քառանկյուն հիմքով և բրգաձև տանիքով գմբեթը, որի գագաթին տեղադրված էր խաչը:

Մշակութային ժառանգության ոչնչացումը որպես ցեղասպանություն. միջազգային իրավունքի վերլուծություն: Ցեղասպանությունը որևէ խմբի ֆիզիկական կամ կենսաբանական ոչնչացմանն ուղղված գործողությունների համախումբն է:¹⁴ Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալն ընդգծում է, որ ֆիզիկական կամ կենսաբանական ոչնչացումը հաճախ ուղեկցվում է նաև նշված խմբի մշակութային և կրոնական սեփականության ու խորհրդանիշների վրա հարձակումներով, որոնք կարող են իրավաչափ դիտվել որպես տվյալ խմբի ֆիզիկական ոչնչացման մտադրության ապացույց:¹⁵

Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի կողմից կայացված դատական որոշումներից մեկի ընթացքում ընդգծվել է, որ ցեղասպանության հանցագործության ճանաչման համար կարևոր է հատուկ դիտավորության (միտումնավորության) պահանջի ապացուցումը. գործողությունը կամ գործողությունները պետք է ուղղված լինեն ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբի դեմ, գործողությունը կամ գործողությունները պետք է նպատակ ունենան այդ խմբերի ամբողջական կամ մասնակի ոչնչացմանը:¹⁶ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 96 (I) բանաձևը ցեղասպանությունը սահմանել է որպես «մարդկային խմբերի գոյության իրավունքի ժխտում»:¹⁷ Նույն հարցի վերաբերյալ ՄԱԿ-ի բանաձևը լրացուցիչ մեկնաբանություն է տվել՝ նշելով, որ

ցեղասպանության հանցագործության գոհը մարդկային խումբն է, և այստեղ խոսքը ոչ թե որոշակի պատճառով տուժած անհատների մեծ կամ փոքր թվի մասին է, այլ հենց խմբի:¹⁸ Խիստ կարևոր է ընդգծել, որ խմբում ներառված մարդկանց թվաքանակն էական չէ հանցագործությունը ցեղասպանությունն որակելու համար, եթե այն ուղղված է ամբողջական էթնիկ խմբի դեմ:

Դիտարկելով Ադրբեջանի հանցավոր գործողություններն արցախահայության դեմ՝ հարկ է հստակ ընդգծել, որ անկախ Արցախում ապրող մարդկանց թվաքանակից՝ Ադրբեջանի դիտավորյալ, ծրագրված գործողությունները, պատերազմական հանցանքներն ուղղված են եղել արցախահայության՝ որպես ամբողջության դեմ:

Ցեղասպանության խնդիրն այսօր դիտարկվում է մշակութային ժառանգության վրա հարձակումների համատեքստում:¹⁹ Դիտավորյալ մշակութային արժեքների համակարգված ոչնչացումը մարդկության դեմ ուղղված հանցագործություն է և խմբի ոչնչացման մտադրության ապացույց՝ համաձայն «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և պատժի մասին» կոնվենցիայի:²⁰ Ցեղասպանության հայեցակարգն այսօր կենտրոնանում է այն գաղափարի վրա, որ «մշակութային ցեղասպանությունը հավասարազոր է համակարգված զանգվածային սպանություններին», և «ցեղասպանության հայեցակարգի խնդիրը միայն ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված ծանր հանցագործություններից ամենածանրն ու ամենամեծն ընդունելը չէ», այլ ընդունելը, «որ խնդիրը ոչ միայն խումբը ոչնչացնելն է, այլև ինքնության ոչնչացման **մտադրությունը**, «ինքնություն, որը դրսևորվում է լեզվի, սովորույթների, արվեստի և ճարտարապետության միջոցով»:²¹ Ժառանգության ոչնչացման խնդիրը ցեղասպանության առավել լայն համատեքստում դիտարկելով՝ ԱՄՆ-ի Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր, ԱՄՆ-ի Արվեստի, թանգարանների և մշակութային ժառանգության իրավունքի կենտրոնի տնօրեն Փեթի Գերթթենբլիթը նշել է, որ մշակութային ժառանգության ոչնչացումը ցեղասպանության գործողություն է, ինչպես նաև ցեղասպանության իրականացման մտադրության ապացույց:²²

ՄԱԿ-ի 1948 թ. ընդունված «Ցեղասպանություն հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի համաձայն՝ ցեղասպանությունն ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական որևէ խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ իրականացված այնպիսի գործողություններն են, որոնք, ի թիվս սպանության և մարմնական վնասվածքների, նաև կյանքի համար միտումնավոր այնպիսի կենսապայմաններ են ստեղծում, որոնք ուղղված են խմբի ֆիզիկական ոչնչացմանը, մանկածությունը կանխելուն և երեխաներին մի խմբից մյուսը բռնի տեղափոխելուն:²³ Կոնվենցիան ցեղասպանության գործողություն է համարում նաև «ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբին ամ-

բողջությամբ կամ մասնակի ոչնչացնելու մտադրությամբ» խմբի կյանքին միտումնավոր վնաս հասցնելու համար պայմանների ստեղծումը, իսկ ժառանգության ոչնչացումը հենց այդպիսի պայման է:

Մշակութային ժառանգության դեմ կատարվող հանցագործությունները, որոնք ուղեկցվում են խմբի դեմ ուղղված ֆիզիկական կամ կենսաբանական այլ գործողություններով, կարող են ցեղասպանության հատուկ մտադրություն ունենալ:²⁴ Բացի այդ՝ մշակութային ժառանգության ոչնչացումը, համաձայն Հռոմի կանոնադրության 6 (բ) հոդվածի, կարող է հոգեկան լուրջ վնաս²⁵ պատճառել մարդկանց՝ մեծացնելով ցեղասպանական գործողությունների ծանրությունն ու լրջությունը:²⁶

Հռոմի կանոնադրության՝ մշակութային ժառանգության քաղաքականության ձեռնարկի համաձայն՝ ցեղասպանություն է համարվում նաև դիտավորյալ կատարված այն գործողությունը, որի ժամանակ ոճրագործն անմիջապես չի սպանում խմբի անդամներին, այլ ի վերջո ձգտում է նրանց ֆիզիկական ոչնչացմանը:²⁷ Այս առիթով կարող ենք նշել, որ մշակութային լանդշաֆտի բռնի յուրացումը կամ տեղահանման գործողությունը, որի հետևանքով համայնքը վտարվում է իր լանդշաֆտից, կարող է վնասել և ոչնչացնել ժողովրդի մշակութային ժառանգությունը և հետևաբար ինքնությունը՝ ի վերջո, վերջ դնելով խմբի գոյությանը որպես այդպիսին:²⁸ Հավելենք, որ խմբի անդամների ֆիզիկական գոյությունն իրենց տարածքից հեռու ինքնության վերստեղծման հիմք չէ:

Ռաֆայել Լեմկինի մշակութային ցեղասպանության հայեցակարգի համաձայն՝ ցեղասպանությունն անմիջական կապի մեջ է մշակութային ժառանգության և մարդու իրավունքների հայեցակարգերի հետ:²⁹ Ցեղասպանության մասին կոնվենցիայի բնօրինակում նա «ազգային, ռասայական, կրոնական և սոցիալական համայնքների կանխամտածված ոչնչացումը», «վանդալիզմը», «խմբերի ստեղծագործ առանձնահատուկ հանճարի արտահայտություն հանդիսացող արվեստի և մշակույթի գործերի ոչնչացման գործողությունները համարում է բարբարոսություն»: Խումբը կարող է ոչնչացվել, եթե նրա ինքնությունը, հավաքական հիշողությունը ջնջվեն, եթե անգամ նրա անդամներից շատերը ողջ մնան: «Դարեր, երբեմն հազարավոր տարիներ են պահանջվում ... մշակույթ ստեղծելու համար,- գրում է Լեմկինը,- բայց ցեղասպանությունը կարող է անմիջապես ոչնչացնել այն»:³⁰

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան, 60/1 բանաձևի 138-140-րդ կետերում ընդունելով 2005 թ. Համաշխարհային գազաթնաժողովի արդյունքները, նույնպես անդրադառնում է այս հարցին՝ նշելով, որ մշակութային ժառանգության միտումնավոր ոչնչացումը և յուրացումը կարող են լինել ռազմական և մարդկության դեմ հանցագործություն՝ վկայելով ցեղասպանության մտադրության մասին: Ավելին՝ 2014 թ. Ցեղասպանության կանխարգելման և պաշտպանության հարցերով գրասենյակը հաստատեց նաև, որ մշակութա-

յին ժառանգության ոչնչացումը նաև վայրագության հանցագործություն է:³¹

Բերված բոլոր փաստերն ապացուցում են, որ Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային ժառանգության ոչնչացումն արցախահայությանն ամբողջությամբ ցեղասպանելու մտադրության ապացույց և մարդկության դեմ ծանր հանցագործություն կարող է համարվել:

ՄԱԿ-ի մշակույթի իրավունքի գծով հատուկ զեկուցողը մշակութային ժառանգության դիտավորյալ ոչնչացման գործողությունները «մշակութային մաքրում/էթնիկ զտում» է որակել:³² Հարկ է շեշտել, որ էթնիկ զտումը ոչ թե մեկ կոնկրետ հանցագործություն է, այլ հանցագործությունների շարք՝ ներառելով բռնի տեղահանությունը, քաղաքացիական բնակչության դեմ հարձակումները, խոշտանգումները, սպանությունները, մշակութային արժեքների ոչնչացումը և այլն: Մշակութային ժառանգության դեմ ուղղված հարձակման փաստերի առկայությամբ կամ բացակայությամբ կարելի է որոշել նաև պատերազմի բնույթն ու դրդապատճառը՝ գնահատելով, թե այն էթնիկ զտման, ռազմական, տարածքային նվաճումների, թե այլ նպատակներով է իրականացվել: Ապացուցված է, որ հարձակման ընթացքում մշակութային ժառանգության դեմ կատարված հանցագործությունների ապացույցները կարող են վկայել, որ հարձակման հիմնական թիրախը հենց խաղաղ բնակչությունն է եղել՝ հաշվի առնելով վերջինիս համար ժառանգության հավաքական նշանակությունը:³³ Բացի այդ՝ մշակութային ժառանգության թիրախավորումը կարող է վկայել խտրական դրդապատճառների, ռասայական ստեղծության մասին:³⁴

Միջազգային իրավունքի դերակատարների դիրքորոշումները. Արցախում մշակութային վանդալիզմը որպես շարունակվող ցեղասպանություն: 21-րդ դարում, երբ առաջադեմ աշխարհը քարոզում է բազմազանության նկատմամբ հանդուրժողականություն, խրախուսում է կրոնական և մշակութային ամենատարբեր ինքնությունների գոյությունը, երբ միջազգային հանրությունը գրավոր փաստաթղթերով հորդորում է պետություններին հարգել ցանկացած ժողովրդի ժառանգությունը, հայկական արժեքների ոչնչացումը կիրառվող «ավանդույթ» է մնում Ադրբեջանի համար: Սկզբնավորվելով 20-րդ դարասկզբում հայերի ֆիզիկական ու մշակութային ցեղասպանությամբ³⁵ ադրբեջանական էթնիկ զտումների քաղաքականությունը շարունակվում է առ այսօր:³⁶

Ցեղասպանության կանխարգելման Լեմկինի ինստիտուտի ցեղասպանության կարմիր դրոշով 5 անգամ (2022 թ. օգոստոսի 15,³⁷ 2022 թ. սեպտեմբերի 19,³⁸ 2022 թ. հոկտեմբերի 7,³⁹ 2023 թ. սեպտեմբերի 19,⁴⁰ 2023 թ. սեպտեմբերի 22,⁴¹ 2023 թ. նոյեմբերի 1)⁴² անհազանգել է և նշել, որ Ադրբեջանը շարունակում է պետական մակարդակով քարոզել ատելության խոսք, կատարել վայրագություններ՝ հայկական ինքնության դեմ, որոնք, որդեգրված լինելով 1915-ից իբրև

թուրք-ադրբեջանական ընդհանուր քաղաքականության բաղկացուցիչ մասեր, որակվում են որպես ցեղասպանական ակտ:

2024 թ. սեպտեմբերի 2-ին «Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիա»-ն բանաձև է ընդունել Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ, որի մեջ անդրադարձ է կատարվում հայկական ժառանգության ոչնչացման Ադրբեջանի քաղաքականությանը:⁴³

Բանաձևի նախաբանում նշվում է, որ ճանաչում է Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղում հայկական մշակութային ժառանգության ոչնչացումը, ինչպես նշվում է, որ 2023 թ. սեպտեմբերին տարածքում մնացած հազարավոր էթնիկ հայեր զանգվածաբար վտարվել են բռնության սպառնալիքի ներքո: Բանաձևում նշվում է, որ գիտնականները ճանաչում են Լեռնային Ղարաբաղի 1988-1992 թթ. Հայաստանի Հանրապետությանը միանալու կամ անկախ պետություն դառնալու բազմաթիվ ներկայացուցչական և հանրաքվեի ձայները, որոնք, ցավոք, երբևէ չեն արժանացել միջազգային հարգանքի:

Բանաձևի առաջին կետով ընդունվում է, որ Լաչինի միջանցքի շրջափակումը 2022 թ. դեկտեմբերից մինչև 2023 թ. սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում բնորոշ է այն գործողություններին, որոնք համարվում են տարածքում էթնիկ հայերի ֆիզիկական ոչնչացմանը նպաստող կենսաապայմաններ, իսկ հայերին հասցված հոգեկան և մարմնական վնասը, ըստ «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայի, ճանաչվում է որպես ցեղասպանություն:

Փաստաթղթի երկրորդ կետում նշվում է, որ 2023 թ. սեպտեմբերին և հոկտեմբերին պաշարման և ուժբազմության միջոցով էթնիկ հայերի բռնի տեղահանումն էթնիկ զտում և մարդկության դեմ հանցագործություն է:⁴⁴ Իսկ քաղաքացիական բնակավայրերի ուժբազմությունը, էթնիկ հայ ռազմագերիների և քաղաքացիական անձանց խոշտանգումները և սպանությունները միջազգային մարդասիրական իրավունքի խախտումներ են:⁴⁵

Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի ընդունած բանաձևը հորդորում է Ադրբեջանին կատարելու Արդարադատության միջազգային դատարանի հրամաններն ու վճիռները՝ ներառյալ հայկական մշակութային արժեքները չոչնչացնելու, չպղծելու հորդորները, ինչպես նաև միջազգային իրավունքի այլ պարտավորությունները, ներառյալ՝ մարդու միջազգային իրավունքների հարգումը և միջազգային մարդասիրական իրավունքի երաշխավորումը:⁴⁶

Բանաձևի 9-րդ կետով կոչ է արվում Ադրբեջանին հարգել, պաշտպանել և կանխել հայկական մշակութային ցանկացած արժեքների ոչնչացումը Լեռնային Ղարաբաղում,⁴⁷ ինչպես նաև հորդորում է միջազգային հանրությանը պաշտպանել Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը:⁴⁸

Անդրադառնալով արցախահայերի անվտանգ վերադարձի հնարավորությանը բանաձևի 11-րդ կետով կոչ է արվում միջազգային հանրությանը ձեռնարկել



համապատասխան միջոցներ՝ երաշխավորելու Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերի վերադարձի իրավունքը և անվտանգությունը, ինչպես հաստատվել է Արդարադատության միջազգային դատարանի կողմից 2023 թ. նոյեմբերի 17-ի ժամանակավոր միջոցների մասին հրամանով:

Գիտնականներն առաջարկում են «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի և «Խոշտանգումների դեմ» կոնվենցիայի հիման վրա Արդարադատության միջազգային դատարանում Ադրբեյջանի դեմ դատական գործընթաց սկսել, իսկ մարդու իրավունքների ոտնահարման և հանցագործությունների ապացույցներ հավաքելու համար ստեղծել միջազգային փաստահավաք առաքելություն:⁴⁹

2022 թ. մարտի 10-ին Եվրոպական խորհրդարանի լիագումար նստաշրջանում ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունվեց «Լեոնային Ղարաբաղում մշակութային ժառանգության ոչնչացման մասին» (N 2582) բանաձևը:⁵⁰ Այն ընդունվեց ձայների 635 կողմ, 42 ձեռնպահ և 2 դեմ հարաբերակցությամբ, ինչն անսախաղեպ էր նման կառույցի համար: Բանաձևով կոչ է արվում Ադրբեյջանին ձեռնարկել անհրաժեշտ քայլեր՝ կանխելու հայկական մշակութային ժառանգության ոչնչացման ու վանդալիզմի դեպքերը և պատժելու նման գործողություններ իրականացնողներին:⁵¹ Բանաձևի քվեարկությանը նախորդած քննարկում-քանակեճի ընթացքում Եվրոպական խորհրդարանի անդամների ունեցած ելույթներում հայկական մշակութային ժառանգության աղվանացումը համարվեց պատմության կեղծման քաղաքականություն:⁵² Տարբեր պատգամավորների կողմից Ադրբեյջանի մշակութասպան և հայատյաց քաղաքականությունը դիտարկվեց որպես «ցեղասպանություն»:⁵³ Ի մասնավորի, Պերնանդո Բարենա Արզան թուրք-ադրբեյջանական ուժերի հրահրած 44-օրյա պատերազմը կապեց Թուրքիայի՝ 1915 թ. իրականացրած ցեղասպանության հետ:⁵⁴ Իսկ Նատալի Լուազոն, նշելով մշակույթի՝ մարդկանց հիշողություն և ինքնություն լինելու փաստը, դրա ոչնչացման ցանկացած փորձ որակեց ցեղասպանության փորձ մարդկության դեմ:⁵⁵ Քննարկման ժա-

մանակ ժառանգության վրա հարձակումը կապվում էր նաև ինքնության ու պատմության ոչնչացման հետ:⁵⁶

Շվեյցարիայի խորհրդարանի ստորին պալատը 2024 թ. դեկտեմբերի 16-ին ընդունել է միջնորդություն՝ կոչ անելով Շվեյցարիայի կառավարությանը կազմակերպելու Լեոնային Ղարաբաղի վերաբերյալ խաղաղության միջազգային համաժողով, որը կքննարկի Արցախի վտարված բնակչության անվտանգ վերադարձի իրավունքի հարցը: Միջնորդության նպատակն է նպաստել տեղահանված հայ բնակչության՝ դեպի իրենց հայրենիք անվտանգ, հավաքական և արժանապատիվ վերադարձի իրավունքի իրացմանը:⁵⁷

Հատկանշական է, որ Լեոնային Ղարաբաղի ողջ հայ բնակչության բռնի տեղահանումը միջնորդությունում ներկայացվում է ոչ միայն որպես հումանիտար աղետ, այլև որպես տարածաշրջանային խոր ճգնաժամի և անարդարության դեմ պայքարի հրամայական, որը կարող է միաժամանակ հիմք դնել Հայաստանի և Ադրբեյջանի միջև կայուն խաղաղությանը:

Միջնորդության հիմնավորման մեջ նշվում է, որ Լեոնային Ղարաբաղը դատարկվել է իր հայ բնակչությունից 2023 թ. սեպտեմբերին՝ Ադրբեյջանի վերջին ռազմական առաջխաղացումից հետո. «Վախենալով 1915 թվականին հայերի դեմ իրականացված հերթական ցեղասպանությունից՝ պատմական բնակչությունը ստիպված եղավ մի քանի օրվա ընթացքում լքել իր հայրենիքը: Այդ ժամանակվանից տարածաշրջանը ենթարկվել է փաստագրված էթնիկ գտումների. հայկական մշակութային ժառանգությունը, ինչպիսիք են եկեղեցիները, վանքերը և գերեզմանատները, համակարգված կերպով ոչնչացվում կամ վերափոխվում է կեղծ փաստաթղթերով՝ «վերանորոգման» անվան տակ», սաված է միջնորդության տեքստում:⁵⁸ Չսայած Ադրբեյջանի կողմից իրականացվող քաղաքականությանը, Լեոնային Ղարաբաղի հայերը շարունակում են պահպանել միջազգային հանրության անվտանգության երաշխիքներով հայրենիք վերադառնալու, սեփական քաղաքական ապագան որոշելու և ժողովրդավարական ինքնակառավարում իրականացնելու իրենց իրավունքը:

Ադրբեյջանի կողմից թե՛ 44-օրյա պատերազմի օրերին, թե՛ դրանից հետո և նույնիսկ 2023 թ. սեպտեմբերյան բռնի տեղահանության ընթացքում թիրախավորվել են քաղաքացիական անձինք, տեղահանվել ամբողջական համայնքներ. ինչ է սա, եթե ոչ հարձակում մարդկանց և նրանց կրած արժեքների վրա: Հաստատագրելով այս պնդումը՝ Կարինա Բենունը նույնպես նշում է, որ «Ժառանգության վրա հարձակումները նախ և առաջ հարձակումներ են մարդկանց և նրանց իրավունքների վրա»:⁵⁹ Իսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախկին գլխավոր տնօրեն Իրինա Բոկովան պնդում է, որ «կարիք չկա ընտրություն կատարելու կյանքեր փրկելու և մշակութային ժառանգությունը պահպանելու միջև. դրանք անբաժան են»:⁶⁰ իսկ **ժառանգությա-**

յան ոչնչացում նշանակում է «երկրորդ անգամ սպանել ժողովրդին»:⁶¹ Ուստի Արցախի մշակութային ժառանգության հանդեպ թշնամական պահվածքը պարզապես ժառանգության դեմ ուղղված հարձակում չէ, այլ ինքնության, անհատական և համայնքային իրավունքների մերժման դրսևորում:

Հույժ կարևոր է ընդգծել նաև այն հանգամանքը, որ Արդարադատության միջազգային դատարանը հաստատել է,⁶² որ պատերազմի ժամանակ և բռնազավթված տարածքներում գործող օրենքները՝ խաղաղ բնակչության վրա հարձակումների արգելքը,⁶³ ինչպես նաև մշակութային արժեքների պաշտպանության դրույթները ձեռք են բերել միջազգային սովորույթային իրավունքի (infra Jurisprudence) կարգավիճակ, այսինքն՝ գործում են որպես համընդհանուր և անշրջանցելի կանոն ու պարտադիր են բոլոր պետությունների համար: «Դատարանը գտնում է, որ Հասագայի կանոնակարգի դրույթները դարձել են սովորույթային իրավունքի մաս»,⁶⁴ - հայտարարել է դատարանը 2005 թ.:

Այսպիսով Ադրբեյջանի մշակութային ցեղասպանության դրսևորումները, արցախահայության ժառանգության հանդեպ անհանդուրժողականությունը և պատմամշակութային արժեքների ոչնչացումը սպառնում են համայնքների գոյությանը, ինքնությանը և շարունակականությանը: ■

Յղումներ

¹ Ադրբեյջանի հակահայկականությունը սկիզբ է առել Թուրքիայի ծայրահեղ ազգայնական քաղաքականության ազդեցությամբ՝ 1918 թ. Ադրբեյջանի՝ որպես պետության ձևավորումից և 1930-ական թթ. «ադրբեյջանցի ժողովուրդ» հասկացության շրջանառության մեջ դրվելուց ի վեր: Այն բուն զարգացել է խորհրդային շրջանում (հատկապես՝ 1960-ականներից) և շարունակվում է պետական քաղաքականություն լինել առ այսօր (տե՛ս Ա. Ժամակոյան, Ա. Աթանեսյան, Գ. Հարությունյան և այլք, Ադրբեյջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, «Նորավանք» ԳԿՀ, Երևան, 2009, էջ 21:

² Ադրբեյջանի կողմից հայկական ժառանգության բռնադատումը սկսվել է 20-րդ դարի 20-30-ական թվականներին, բայց համակարգված քաղաքականություն դարձել է 50-ական թվականների վերջերից՝ ԽՍՀՄ-ում ծավալվող «ճնհալի» քաղաքականության ընթացքում: Արդեն 60-ական թվականներից Արցախի մշակութային ժառանգության յուրացումը դառնում է կառավարության հայահալած քաղաքականության մաս: Հ. Պետրոսյան, Հ. Սուրադյան, Արցախի մշակութային ժառանգությունը հարձակումների թիրախում, Երևան, 2022, էջ 20:

³ Համաձայն Արցախի մշակութային ժառանգության պետական ցուցակի՝ մինչև 2020 թ. սեպտեմբերը վկայագրված հուշարձանների թիվը եղել է 4112 (Արցախի մշակույթի նախարարություն): 2020 թ. 44-օրյա պետերազմից հետո ցանկը համալրվել է նոր վկայագրերով. 2020-2022 թթ. ընթացքում այն համալրվել է նոր վկայագրումներով և 2022 թ. թարմացված տվյալներով՝ Արցախի հուշարձանների թիվը կազմում է 5658 (Արցախի թեմի գրասենյակի կողմից ներկայացված տվյալներ, 2022 թ.):

⁴ Հ. Պետրոսյան, Հ. Սուրադյան, «Արցախի մշակութային ժառանգությունը հարձակումների թիրախում», Երևան, 2022, էջ 20:

⁵ «Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում» նախաձեռնությունը 2021 թվականից ի վեր արձանագրել է ժառանգության ոչնչացման, յուրացման, աղվանացման, խեղաթյուրման, այլափոխման և անօրինական վերականգնման ավել-

յի քան 220 դեպք (տե՛ս Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում, Միացված, <https://monumentwatch.org/hy/alerts/page/12/> (մուտք՝ 18.02.2022)):

⁶ Կովկասի մշակութային ժառանգության մշտադիտարկում կենտրոնը «սպանալիք» է համարում նաև այն դեպքերը, երբ ճանապարհաշինարարական և հողային աշխատանքների պատրվակով վնասվում են Լեռնային Դարաբաղի պատմական նշանակության տարածքների անմիջական շրջակայքը՝ սպանալով լանդշաֆտի կառուցվածքային ամբողջականությունը: Կենտրոնի կողմից 2021 թ. սկսած իրականացվել է 12 արբանյակային դիտարկում, որի շրջանակում մշտադիտարկվել է 300-ից 600 մշակութային հուշարձան: Այդ ընթացքում փաստագրվել է 14 մշակութային հուշարձանի լիակատար ոչնչացում (այդ թվում՝ Մոլախի և Մեծ Թաղերի պատմական գերեզմանոցները, Հալիվորի և Մակուն կամուրջները, Սուրբ Հովհաննես Մկրտիչ/Կանաչ ժամ, Սուրբ Սարգիս եկեղեցիները և այլն) և ևս 14-ի վնասում: 2025 թ. տվյալներով՝ 30 մշակութային օբյեկտ համարվում է անմիջական սպանալիքի տակ (Caucasus Heritage Watch Monitoring Report #8, July 2025, <https://indd.adobe.com/view/f69c6aa7-7f27-42a1-b042-a1c436756860>, (մուտք՝ 18.07.2025)):

⁷ U.S. Commission on International Religious Freedom, Annual Report, 2025, p. 46-48, <https://www.uscifr.gov/annual-reports>, (մուտք՝ 18.06.2025):

⁸ Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում, Շուշիի Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշարձանի ոչնչացումը, <https://monumentwatch.org/hy/alerts/շուշիում-հայոց-ցեղասպանության-գոհեր/>

⁹ Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտն ադրբեյջանական հարձակումների, խեղաթյուրման և յուրացման թիրախում, <https://monumentwatch.org/hy/alerts/արցախի-մայրաքաղաք-ստեփանակերտը-ադրբ/>

¹⁰ Տես նույն տեղում, էջ 208-209:

¹¹ https://www.youtube.com/watch?v=AK9_2NVbM8M.

¹² <https://www.facebook.com/reel/2545407835874082>.

¹³ Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում, <https://monumentwatch.org/...%d5%b4%d5%a1%d6%80%d5%bf.../>.

¹⁴ Տես Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), Judgment, 26 February 2007, ICJ ReԷջ 4 (Bosnia v. Serbia and Montenegro (Genocide Convention) Case), պարագրաֆ 344; Prosecutor v. Radislav Krstic (Trial Judgement), International Criminal Tribunal for the former Yugoslavia (ICTY), IT-98-33-T, 2 August 2001, պարագրաֆ 550, 580: <https://www.refworld.org/jurisprudence/caselaw/icty/2001/en/40159> (մուտք՝ 12.07.2025):

¹⁵ Տես Prosecutor v. Radislav Krstic (Trial Judgement), International Criminal Tribunal for the former Yugoslavia (ICTY), IT-98-33-T, 2 August 2001, պարագրաֆ 580, <https://www.refworld.org/jurisprudence/caselaw/icty/2001/en/40159> (մուտք՝ 12.07.2025):

¹⁶ Տես Prosecutor v. Radislav Krstic (Trial Judgement), International Criminal Tribunal for the former Yugoslavia (ICTY), IT-98-33-T, 2 August 2001, պարագրաֆ 550, <https://www.refworld.org/jurisprudence/caselaw/icty/2001/en/40159> (մուտք՝ 12.07.2025):

¹⁷ UN General Assembly, The Crime of Genocide, A/RES/96(1), 1947, <https://digitallibrary.un.org/record/209873?ln=en&v=pdf> (մուտք՝ 11.06.2025).

¹⁸ Տես նույն տեղում:

¹⁹ Տես ICC, Policy on Cultural Heritage, էջ 34, պարագրաֆ 88:

²⁰ Տես Bennoune K., UN Human Rights Council, Report of the Special Rapporteur in the field of cultural rights, A/HRC/31/59, 2016, պարագրաֆ 64:

²¹ Bevan R., op. cit., p. 270.

²² Տես Gerstenblith P., The destruction of cultural heritage: a crime against property or a crime against people? “John Marshall Review of Intellectual Property Law”, 31 May 2016, vol. 15, no. 336, էջ 344:

²³ Տես UN General Assembly, Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, General Assembly resolution 260 A (III) of 9 December 1948, Entry into force, 1951, in accordance with article XIII, <https://www.refworld.org/legal/agreements/ungaa/1948/en/13495>(մուտք՝ 01.09.2024):

²⁴ Տես ICC, Policy on Cultural Heritage, էջ 30, պարագրաֆ 79:

²⁵ Տես նույն տեղում, պարագրաֆ 81:

26 ՏՆՍ նույն տեղում, պարագրաֆ 78:

27 ՏՆՍ նույն տեղում, պարագրաֆ 83:

28 Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը (IACtHR) ճանաչել է, որ մայաների բնիկ համայնքի կոտորածը և ցամաքային գործողությունները, որոնք հանգեցրել են մայաների ամբողջական համայնքների ցեղասպանական ոչնչացմանը, ինչպես նաև նրանց տների, անասունների, բերքի և գոյության այլ տարրերի ոչնչացումը ոտնահարում են ոչ միայն նրանց կյանքի, այլև էթնիկ կամ մշակութային ինքնության, նաև իրենց մշակույթն արտահայտելու և տարածելու իրավունքը: Այս փաստերը ճանաչվեցին որպես թիրախային համայնքի անդամների, նրանց ինքնության և արժեքների վրա լուրջ ազդեցություն (տես նույն տեղում, պարագրաֆ 32):

29 ՏՆՍ Bevan R., նշվ. աշխ., 270-271:

30 Նույն տեղում, էջ 271:

31 ՏՆՍ United Nations, Framework of Analysis for Atrocity Crimes: A Tool for Prevention, 2014, <https://www.global2p.org/resources/framework-of-analysis-for-atrocity-crimes-a-tool-for-prevention/> (մուտք՝ 02.08.2025): ՏՆՍ նաև Bennoune K., UN Human Rights Council, Report of the Special Rapporteur in the field of cultural rights, A/HRC/31/59, 2016, պարագրաֆ 64:

32 ՏՆՍ UN Human Rights Council, Report on the intentional destruction of cultural heritage as a violation of human rights, A/71/317, 2016, պարագրաֆ 45, Bennoune K., UN Human Rights Council, Report of the Special Rapporteur in the field of cultural rights, A/HRC/31/59, 2016, պարագրաֆ 67:

33 ՏՆՍ ICC, Policy on Cultural Heritage, էջ 30, պարագրաֆ 79:

34 ՏՆՍ նույն տեղում, էջ 25:

35 «Մշակութային ցեղասպանություն»-ը հասկացություն է, որն իրավաբան Ռաֆայել Լևակի՛նը 1944 թ. առանձնացրել է որպես ցեղասպանության բաղադրիչ: Հայոց ցեղասպանության թանգարանը մշակութային ցեղասպանություն է կոչում այն գործողությունները, որոնք ձեռնարկվում են ազգերի կամ էթնիկ խմբերի մշակույթը ոչնչացնելու համար (տես Genocide Museum |The Armenian Genocide Museum-institute (genocide-museum.am (մուտք՝ 07.07.2022):

36 ՏՆՍ A. Avagyan, A Brief Review of Cultural Heritage Violations in Nagorno-Kharabakh (Artsakh) in September-November of 2020, November 30, 2020, <https://icom-armenia.mini.icom.museum/a-brief-review-of-cultural-heritage-violations-in-nagorno-kharabagh-artsakh-in-september-november-of-2020> (մուտք՝ 07.07.2022):

37 Lemkin Institute for Genocide Prevention, Red Flag Alert for Genocide Azerbaijan, Update 1, <https://www.lemkininstitute.com/red-flag-alerts-1/red-flag-alert-for-genocide---azerbaijan-update-1> (մուտք՝ 01.09.2024):

38 Lemkin Institute for Genocide Prevention, Red Flag Alert for Genocide, Azerbaijan, Update 2, <https://www.lemkininstitute.com/red-flag-alerts-1/red-flag-alert--for-genocide---azerbaijan-update-2> (մուտք՝ 01.09.2024):

39 Lemkin Institute for Genocide Prevention, Red Flag Alert for Genocide, Azerbaijan, Update 3, <https://www.lemkininstitute.com/red-flag-alerts-1/red-flag-alert-for-genocide---azerbaijan---update-3> (մուտք՝ 01.09.2024):

40 Lemkin Institute for Genocide Prevention, Red Flag Alert for Genocide Azerbaijan, SOS ARTSAKH, 19 September 2023, https://www.lemkininstitute.com/_files/ugd/9bc553_e74c06e349e94e348c0a95bfd3607475.pdf (մուտք՝ 01.09.2024):

41 Lemkin Institute for Genocide Prevention, Red Flag Alert for Genocide, Azerbaijan, 22 September 2023, SOS Alert - Artsakh #2, https://www.lemkininstitute.com/_files/ugd/391abe_3d132b38df19467099ef7701a2be466a.pdf (մուտք՝ 01.09.2024):

42 Lemkin Institute for Genocide Prevention, Red Flag Alert for Genocide Azerbaijan in Armenia, November 1, 2023, <https://www.lemkininstitute.com/red-flag-alerts/red-flag-alert-for-genocide---azerbaijan-in-armenia> (մուտք՝ 01.09.2024):

43 The International Association of Genocide Scholars (IAGS) Resolution on Nagorno-Karabakh, September 2, 2024, https://genocidescholars.org/wp-content/uploads/2024/09/IAGS-Resolution-on-Nagorno-Karabakh.pdf?fbclid=IwZXh0bG9hZC9WOCMTAAAR3jruXe_4TX6D8cRs4CEODxt4mQlPFTyk0PVYLYA WKCTN_TSSm0mPdpC_aem_7mqrXY0pJckIMbMcmSi8Jg:

44 ՏՆՍ նույն տեղում, հոդված 2:

45 ՏՆՍ նույն տեղում, հոդված 3, 4:

46 ՏՆՍ նույն տեղում, հոդված 6:

47 ՏՆՍ նույն տեղում, հոդված 9:

48 ՏՆՍ նույն տեղում, հոդված 10:

49 ՏՆՍ նույն տեղում, հոդված 13:

50 European Parliament Resolution on the destruction of cultural heritage in Nagorno-Karabakh, 2022/2582(RSP), 2022.

51 European Parliament, Resolution on the destruction of cultural heritage in Nagorno-Karabakh, 2022/2582(RSP), 2022, art.1.

52 Եվրախորհրդարանի պատգամավորները որպես օրինակ առանձնացնում են 2022 թ. փետրվարին Ադրբեջանի մշակույթի նախարարի՝ հայկական պատմամշակութային ժառանգության ինքնությունը խեղաթյուրելու նպատակով աշխատանքային խմբի ստեղծման պաշտոնական հայտարարությունը և Ալիևի՝ Հադրոթ այցի ժամանակ հայկական հետքերը եկեղեցիներից ջնջելու հրապարակային խոստումը: ՏՆՍ նաև պատգամավոր Նատալի Լուազոյի («Նորացող Եվրոպա», Ֆրանսիա), Վիոլա ֆոն Կրամոն-Թորալեյի (Կանադայի խմբակցություն, Գերմանիա) ելույթները N 2582 բանաձևի քվեարկությանը նախորդած քննարկման ժամանակ:

53 Եվրախորհրդարանի պատգամավոր Պետեր վան Դալենի (ԵՏԿ, Նիդերլանդներ), Մարտինա Միշելսի (Չախերի խմբակցություն, Գերմանիա), Կոստաս Մավրիդեսի (Սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, Կիպրոս), Մուսանա Չեկարդիի («Ինքնություն և ժողովրդավարություն» խմբակցություն, Իտալիա) ելույթները N 2582 բանաձևի քվեարկությանը նախորդած քննարկման ժամանակ:

54 ԵՄ պատգամավոր Պերնանդո Բարենա Արզայի (Չախերի խմբակցություն, Իսպանիա) ելույթը N 2582 բանաձևի քննարկմանը:

55 ԵՄ պատգամավոր Նատալի Լուազոյի ելույթը N 2582 բանաձևի քննարկմանը:

56 ԵՄ պատգամավոր Չարլի Վեյմերսի (Պաշտպանականության և ռեֆորմիստների խմբակցություն, Շվեդիա), Էվին Իսպիրի (Սոցիալ-դեմոկրատական խմբակցություն, Շվեդիա), Քշիշտոֆ Շեթմանի (ԵՏԿ, Լեհաստան) ելույթները N 2582 բանաձևի քվեարկությանը նախորդած քննարկում-բանավեճի ժամանակ:

57 Switzerland passes motion on right of return for Karabakh Armenians, 17 December, 2024, <https://www.youtube.com/watch?v=GK3DJRVzXU>.

58 Swiss legislators call for international peace forum on Nagorno-Karabakh conflict, Armenpress, 16 October, 2024, <https://armenpress.am/en/article/1202426>.

59 Larsen P. B., Modern Conflict, Emergencies and Cultural Heritage: Exploring the Relevance of Cultural Rights: International Conference on the 20th Anniversary of the 1999 Second Protocol of the 1954 Hague Convention Protecting Cultural Property Conference Proceedings, Paris, UNESCO, 2020, p. 89-90.

60 Bokova I., Culture on the Front Line of New Wars, “Brown Journal of World Affairs”, 2015, vol. 22, no. 1, p. 294.

61 UNESCO, Reports on extensive damage in first emergency assessment mission to Aleppo, 2017, <https://whc.unesco.org/en/news/1619/> (մուտք՝ 10.08.2021).

62 ՏՆՍ International Court of Justice, Reports of Judgments, Advisory Opinions and Orders: Case Concerning Armed Activities on the Territory of the Congo (Democratic Republic of the Congo V. Uganda), Judgment of 19 December 2005, պարագրաֆ 172, <https://www.icj-cij.org/public/files/case-related/116/116-20051219-JUD-01-00-EN.pdf> (մուտք՝ 12.12.2022):

63 Հատկապես խաղաղ քնակությանը չթիրախավորելու նորմն ունի սովորության իրավունքի (jus cogens) ուժ և, անկախ բոլոր իրավիճակներից, պետք է կիրառվի (տես UN, Vienna Convention on the Law of Treaties, 1969, հոդված 53, https://legal.un.org/ilc/texts/instruments/english/conventions/1_1_1969.pdf (մուտք՝ 01.02.2021)):

64 ICJ, Israel, Separation Wall, Security Fence in the Occupied Palestinian Territory, para. 9, <https://casebook.icrc.org/case-study/icj-israel-separation-wallsecurity-fence-occupied-palestinian-territory> (մուտք՝ 12.12.2022).

Երիտասարդությունը մեր ներկան է...

Մովսես Ծիրանի (Հերկելեան)
Արվեստաբանության դոկտոր

Այնճար, «Բարզէն Սինի» ակումբ, 1966, Ամառ

Այդ օր Պէյրուֆէն կուսակցական անձնաւորութիւն մը եկած էր, ժամանակակից հայ երիտասարդի պարտաւորութիւններու եւ իրաւունքներու մասին դասախօսելու: Թէ՛ եւ իր խոսքը առաւելաբար «Եղեռնի» եւ Հայաստանի անկախութեան շուրջ կը դառնար, սակայն ընթացքին ան պարբերաբար կը կրկնէր ու խօսքը ուղղելով մեզի կ'ըսէր. «Մեր յոյսը դուք էք, դուք էք մեր ապագան» ու շեշտը կը դնէր «Առողջ ու Գիտակից Երիտասարդութեան» վրայ:

Երբ պատանիները ցրուեցան վարչութեան անդամներն ու քանի մը ընկերներ (Մեպոի Սգայեան, Վարուժան Փանոսեան, Յակոբ Կեպէշեան, Նորայր եւ Մերոբ Շերպէճեան եղբայրներ, Պետիկ Ինճեյան, Յովհ. Մաճարեան եւայլն), տեղաւորուեցանք գրադարանը (որուն պատասխանատուն էի այդ օրերուն) ու սկսանք քննարկել օրուայ դասախօսին պատգամը, եւ ոչ միայն տարբեր կարծիքներ ու մեկնաբանութիւններ հնչեցին, այլ նոյնիսկ վեճ յառաջացաւ մեր մէջ: Սակայն մէկ հարցի շուրջ բոլորս համաձայն էինք, որ մենք ոչ թէ պէտք է սպասենք ապագային, որպէս զի որոշում առնելու եւ գործելու իրաւունք ձեռք բերենք, այլ մենք՝ իբրեւ «Առողջ ու Գիտակից Երիտասարդներ» պէտք է որ «Ներկան ըլլանք եւ ոչ թէ Ապագան»:

Այս դէպքը յիշեցի, որովհետեւ անցնող ամբաստան տարիներու Պետիկի (Պետրոս Հերեան) աշակերտական շրջանի գրած բանաստեղծութիւնները կ'որոնէի Այնճարի Գալուստ Կիլպէնկեան երկ. Վարժարանի հրատարակած «Մուսալեռ» պարպերագիրքին մէջ, որպէս զի յանձնեմ զանոնք հայրենի գրականագէտներ՝ Դաւիթ Սարգսեանին, Լուսիա Մեհրապեանին եւ Սուրէն Աբրահամեանին (որոնք հետաքրքրուած էին Պետրոս Հերեանի սկզբնական շրջանի բանաստեղծութիւններով), յանկարծ աչքիս զարկաւ «Եղեռնի» տպաւորութեան տակ իմ գրած մէկ շարադրութիւնը, ուր դրսևորուած տեսայ ոչ միայն իմ այլեւ առհասարակ իմ սերունդի գնահատանքն ու կեցուածքը «Եղեռն»ի նման ահաւոր ոճիրներու եւ անարդարութիւններու հանդէպ, այլ նաեւ անուղղակիօրէն կը բացատրուէր թէ ինչո՞ւ այդ օրերուն մենք՝ երիտասարդներս կ'ուզէինք «Ներկան ըլլալ եւ ոչ թէ ապագան»: Տարիներ ետք կարգ մը կուսակցական ղեկավարներ պարբերաբար շեշտեցին որ «Երիտասարդութիւնը մեր ներկան պէտք է ըլլայ»: Նոյնիսկ Արամ Վեհափառը, առիթով մը իմաստութիւնը ունեցաւ յայտարարելու որ «Երիտասարդութիւնը մեր ներկան է»:



Որպէս զի ճիշդ հասկնանք իրար, Մեծ Եղեռնի տպաւորութեան տակ գրուած եւ «Ո՛ւր ես...» Խորագրուած այս «Յուշագրութիւնը» ամբողջութեամբ կ'արտագրեն ստորեւ, վրիպակային որոշ ճշգրտութիւններով եւ առանց սակայն իմաստային ոչ մէկ փոփոխութեան:

(Կիրակի, 23 Ապրիլ, 1967:

Գիշեր էր, երբ տուն վերադարձայ:

Անկողին մտայ 1915-ի Մեծ Եղեռնի դէպքերուն յիշատակով, միտքս պղտոր, հոգիս դատարկ, սիրտս տխուր:

Կը յառաջանամ խումբին հետ չեմ գիտէր ո՞ր:

Գարունը կը ծաղկի,

Մեղմ հովը իր հետ

Միտքս կը տանի,

Լուսադէմ է, կարաւանը կ'երթայ:

Քալեցի, քալեցի,

Տէր Զօրը բարեւեցի.

Բարեւ չառա

Ետեւորան ցոյց տուաւ:

Մահուան վախը ուժգնօրէն կը հարուածէ զիս:



Ողբն կականը ռիտմով կը լեցնեն հոգիս:

Երկիրը ցնցուեցաւ,

Արինախառն աւազը

Երկինքը բարձրացաւ:

Նոյն արինով բիրաւորներ՝ նորածինէն մինչեւ ծերը, Հայօրէն կանգնած՝ կը կանչէին Մահը: Հաւար-



քով կը մօտենային զագաններու, որոնց սիսալմամբ մարդու ձեւ փրուէր էր, եւ որոնք կը փորձէին հայր սրիննով յագեցնել անսպար մը:

Մասնակցեցայ չարչարողներուն եւ փառապետներուն վշտին ու սրտաճմլիկ աղաղակներուն:

Խառնիճաղանձին ձայնը խարոյկի մը պէս կը ճարճարէր, եւ ծուխի պէս թելեր առած կը բարձրանար դէպի երկինք:

Երբ դառն բացականչութեամբ կը փնտրէի արդարութիւնը, որ կորսուած էր, երկու ջղաձիգ բազուկներ երկարեցան աչքիս եւ ամուր մը սեղմեցին կոկորդոս, նման գունատր օձերու, զորս կեանքիս մէջ պիտի չուզէի րեսնել... երբէք:

Արթնցայ: Աչքս բաց դիտեցի շրջապարս, մեր փան մէջ էի, մէր փան... բայց սա դիմացի պարը ինչո՞ն սեւ է, ո՞վ սեւցուց զայն, մանաւանդ որ հայելին կախուած էր անկէ: Մե՛ն, ինչո՞ն:

Շրկուեցայ ու նարայ անկողնիս մէջ: Պաղ հով մը խուժեց պարուհանին անցքերէն ու սառեցուց մարմինս, կարծես ջուրը ինկած էի, բայց ես փունէն չեղայ. հոգ չէ, քրտներ էի:

Պարի սետրեան մէջ ուրուագծեր րեսնուեցան, ոմանց դէմքը ծանօթ էր ինձի: Լսելի ձայնով թոթովեցի Գրիգոր Զօհրայ, Դանիէլ Վարուժան, Միամանթօ, Ռուբէն Մեսակ... ու ճանաչեցայ միաները: Անոնք զանազան ձեւերով իրողութիւններ կը բացարթէին իրարու... թէ՛ւ չէի լսեր անոնց խօսքերը, սակայն համոզուած էի իմաստարարից, թանկարժէք էին: Ասո՛ղ, չէի լսեր:

Աչքերս յառած պարին մարմինս կը սարսուար, ակուններս նոյն ներդաշնակութեամբ կը կափկափէին, հոգիս յուզումով ու զարհուրանքով լեցուն, կը մնայի անշարժ: Միրքս էր միակ շարժողը, որուն զարկերը կը թնդացնէին ականջիս թմբուկները: Անոնց

աչքերէն կը հասկնայի, թէ մե՞ծ կորուստ մը ունէին եւ կը պահանջէին լրի շահուած րեսնել զայն:

Կամացուկ մը գլուխս դարձուցի: Կը զգայի թէ պաղը կը թափանցէր մարմնէս ներս: Աչքերս վերցուցի ու ...:

Ահա այս անգամ ձերմակ պարին վրայ Ադրաանիկներ, Համազասպներ ու Թէլիլրեաններ: Ուշադրութիւնս գրասեց Թէլիլրեանի ուրբերուն փակ Թալէաթը, որուն երախէն հասկցայ որ կ'ըլտէր. - «Բայց դուք դե՛ռ Հայրենիք չունիք»:

- Ունի՞ք... Պոռացի ու անոր գլուխը ճզմուեցաւ Թէլիլրեանի կրունկին փակ:

- Ի՞նչ ունիք...

Ըսաւ եղբայրս որ ձայնէս արթնցած էր:

- Ոչինչ..

Ըսի ու զղջացի: Ո՞վ ըսաւ թէ ոչինչ ունիք:

Ջիղերս պրկուեցան, շնչառութիւնս արագացաւ, հագուստս մարմնիս փակած էր:

Աչքերս փակ պրպրեցի պարմութեան էջերը, սպրեցայ փառքերու մէջ, սակայն մտքէս չելաւ **Ապրիլեան Մեծ Եղեռնը**: Ու վերադարձայ մեր օրերուն...: Հիմն Կարմիր Ջարդը փոխուէր է ձերմակի, որ կը կարարուի անրեսանելի սուրով մը եւ յիշեցի Թալէաթի խօսքը, «Բայց դուք դե՛ռ հայրենիք չունիք»: Միտքս պղպրեցաւ եւ կոպերս ծանրացան: Արդի ժամանակներէն կրկին վերադարձայ դէպի ետ, մինչեւ քարէ դարերը ու Արդարութիւնը գրայ: Ամայութեան մէջ ան կը քայլէր հանդարտ ու յամրաբայլ: Մազերը փունտ ինչի քմայքին, հագած նուրբ ու ձերմակ շրջագեւոր՝ վրան կապած կարմիր գօրի, ու մէջքին սուր:

Ու զիշէր էր:

Լիպլուսինը ջահի պէս կախուած էր երկնակամարէն: Ապրիլերը աչուկ կ'ընէին իրեն ու կը ժպտէին, կը ժպտէր ինք ես...:

Չար էր ան, սիրուն եւ ուրախ: Զեփիտի թաշա-
յին մարներու հայումին փակ մարմինը կը հրճուէր,
քղանցքները կը ծփային սպիտակ մեծ թիթեռի մը
պէս... Բայց յանկարծ երկինքը պայտոտեցաւ: Լոյսէ
գունդ մը կայծակի արգութեամբ կ'իջնէր կրակէ
շանթեր արձակելով երփն. վազեց ան... վազեց ու
ճանկեց այդ լոյսը: Խոցուած սիրտ մըն էր, որմէ արին
կը կարթկէր: Բացուեցաւ ու Արդարութիւնը կարդաց.

- Հաւարք, Յոյս, Պարի, Աշխարհաւնք, Պայքար,
Կեանք, Յեղափոխութիւն, Ազատութիւն, Ազգութիւն
ու... բայց ոչ Արդարութիւն: Գունալեզու ան, մկան-
ները պրկեց, ակոսները սեղմեց ու առանց երփն
նայելու շղթաիգ քայլերով հեռացաւ: Հոս՝ անպե-
րը արթնցան, որոտացին ու ձիւնը սառեցուց ար-
դարութեան ճամբան: Հոն՝ արեւը իր պորտին վրայ
կանգնեցաւ ու խայթող շանթեր արձակելով՝ չորցուց
արդարութեան ճամբան:

- Ո՛վ մարդիկ, Ո՛ր է Արդարութիւնը, կայ արդա-
րութիւն: Եթէ կայ, վարսահ եղէք որ Մենք կը գրնենք
զայն...)

Մովսէս Ս. Հերկելեան (Ժ. Դասարան)
{«Մուսա Լեռ» պարբերագիրք, Ե. Տարի, թիւ 1(9)}

Այն ատեն այդպէս էր, այսօր ուրիշ է: Քառասուն
տարիներ անցած են, եւ երէց եւ արդէն եւ շատ բան
փոխուած է թէ իմ մէջ եւ թէ առհասարակ ողջ աշ-
խարհի տարածքին: Այնուամենայնիւ երիտասարդու-
թեան հանդէպ ունեցած համոզումս թէիւ փոխուած
չէ, սակայն կայ նորը հարց մը որ կարիք ունի բա-
ցատրման...:

Հիմա ալ կը հաւատամ որ «Երիտասարդութիւնը
պէտք որ մեր ներկան ըլլայ», որովհետեւ Երիտա-
սարդութիւնը ազգային այն ներուժն է, որ յաճախ
կրցած է փոխել կեանքի ընթացքը, պատմութեան
անիւն ու նոյնի՛սկ աշխարհագրութիւնը: Սակայն հոս
պահ մը կանգ առնենք ու մէջբերենք մեր դիւցազ-
ներգութեան մեծագոյն «դասը», որ ուղղակիօրէն
կ'առնչուի այս հարցի հետ: Չորս սերունդ ներկայաց-
նող «Մասնայ Ծոբերու» գլխաւոր հերոսները, բոլորն
ալ ոչ թէ երիտասարդներ, այլ նոյնի՛սկ պատանե-
կան տարիներուն կը սկսին պաշտպանել իրենց ժո-
ղովուրդի ազգային ու մարդկային իրաւունքները,
ազատագրել, շէնացնել ու բարգաւաճացնել իրենց
հայրենիքն ու օգնել նաեւ ուրիշներուն: Սակայն
անոնք իրենց կողքին, իբրեւ օգնական եւ խորհրդա-
տու ունէին, կեանքի յորձանուտին մէջ թրծուած՝ այլ
դիւցազ մը՝ Քեռի Թորոսը, որ ի սկզբանէ՝ սկսեալ Հայ
ազգի ծննդոցէն մինչեւ վերջ, ի յայտ կու գայ իբրեւ
«առողջ ու գիտակից» երէցներու ներկայացուցիչ, որ
ոչ կը մեծնայ, ոչ կը ծերանայ եւ ոչ ալ կը մահանայ...:
Չես գիտեր ինչո՞ւ Քեռի Թորոսի մասին գրեթէ չի խօ-
սուիր, հակառակ անոր որ ան ամենադրական ու ամե-
նաուսանելի կերպարն է մեր դիւցազներգութեան մէջ:

Պատմութիւնը կ'ապացուցէ, որ այն բոլոր երի-
տասարդները, որոնք իրենց կողքին չեն ունեցած
առողջ եւ գիտակից Քեռի Թորոսներ կամ օգտուած
կեանքի փորձառութեան վրայ հիմնուած երէցնե-

րու իմաստութիւններէն, ձեռք բերելով հանդերձ մեծ
յաղթանակներ ու շօշափելի նուաճումներ երիտա-
սարդ տարիքներուն կործանուած են, առանց կա-
րենալ շարունակելու իրենց առաքելութիւնն ու իրա-
գործելու՝ իրենց բոլոր նպատակները: Այնպէս ինչպէս
հին եգիպտացիներու Նեֆերթիթին եւ Կլեոպատրան,
հին Յոյներու Ալեքսանդր Մակեդոնացին, արարնե-
րու Փալմիրայի Զենուպիա Թագուհին եւ կամ թէկու՞
ֆրանսացիներու Ժանն Տ'արքը: Իսկ անոնք որոնք
իրենց կողքին ունեցած են Քեռի Թորոսներ կամ
օգտուած են կեանքի փորձառութեան վրայ հիմնուած,
անոնց ձեռք բերած իմաստութիւններէն, անոնք կրցած
են շարունակել իրենց առաքելութիւնն ու իրագործել
իրենց նպատակները եւ իշխած են երկար տարիներ
ու յաճախ բնական մահով մահացած: Այնպէս ինչպէս.
հին եգիպտացիներու Հաչեպտութ փարաւոնուհին, չի-
նացիներու Յին Չի Հուանկ առաջին կայսրը, հռոմէա-
ցիներու Օգոստինոս մեծագոյն կայսրը (Օգոստոս)
եւ կամ թէկու՞ թորքերու Մեհմետ Բ. սուլթանը...:

Այսօր աշխարհը քաղաքական, տնտեսական ու ըն-
կերային գետնի վրայ ճակատագրականօրէն խառ-
նաշփոթ եռեւեփումի մէջ է... կեանքը տագնապալից
է ու սպազան անորոշ...: Ինչպէս ուրիշներու, այնպէս
ալ ոտնահարուած են մեր ազգային ու մարդկային
իրաւունքներն ու արժանապատուութիւնը: Խիստ
վտանգուած են մեր ոգեղէն արժէքներն ու ազգային
ինքնութիւնը: Գոյատեւման պայքարը թէիւ կը շա-
րունակուի, սակայն տիրող պայմաններն ու հնարաւո-
րութիւնները, ըլլան անոնք միջազգային, ազգային թէ
հայրենական՝ աննպաստ են մեզի համար ու թերի:
Այս բոլորին առընթեր եթէ մենք մտահոգ ենք մեր
ազգային ճակատագրով, ապա անյապաղօրէն պէտք
ունինք մեր առողջ ու գիտակից երիտասարդութեան
ներուժին, անոր թարմ ու շինիչ ստեղծագործ մտքին
ու գաղափարներուն, յատկապէս՝ «յանդգնութեան»,
որպէս զի որոշում առնելու եւ գործելու իրաւունք ունե-
նան ներկայի մէջ, իրենց կողքին ունենալով սակայն
«Քեռի Թորոսի» նման երէցներ...:

Վերջացնելէ առաջ կ'ուզեմ ձեր ուշադրութիւնը
հրաւիրել ժամանակակից Արիեստական բանակա-
նութեան (AI) վրայ: Վերջին տասնամեակներուն
աշխարհը փոխող, կեանքի ընթացքը ուղղորդող եւ
յաղթանակներու աւարտը որոշող՝ մեծագոյն ուժի
AI-ի վրայ, որուն մեծագոյն նախնիները, գրեթէ
բոլորն ալ երիտասարդներ եղան, ինչպէս. «Ամագո-
նի» հիմնադիր՝ Ճէֆ Պէգոսը, «Ափիլի»-ի հիմնադիր՝
Սթիւ Ճոպսը, «Ալի Պապայի» հիմնադիր՝ Ճէք Մանը,
«Թէլայի» հիմնադիր՝ Էլոն Մաքսը, «Մայքրոսոֆթի»
հիմնադիր՝ Պիլ Կէյթսը, «Ֆէյս Պուքի» հիմնադիր՝
Մարք Զուքերպերկը, եւ այլն:

Այո, կը կրկնենք որ «Երիտասարդութիւնը մեր
ներկան պէտք է որ ըլլայ եւ ոչ թէ սպազան»:

**Հոդվածում օգտագործված են Ս. Հերկելյանի երի-
տասարդության շրջանի գեղանկարները:**

«Դեպի կախաղան». վկայությունը որպես ազգային հիշողության կառուցման ակտ

Տիգրան Զանդոյան
Քաղաքագետ

Թափառականը՝ Գևորգ Հալաջյանը, այն անուններից է, որը երկար ժամանակ մնացել է հայ ընթերցողի տեսադաշտից դուրս: Նրա ստեղծագործական ժառանգությունը, կարելի է ասել, գրեթե չի շրջանառվել հանրային մակարդակում: Խորհրդային շրջանում ընթերցողին հասանելի դարձած միակ գործը «Դերսին» հատորն էր՝ ընդգրկված հայ ազգագրության բազմահատոր ժողովածուում: Այդ աշխատանքը, թեև արժեքավոր, իր բնույթով մասնագիտական է՝ առավելապես ազգագրական և մասամբ հուշագրական, ուստի չէր կարող լայն ընթերցողական արձագանք ստանալ:

Մինչդեռ Հալաջյանի գրական և պատմական ժառանգության առանցքը կազմում է մեկ այլ գործ՝ 1932 թվականին Բոսթոնում «Հայրենիք» հրատարակչության հրատարակած «Դեպի կախաղան» հուշագրությունը: Այս գիրքն իր նշանակությամբ դուրս է գալիս պարզ հուշագրության սահմաններից՝ վերածվելով կարևոր փաստավավերագրական աղբյուրի, հատկապես ցեղասպանության հետևանքների ուսումնասիրության համար: Սակայն, հակառակ իր արժեքին, այն հայաստանյան ընթերցողի համար երկար ժամանակ մնացել է անհասանելի:

Այս «մոռացության» պատճառները պայմանավորված էին ինչպես նյութական, այնպես էլ գաղափարական հանգամանքներով: Մի կողմից՝ գիրքը դարձել էր հազվագյուտ բուկինիստական օրինակ, որի հասանելիությունը խիստ սահմանափակ էր: Մյուս կողմից՝ դրա ընդգծված ազգային բնույթը և թեման էին տեղավորվում խորհրդային գաղափարախոսական և քաղաքական սահմանափակումների շրջանակում: Որպես հետևանք «Դեպի կախաղան»-ը դուրս էր մղվել գրական շրջանառությունից ինչպես չէր արժանացել անհրաժեշտ գիտական ուշադրության:

Հատկանշական է, որ նման հարուստ փաստական նյութ պարունակող հուշագրությունը, որը կարող էր էական ներդրում լինել ցեղասպանագիտության, քրդագիտության և ընդհանուր պատմագիտական ուսումնասիրությունների մեջ, երկար ժամանակ մնացել է գրեթե չուսումնասիրված: Սա մեծ բաց է հայոց պատմության աղբյուրագիտության ոլորտում:

Վերջապես, գրքի առաջին հրատարակությունից մոտ ինստուններկու տարի անց, «Դեպի կախաղան»-ը նոր կյանք է ստանում: Մի խումբ նվիրյալ անձանց ջանքերով և անձնական միջոցներով այն վերահրատարակվում է Հայաստանի Հանրապետությունում՝ դառնալով հասանելի նոր սերնդի ընթերցողի, ինչպես և մասնագետների համար: Այս նախաձեռնությունը ոչ միայն գրքի վերադարձ է գրական միջավայր, այլ նաև կարևոր քայլ՝ ազգային հիշողության պահպանման և, այսպես ասած՝ շրջանառության ուղղությամբ:



Հատուկ ընդգծման արժանի է այն մարդկանց ներդրումը, ովքեր իրականություն դարձրին այս հրատարակությունը: Բաֆֆի Քեռինեյանն ու Շահե Աճեմյանն իրենց մասնակցությամբ և նվիրումով էական դեր են ունեցել այս կարևոր գործի իրականացման մեջ:

Հայ մեմուարային գրականության մեջ կան գործեր, որոնք իրենց նշանակությամբ գերազանցում են գրականության սահմանները և վերածվում ազգային հիշողության պահպանման և փոխանցման համար արժեքավոր աղբյուրի: Գևորգ Հալաջյանի «Դեպի կախաղան» հուշագրությունն այդպիսի եզակի նմուշներից է: Այն գրված է ոչ թե որպես գեղարվեստական ինքնարտահայտման փորձ (չնայած լիովին կարող էր լինել այդպիսին իր գեղարվեստական որակներից ելնելով), այլ որպես պարտք՝ սեփական աչքով տեսածը, ապրածը և հավաքածը փոխանցելու ապագա սերունդներին՝ պահպանելու համար նրանց հիշողությունն ու պահանջատիրությունը: Այս գիրքը ծնվել է ժամանակի հրամայականից և ազգային գոյության ճգնաժամի պայմաններում ձևավորված պատասխանատվությունից:


Հալաջյանի հուշագրությունը ներկայացնում է հայության ճակատագիրը ցեղասպանությունից հետո. մի փուլ, որի վրա հաճախ սովեր է նետում 1915 թվականի ողբերգական իրադարձությունների շարանը: «Դեպի կախաղան»-ը բացում է այդ պատմության հաջորդ, ոչ պակաս կարևոր շերտը՝ ցեղասպանության վերապրածների գոյության պայմաններն Օսմանյան

Կայսրության ավերակների վրա ստեղծված նորելուկ Թուրքիայի Հանրապետությունում, նրանց ֆիզիկական և հոգևոր գոյության համար տարվող պայքարը, և, ամենակարևորը, ինքնության պահպանման տարբեր ձևերը թշնամական միջավայրում: Դեպի Դիարբեքիր (Տիգրանակերտ)՝ Անկախության առյանի առջև դատվելու գնալիս հեղինակը շրջում է Արևմտյան Հայաստանի և նախկին Օսմանյան կայսրության տարբեր վայրերով, և նրան ուղղորդում է ոչ թե փախուստի կամ գոյատևման մղումը, այլ մեկ նպատակ՝ գտնել և արձանագրել հայության մնացորդներին, տեղեկանալ նրանց վիճակից, փնտրել ու գտնել ցեղասպանության այս բեկորներին փրկելու ուղիներ:

Այս որոնումը, ըստ էության, դառնում է գրքի հիմնական շարժիչ ուժը: Հալաջյանը հանդես է գալիս ոչ միայն որպես վերապրող, այլև որպես յուրօրինակ հետազոտող: Նա հավաքում է տվյալներ՝ բնակավայրերի, մարդկանց, նրանց ֆիզիկական, սոցիալական և հոգևոր վիճակի մասին: Հարցուփորձերի միջոցով նա ի դերն է հանում ցեղասպանության մասին մանրամասներ և դրանք հանձնում իր օրագրին՝ վերածելով անփոխարինելի վավերագրության: Նրա ուշադրությունը կենտրոնացած է հատկապես այն հայերի վրա, ովքեր տարբեր հանգամանքների բերումով մնացել են իրենց բնակավայրերում՝ հաճախ փոխելով հավատքը կամ արտաքին ինքնությունը, երբեմն պատասխանատվություն ստանձնելով իրենց հույսին մնացած տեղում բնակվող այլ վերապրածների համար: Այս մարդիկ ներկայացվում են ոչ թե որպես վերացական «մնացորդաց», այլ որպես կենդանի անհատներ՝ իրենց ներքին հակասություններով, հիշողություններով և գոյատևման տրամաբանությամբ: Նրանց գործադրած տիտանական ու աննկարագրելի ջանքերով՝ փրկելու ու պահպանելու իրենց և իրենց ազգակիցների կյանքն ու ինքնությունը:

Գրքի վերնագիրը՝ «Դեպի կախաղան», իմաստային առումով բազմաշերտ է: Այն, նախ և առաջ, կապված է հեղինակի անձնական ճակատագրի՝ մահապատժի դատապարտվելու մշտական վտանգի հետ, քանզի, չնայած քաջության ու խելքի շնորհիվ, Հալաջյանը խուսափում է մահապատժից և դատապարտվում 15 տարվա շրջայակիր բանտարկության և 101 տարվա բանտարկության, կորստյան մատնվելու վտանգը միշտ կախված է մնում Թափառականի գլխին, ինչն էլ արձանագրված է հուշագրության էջերում: Այսքանով հանդերձ, վերնագիրը խորհրդանշում է նաև այն պատմական իրավիճակը, որի մեջ հայտնվել էր ամբողջ հայ ժողովուրդը: «Դեպի կախաղան» ընթացքն այստեղ ոչ միայն ֆիզիկական սպառնալիք է, այլև հոգեբանական և գոյաբանական վիճակ՝ մշտական անորոշության, վախի և վտանգի պայմաններում ապրելու կենսակերպ, և, ամենակարևորը, սեփական ինքնության կորստի ամենակնթարթյա սպառնալիք: Այս իմաստով գիրքը դառնում է ոչ միայն անհատի, այլև ժողովրդի հավաքական ողբերգության, մաքառումի և փորձառության վավերագրություն:

Հալաջյանի հուշագրության ամենակարևոր նշանակությունը դրա փաստագրական բնույթն է: Նա



մանրամասներն նկարագրում է տարբեր բնակավայրերի իրավիճակը՝ սշելով, թե քանի հայ է մնացել, ինչ պայմաններում են նրանք ապրում, ինչպես են «ինտեգրվել» կամ ինչ ձուլման քաղաքականության զոհ են դարձել: Այս մանրամասները կարևոր են ոչ միայն որպես պատմական փաստեր, այլ նաև որպես ազգային հիշողությունը վառ պահելու միջոց: Հուշագրությունը փաստացի լրացնում է այն բացերը, որոնք առկա են պաշտոնական պատմագրության մեջ: Այն ներկայացնում է տեսանկյուն «ներքևից» ցեղասպանության վերապրող անհատի մակարդակից, և այս առումով ունի միկրոպատմագրական արժեք: Մյուս կարևոր պատմագրական արժեքը, որն անմիճելիորեն ունի Հալաջյանի գիրքը, հուշագրության ընդգրկած ժամանակաշրջանն է՝ 1924-1928 թվականները: Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում գերակշռում են օսմանյան շրջանում տեղի ունեցած իրադարձությունները, այնինչ ցեղասպանությունը կրել է շարունակական բնույթ հանրապետական Թուրքիայի թե՛ վաղ շրջանում՝ տեղահանությունների, սպանությունների, ուժացման տեսքով, և թե՛ Թուրքիայի Հանրապետության ողջ ընթացքում, որպես ցեղասպանական գործողություն ներառելով պատմական և մշակութային հուշարձանների և արժեքների ոչնչացումը և/կամ յուրացումը, ինչը ևս ցեղասպանական ակտ է:

Այսքանով հանդերձ պետք է նկատել, որ Հալաջյանի գիրքը չի համապատասխանում ակադեմիական պատմագրության չափանիշներին: Այն կառուցված չէ գիտական մեթոդաբանությամբ, չունի աղբյուրների համակարգված վերլուծություն կամ քննադատություն: Սակայն անմիջականությունն ու անկեղծությունն այն դարձնում են յուրատեսակ ու եզակի իր ձևի մեջ: «Դեպի կախաղան»-ը առաջնային աղբյուր է, որը փոխանցում է ոչ միայն փաստերը, այլև դրանց ընկալումը, զգացողությունը, մարդկային ապրումն ու արձագանքը տեղի ունեցողի նկատմամբ թե՛ հեղինակի, թե՛ հիշատակված անհատների դեպքում:

Լեզվական առումով գիրքը նույնպես առանձնատու է իր ինքնատիպությամբ: Հալաջյանը չի ձգտում գեղարվեստական մշակված ձևերի, չի օգտագործում բարդ ոճական հնարքներ: Նրա լեզուն պարզ է, շիտակ, երբեմն կտրուկ, երբեմն նույնիսկ կոպիտ: Մա-

կայն այս անմիջականությունն ու պարզությունը լիովին համահունչ են ներկայացվող բովանդակությանը: Միաժամանակ ընթերցողի աչքից չի վրիպում, որ հեղինակը կրթված, գաղափարական հասունության տեր ազգային անհատ է: Հալաջյանի լեզուն գործնական է, բայց միաժամանակ ազդեցիկ, կարողանում է փոխանցել պահի լարումը, զգացմունքային երանգները: Երբեմն կիրառում է թուրքերեն և քրդերեն բառեր և դարձվածքներ, որոնց տիրապետում է մայրենիին հավասար: Այս տեսանկյունից գիրքն ունի բանասիրական մեծ արժեք:

Հուշագրության կարևոր շերտերից է նաև հեղինակի հոգեբանական պատկերը: Հալաջյանը չի ներկայանում որպես անսխալական կամ հերոսական կերպար: Նա բացահայտ խոսում է իր վախերի, կասկածների, երբեմն՝ հուսահատության մասին: Հաճախ ենք հանդիպում օրագրում վերջին գրառում անելու մասին տողերի, որին հաջորդում է մի նոր «հրաշապատում»՝ հերթական անգամ ինչ որ մի դիպվածով փրկվելու մասին: Այս անկեղծությունը կարևոր է, քանի որ այն թույլ է տալիս ընթերցողին տեսնելու իրական մարդուն և ոչ թե իդեալականացված կերպար՝ մի թակարդ, որի մեջ հաճախ են ընկնում հուշագրական գրականության հեղինակները: Միաժամանակ, հենց այս մարդկայնությունն ու իսկությունն է, որ ընդգծում են նրա տոկունությունն ու կամքը: Դիմադրությունն այստեղ ներկայացվում է ոչ թե որպես վերացական գաղափար, այլ որպես ամենօրյա, ամենժամյա, ամեն վայրկյանի իրական ընտրություն՝ հաճախ կյանքի և մահվան սահմանագծին, լի անիրական, արկածային վեպ հիշեցնող դրվագներով:

Գրքում առկա է հստակ ազգային-գաղափարական շերտ: Հալաջյանի համար հայ լինելը ոչ միայն փաստական իրողություն է, այլ նաև պարտավորություն, դաստանձնած և պատվով կրվելիք խաչ է, որը, չնայած հոգեկան ակնթարթային անկումներին, կրում է պատվով և մինչև վերջ: Նրա գործողությունները՝ շրջելը, որոնելը, գրառելը, պայմանավորված են ազգային գիտակցությամբ: Նա չի մտահոգվում անձնական փրկությամբ, այլ փորձում է ծառայել ազգային շահին՝ ջանալով թե՛ յուրաքանչյուր մագապործ հայի ճակատագրի համար, թե՛ արձանագրելով, պահպանելով և փոխանցելով հիշողությունը: Այս առումով «Դեպի կախաղան»-ը կարելի է դիտարկել նաև որպես գաղափարական գրություն, որը ձևավորում է ազգային ինքնագիտակցություն և հիշողություն:

Կարևոր է ընդգծել, որ գիրքը ներկայացված չէ զուտ որպես ողբերգության նկարագրություն: Թեև հիմքում ծանր անցյալն է, հուսահատեցնող ներկան և անորոշ ապագան, Հալաջյանը ցույց է տալիս այդ իրականության մեջ հայության գոյատևման տարբեր դրսևորումները, մարդկային հարաբերությունների բարդությունը, երբեմն նույնիսկ անսպասելի ուժն ու մաքառման կորովը: Այս առումով «Դեպի կախաղան»-ը մի իսկական դյուցազնավեպ է հիշեցնում:

Գրեթե մեկդարյա հեռավորությունից նայելով, որպես գրքի առանցքային նպատակ կարող ենք նշել պայքարը հիշողության համար և ընդդեմ մոռացու-

թյան: Հալաջյանը հասկանում է, որ իր տեսածն ու գրածը կարող են կորչել, եթե դրանք չվերածվեն գրի և չհասնեն ընթերցողին: Սա գրքին տալիս է յուրահատուկ կարևորություն: Յուրաքանչյուր գրառում կարծես փորձ է կանգնեցնելու ժամանակը և պահպանելու այն, ինչն այլապես կարող էր անհետանալ: Հենց սա է, որ հուշագրությունը դարձնում է ոչ միայն անցյալի արձանագրում, այլ նաև ապագային ուղղված պատգամ:

«Դեպի կախաղան»-ը ձևավորում է պատմության ընկալման յուրօրինակ մոտեցում: Այն ընթերցողին ստիպում է հրաժարվել միայն «մեծ պատմության» տեսանկյունից մտածելուց և ուշադրությունը տեղափոխել անհատական ճակատագրերի վրա: Այս մոտեցումը թույլ է տալիս տեսնել, թե ինչպես է պատմությունը իրականում գործում մարդկանց կյանքում՝ ոչ թե որպես վերացական գործընթաց, այլ որպես կոնկրետ փորձառություն: Այս իմաստով Հալաջյանի գործը նաև մեթոդաբանական նշանակություն ունի՝ առաջարկելով այլընտրանքային հայացք պատմության ուսումնասիրման հարցում:

Այնուամենայնիվ, գիրքը պահանջում է պատրաստված ընթերցող: Օրագրային կառուցվածքը, հաճախ կրկնվող նկարագրությունները, հուզական առումով ծանր բովանդակությունը կարող են դժվարություն առաջացնել: Սա այն գրքերից չէ, որոնք ընթերցվում են արագ կամ հեշտությամբ: Այն պահանջում է ուշադրություն, համբերություն և մտավոր կենտրոնացում, ինչը անշուշտ արդարացված է՝ հաշվի առնելով գրքի եզակիությունը և կարևորությունը:

Այսօր, երբ ազգային հիշողության և ինքնության հարցերը շարունակում են արծարծվել նախկին սրությամբ, երբ կանգնած ենք լրջագույն հանգրվանի առջև, երբ շոշափելիորեն վտանգված են հայոց ինքնության բաղադրիչ հանդիսացող շատ տարրեր, Հալաջյանի հուշագրությունը ստանում է նոր հնչեղություն, կարևորություն և իմաստ: Այն հիշեցնում է, որ պատմությունը միայն անցյալի արձանագրումը չէ, այլ նաև ներկայի և ապագայի ձևավորման գործիք: «Դեպի կախաղան»-ը դառնում է ոչ միայն վկայություն, այլև զգուշացում՝ ընդդեմ մոռացության և անտարբերության:

Ֆեդրզ Հալաջյանի՝ Թափառականի «Դեպի կախաղան» հուշագրությունը բացառիկ արժեք ունեցող գործ է, որը պետք է արժևորել ոչ միայն գրական, այլև պատմական և գաղափարական տեսանկյունից: Այն իր փաստագրական հարստությամբ, անկեղծությամբ և ազգային գիտակցության ուժեղ շեշտադրմամբ դառնում է անփոխարինելի աղբյուր, որը պահանջում է պատասխանատու վերաբերմունք թե՛ ուսումնասիրողից, թե՛ շարքային ընթերցողից և դրա դիմաց փոխանցում է խորքային ըմբռնում՝ թե՛ անցյալի, թե՛ ազգային ինքնության էության վերաբերյալ, ինչպես նաև պատասխաններ մերօրյա որոշ հարցերին:

Եվ թերևս հենց այստեղ է դրա գլխավոր արժեքը. այն ոչ միայն պատմում է, այլ նաև ձևավորում է հիշելու և հասկանալու կարողություն՝ վերածվելով ազգային հիշողության կառուցման մի յուրովի ակտի: ■

Ուրիշները ինչ կ'ըսեն Նահանջ, սնանկություն, թե՛ ձախողություն

Վրէժ-Արմէն

Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի ասագ խմբագիր

Հարցադրումը կատարողը իմաստասեր մըն է՝ Փիեռ-Փոլ Շարլըպուա, Մոնթրեալ հրատարակող Լը Տըվուար (Le Devoir) օրաթերթի 24 մարտ 2026-ի թիվին մէջ «Ժողովրդարությունը սնանկացած է»՝ վերնագրուած իր դիպուկ յօդուածի վերջատրութեան:

Անոր անդրադառնալէս առաջ, սակայն, կ'ուզեն ներկայացնել անկէ քանի մը օր առաջ՝ նոյն թերթի 21-22 մարտ շաբաթավերջի համարին մէջ իմաստասիրութեան դասախօսի մը՝ Թիեռի Ժանտրոն-Տիկրէի ուշագրաւ յօդուածը՝ «Ռանսիէր եւ ժողովրդավարութեան արեւելութիւնը»,² որ կը սկսի շեշտելով արհմիութիւններու կենսական դերակատարութիւնը ժողովրդավար կարգեր հաստատելու տեսակէտէն ու դրամատիրութեան ընդդիմութիւնը այդ նպատակին դէմ:

Ի տարբերութիւն խորհրդարանական վարչադրոյթին, ուր պարզ քաղաքացիին ձայնը իր երեսփոխանին ճամբով միայն տեղ կը հասնի, կը գրէ հեղինակը, արհմիութիւններու անդամները անձամբ կ'որոշեն իրենց նախապատուութիւնները եւ անձամբ կը քուէարկեն ընտրելու կամ պաշտօնանկ ընելու իրենց ղեկավարները. «արհմիութիւնները այն հազուագիտ կազմակերպութիւններէն են, որոնք կրնան նկատուիլ ուղիղ ժողովրդավարութիւն»:

Երբ կառավարութիւններ կը ջանան սահմանափակել արհմիութիւններու գործելու միջոցները, այդ ընելով անոնք մասնակից կը դառնան «ժողովրդավարութեան ատելութեան», ինչպէս որ զայն կը կոչէ ֆրանսացի իմաստասեր Ժագ Ռանսիէր (Jacques Rancière) իր նոյնանուն գիրքին (2005) եւ յօդուածներու «Անիտառնակ երեսուն տարիները» (Les trente inglorieuses, 2022) հատընտիրին մէջ: Ըստ անոր, այդ ատելութիւնը «հաւասարութեան ատելութիւն» մըն է, համոզում մը, որ անոնք, որոնք «քաղաքականութեան մասնագէտներ» չեն, անկարող են հասարակաց բարօրութեան համար որոշումներ կայացնելու, ուստի քաղաքական իշխանութիւնը պէտք է ձգուի «ընտրանի»-ի մը, «քաղաքական դասակարգի» մը՝ բաղկացած մասնագէտներէ, որոնք միայն իրենք են բարարար հմուտ ու բանական՝ հասարակաց շահը պաշտպանելու համար: Նոյնպէս, Ռանսիէրի համաձայն, մենք ոչ թէ ժողովրդավարութիւններու մէջ կ'ապրինք, այլ սակաւապետութիւններու, այսինքն՝ քաղաքական համակարգերու՝ ղեկավարուած քաղաքական ու տնտեսական շրջանակներու ամուսնութենէն յառաջացած քաղաքական դասակարգի մը կողմէ:

Այդ ատելութիւնը, կ'ըսէ Ռանսիէր, օրին երեսն եկած է նոյնիսկ Պոլատոնի մօտ, որ իր «Հանրապետութիւնը» գործին մէջ անիշխանութիւն կը նկատէր



Աթէնքի մէջ առկայ ուղիղ ժողովրդավարութիւնը եւ կը ջատագովեր... ղեկավարութիւն մը կազմուած իմաստասէրներէ, որոնք միայն կրնային տիրապետել «քաղաքական գիտութեան», որով եւ գիտնալ ինչ որ արդարութիւնն ու հասարակաց բարիքը կը պահանջեն:

Ռանսիէր դիտել կու տայ թէ աշխարհայնացած դրամատիրութեան այս դարուն, «բազմագիտութիւնը» կամ «գիտութիւնը», որ մեր ղեկավարները կը յաւակնին ունենալ, կը կայանան «լաւ հաւասարակշռութիւն» մը պահելուն մէջ տնտեսական անսահմանափակ զարգացման եւ այդ զարգացման սահմանափակման միջեւ, որ պէտք է պարտադրուի տեղական առումով՝ նուազեցնելու համար անոր [յոռի] հետեւանքները բնակչութեան վրայ: Բայց Ժանտրոն-Տիկրէ կը կասկածի թէ նման ճշգրիտ գիտութիւն կայ արդարութեան եւ հասարակաց բարիքի վերաբերեալ: Մինչդեռ, կ'աւելցնէ ան, մեր ղեկավարները ժողովուրդը տգէտ կը համարեն, եթէ ան իր ձայնը լսելի դարձնէ հակադրուելու համար իրենց «գիտութեան»՝ ընդդիմանալով «խստամբերութեան միջոցառումներուն», մեծ ընկերութիւններուն շնորհուած առաւելութիւններուն կամ բնութեան քանդումին: Ռանսիէրի համար մեր սակաւապետական կառավարութիւններուն «մեծ փափագն» է «կառավարել առանց ժողովուրդին, այսինքն՝ առանց ժողովուրդին բաժին հանելու. կառավարել առանց քաղաքականութեան»:

Այժմ վերադառնամ Շարլըպուայի, որ անդրադառնալէս ետք Ռանսիէրի վերաբերեալ վերոնշեալ յօդուածին, կը գրէ. «Արդ, ժողովրդավարութիւնը ոչ



Փիլեն-Փոլ Շարպրպուս



Թիեռի Ժանսպրոն-Տիւլրէ

միայն վտանգաւոր գրաւ մըն է, այլեւ կը հիմնուի խաբէութեան մը վրայ»:

Առաջին հերթին՝ որովհետեւ կ'ենթադրուի, թէ բոլորը նոյն օրէնքներուն համաձայն կը գործեն. մինչդէռ գոյութիւն չունին նման հասարակաց օրէնքներ, ապա կը կարծուի թէ ժողովրդավարութիւնը «նուազ յոռին է բոլոր քաղաքական համակարգերէն», ինչպէս օրին հեգնած է Չըրչիլ, այլեւ թէ ժողովրդավարութեան կամ օրէնքի պետութեան առաւելութիւնը «ինքնաակնյայտ» է, ինչպէս կ'ափսոսայ Ան Ափիլպօմ իր «Ինքնակալութիւն(ներ)» փորձագրութեան մէջ:

Երկրորդ հերթին, եւ որոշ հեգնանք մը կայ այդտեղ, մենք մեզ կը բացայայտենք, հակադարձաբար, մեր իսկ ինքնախաբէութեան մէջ ինկած, աւելի՛ պատրանքի ձեւի մը մէջ՝ մենք մեր նկատմամբ: Կ'ենթադրենք, թէ մեր ընտրած ներկայացուցիչներուն եւ մեր միջեւ գոյութիւն ունի արժէքներու համախոհութիւն մը: Մինչդէռ այդ չէ իրականութիւնը, որ գրեթէ երբեք չի գործակցիր մեր իտէլիներուն հետ: Որովհետեւ միշտ կրկնուող հարցումը այն է, թէ ինչպէ՞ս ժողովրդավար պետութիւն մը կրնայ նկատի ունենալ տեսաբար աճող եւ երբեմն հակադրուող, երբեմն անհամատեղելի տեսակէտներու եւ իրայատկութիւններու բազմակիութիւնը, քաղաքական կառոյցի մը մէջ, որ յամենայն դէպս իբր օրինական ընկալուած է իր բոլոր անդամներուն կողմէ: Կարճ՝ ինչպէ՞ս հաշտեցնել միասնութիւն եւ այլազանութիւն:

Այս հարցը ամերիկացի իմաստասէր Ջոն Ռօլզի (John Rawls) համար ժամանակակից քաղաքական իմաստասիրութեան ամենէն կարեւոր հարցերէն մէկն է: Ինչպէ՞ն կարելի է, որ գոյութիւն ունենայ եւ յարատեւէ արդար ու կայուն ընկերութիւն մը՝ կազմուած ազատ ու հաւասար քաղաքացիներէ, որոնք սակայն

խորապէս բաժնուած են իրենք իրենց միջեւ՝ իրենց ընդհանուր, բարոյական, իմաստասիրական եւ կրօնական տեսութիւններուն պատճառաւ, տեսութիւններ որոնք իրարու հետ անհամատեղելի են, որքան ալ տրամաբանական ըլլան: Թերեւս պէտք է ընդունիլ այն յարակարծութիւնը, թէ կարելի չէ ժողովրդավարութիւնը պարտադրել:

Նաեւ պէտք է դադրիլ ունենալ այն խաբկանքը, թէ աւելի բաց ու ներշնչակապուած աշխարհի մը մէջ ժողովրդավարութիւնն ու ազատական գաղափարները պիտի տարածուին ու խորապէս փոխեն ինքնակալական ու աւագակալական պետութիւնները: Ինչպէս կը հաստատէ Ան Աբբլպօմ, կը յարէ Շարլըպուս, հակառակն է, որ կը պատահի:

Այս գրաւը շահելու համար, բոլոր քաղաքացիները պէտք է նոյն սեղանին շուրջ ըլլան: Մինչդէռ «բախտաւոր քիչերն» են, որ խաղի այդ սեղանին կրնան մատչիլ, ուստի մեր ժողովրդավարական իտէալը տեսաբար կը փշրուի դէմ-յանդիման ինքնակալներուն եւ աւագակալներուն գայթակղեցուցիչ սուտերուն, ժողովրդահաճ բեռեացման, իշխանապետական բռնութեան, կրօնական շահախումբերու ներթափանցման, տնտեսական անհաւասարութիւններուն, համակարգային նեխումին, շահու խայծին եւ այլն:

Յօդուածագիրը կ'աւարտէ իր գրութիւնը հարց տալով, թէ ժողովրդավարութիւնը նահանջի մէջ է, սնանկացած է, թէ՛ պարզապէս ձախողութիւն մըն է: Եւ եթէ այդպէս է, կայ այլընտրանք մը: ■

Հղումներ

1. Pierre Paul Charlebois, La démocratie est-elle en faillite?
2. Thierry Gendron-Dugré, Rancière et la haine de la démocratie

ԴԷՊԻ ԿԱԽԱՂԱՆ

ԹԱՓԱՌԱԿԱՆ (Գեորգ Հալաջեան)

26 Յունուար, 1927, Յաւի քուն

Ցեղա մորթոտելու համար, որ ցերեկով դանակ սրող դահիճները յուսախար պիտի ըլլան: Անոնք չկրցան և պիտի չկրնան սպաննել հայ ազգը: Հայը կը մեռնի, բայց չի թրքանար: Ապացոյց կ'ուզէք. ահա ընդհանուր սպանդի, համատարած թշուառութեան, տևական կոտորածներու և մշտնջենական սարսափի մէջ ապրող, բայց իր ազգային դիմագիծը պահող գաւառահայութիւնը:

Կ'այրեն, կ'ավերեն, կը թալանեն, կ'անուանգեն ու միշտ կը հալածեն անտէր ու անպաշտպան մնացած ժողովուրդի մը թշուառ բեկորները, բայց անոնք, խաչելութեան Գողգոթային վրայ, թէ գերեզմաններու խորը կը մնան միշտ Հայ, կ'ապրին որպէս Հայ, հոգ չէ թէ իրենց անունը փոխած ըլլան կամ՝ երևոյթները փրկելու համար մուսուլման (կրօնափոխ) դարձած ըլլան: Տարիներու ընթացքին, թուրք հարէմներու կամ որբանոցներու ապականութեանց մէջ իրենց կեանքը քարշ տուող, թուրք մշակոյթով դաստիարակուած ու որպէս թուրք օղի թուրք



մեծցած հազարաւոր որբերէն մէկը՝ եթէ պատահմամբ հանդիպի Հայու մը, ու այդ Հայը գիտնայ կրակ տալ պատրոյզին, օտար կարծուած Հայուն սրտին խորը անթեղուած ցեղին անշէջ հուրը կը բոցավառի յանկարծ, ու ան կը մոռնայ ամէն ինչ, կը յեղաշրջուի քանի մը վայրկեանի մէջ:

ԴԷՊԻ ԿԱԽԱՂԱՆ,
ԵՐԵՒԱՆ, 2025, էջ 652-653



ՄՓՅՈՒՌԻ ԱԶԳԱՅԻՆ ԶՈՐԱՇԱՐԺԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ-ի մասնակիցները. Փարիզ, 12-ը ապրիլի 2026 թ.

ԴՐՇԱԿ